



ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ-ԿԱՏԱՐՈՂՆԵՐ

Գ. ՏԻԳՐԱՆՅԱՆ

Կ. Ա. Ասպրազյան

Հ Ա Յ Դ Ե Տ Հ Ր Ա Տ



Կ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

✓  
ԳԵՎՈՐԳ ՏԻԳՐԱՆՅԱՆ

ՀՅՏ. I. 021. 2 (47. 925) (092 Առաքաղյանք)

S

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ  
ՍԱՐԱԶՅԱՆ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

A  
2029

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ

1961

78 AP  
S 57

Г. Г. ТИГРАНЯН  
**К. С. САРАДЖЯН**  
(биографический очерк)  
(на армянском языке)

Армянское государственное издательство  
(Айпетрат), Ереван, 1961

Կոնստանդին Սողոմոնի Սարաջևը (Սարաջյան) սովետական խոշորագույն դիրիժյորներից մեկն է, դասական ու սովետական երաժշտության ջերմե-  
ռանդ պրոպագանդիստը, երիտասարդ երաժիշտ-  
ների մի քանի սերնդի դաստիարակը, ինչպես նաև  
երաժշտա-հասարակական անխոնջ գործիչ: Նրա  
անվան հետ է կապված դիրիժյորական կուլտու-  
րայի զարգացման մի ամբողջ էտապ: Կինեմալով  
Գրժիմալիի, Տանեկի, Շևչիկի, Նիկիշի աշակերտը,  
Մյասկովսկու, Պրոկոֆևի, Ասաֆևի, Սպենդիար-  
յանի և ուրիշների ժամանակակիցը, զինակիցն ու  
բարեկամը, միջին ու երիտասարդ սերնդի սովե-  
տական բազմաթիվ երաժիշտների ուսուցիչն ու  
ավագ ընկերը՝ Կ. Սարաջևը իր ստեղծագործական  
գործունեությամբ ամեն կապում էր հայրենի երա-  
ժրշտական կուլտուրայի զարգացման երկու՝ նա-  
խասովետական ու սովետական շրջանները: Եվ  
իր ամբողջ կյանքի ընթացքում հսկայական ավյու-

նի, վերին աստիճանի բազմակողմանի կուլտուրայի տեր ու անձնուրաց կերպով արվեստին նվիրված այդ արվեստագետը մշտապես հանդես էր գալիս որպես դասական տրագիցիաների հավատարիմ մարտիկ ու նորի համարձակ ու համառորոնող:

Մեծ է Կոնստանդին Սարաջևի նշանակութունը ռուսական ու հայկական երաժշտական կուլտուրաների զարգացման գործում:

Կոնստանդին Սարաջևը ապրեց մի մեծ, բովանդակալից ու բեղմնավոր, ամբողջովին առաջավոր արվեստի վեհ ու ազնիվ նպատակին նվիրված կյանք: Իր քոլոր ուժերը, ընդարձակ գիտելիքները, շոայլորեն օժտված իր խառնվածքի ամբողջ քստեղծագործական հուրը նա առատաձեռն բախանեց շրջապատի մարդկանց, որով և արժանայալ հանուր հարգանքի ու սիրո:

Կ. Ս. Սարաջևը ծնվել է 1877 թ. հոկտեմբերի 8-ին (ն. տ.) Դերբենտ քաղաքում: Նրա հայրը՝ բժիշկ Սողոմոն Հովհաննեսի Սարաջյանցը<sup>1</sup>, ավարտել էր Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը (մոտավորապես 1854 թ.): Բժշկի ուսանողական տարիները զուգադիպել էին այն շրջանին, երբ այնտեղ ուսանում էին հետագայում առաջավոր գիտնականներ ու բժիշկներ դարձած

---

<sup>1</sup> Սողոմոն Սարաջյանցը հետագայում իր ազգանունը փոխում է ռուսական ձևի՝ Սարաջև:

Ի. Մ. Սեչենովը, Ս. Պ. Բոտկինը, Գ. Ա. Զախարի-  
նը: Սողոմոն Սարաջյանցը աշակերտել է այնպիսի  
ականաւոր պրոֆեսորների, յինչպիսիք են՝ Կ. Ֆ.  
Ռուլիեն, Ի. Տ. Գլերովը, Ֆ. Ի. Ինոզեմցևը: Գի-  
տությամբ համիշտակված՝ նա ուսանողական տա-  
րիներին տանը կազմակերպել էր մի քիմիական  
լաբորատորիա, ուր լինում էր և ուսանող Ի. Մ.  
Սեչենովը:

Համալսարանն ավարտելուց հետո Սողոմոն Սա-  
րաջևը վերադառնում է Կովկաս ու սկսում բժշկու-  
թյամբ զբաղվել: Վեհ մարդասիրությամբ աչքի  
ընկնող բժիշկը ձրի էր դարձանում Գերբենտի  
չքավոր բնակչությանը: Նա բարձր կուլտուրայի ու  
առաջավոր հայացքների տեր մարդ էր: Իր տանը  
նա կազմել էր գրքերի ու նոտաների, մանավանդ  
տարբեր օպերաների դաշնամուրային փոխադրում-  
ների մի գրադարան, որովհետև կինը՝ Թամարան,  
(ծնյալ Կաշկաշյան) ու ավագ դուստր Օլգան լավ  
դաշնամուր էին նվագում: Սարաջյանների տանը  
շատ կարդում ու վիճաբանում էին գիտական ու  
երաժշտական նյութերի վերաբերյալ. այնտեղ հա-  
ճախ էր երաժշտություն լսվում:

Բժիշկ Ս. Սարաջևը մեռավ 1882 թվականին,  
երբ Կոնստանդինը հինգ տարեկան էր. այնպես որ  
փոքրիկ տղային դաստիարակել սկսեցին մեծ եղ-  
բայրներն ու քույրերը, գլխավորապես Օլգան,  
որովհետև մայրը շէր կարող բավականաչափ ու-  
շադրություն դարձնել իր ինը երեխաներին:

Բժշկի մահվանից հետո Սարաջյանների ընտանիքը փոխադրվեց Բաքու: Այդտեղ Կոնստանդինը նախ սովորեց հայկական դպրոցում, ապա՝ ռեալական ուսումնարանում՝ մինչև 11 տարնական դառնալը:

Սարաջեք շատ կանուխ երևան բերեց երաժշտական մեծ ընդունակութուն ու հետաքրքրասիրութուն: Նա յոթ տարեկան էր, երբ սկսեց ջութակի դասեր առնել ռեալական ուսումնարանի սաներ Կազմինցեից ու էստերեյսից, այնուհետև պարահանդեսային նվագախմբի ջութակահար Գրադունովից և այդ նվագախմբի դիրիժոր էստերեյսից (հայրը):

1889 թվականի աշնանը Կոնստանդին Սարաջեք կոնկուրսային քննութիւնը հաջող տալուց հետո ընդունվեց Մոսկվայի կոնսերվատորիան՝ ջութակի դասատու Վ. Զ. Սալինի (Վենյամինով) դասարանը: Սալինի մոտ նա սովորեց մինչև 6-րդ դասարանը<sup>1</sup>, որից հետո փոխադրվեց հայտնի մանկավարժ, ջութակահար Ի. Վ. Գրժիմալիի դասարանը: Կ. Ս. Սարաջեք անմամբ լը սովորեց Սաֆոնովի դասարանում, իսկ երաժշտական-տեսական առարկաները այնպիսի ականավոր երաժիշտներից, ինչպես Ն. Գ. Կաշկինը, Գ. է. Կոնյուսը, Մ. Մ. Իպոլիտով-Իվանովը և վերջապես Ս. Ի. Տանեկը (կոնտրապունկտի հատուկ դասարան):

<sup>1</sup> Այն ժամանակ կոնսերվատորիայի առաջին վեց դասարանները համարվում էին կրտսեր՝ նախապատրաստական:

Կոնստանդին Սարաջևի անձնավորության ձևավորման վրա հատկապես մեծ ազդեցություն ունեցավ Ս. Ի. Տանեկի հետ շփուկը, ըստ որում ոչ միայն հատուկ տեսական պարապմունքների, այլև ուսանողական նվագախմբի ու երգչախմբի փորձերի ժամանակ:

«Երբ 1889 թվականի աշնանը ես ընդունվեցի Մոսկվայի կոնսերվատորիան,— գրում է Կ. Սարաջևը իր հուշերում,— Տանեկն արդեն դիրեկտոր էր: Սակայն առաջին իսկ օրերից տեսնելով Սերգեյ Իվանովիչի լուրջ, ազնիվ, անկեղծ դեմքը, նույնիսկ դեռ ամենևին չճանաչելով նրան, զգացի, որ նա մի բացառիկ անձնավորություն է և համենայն դեպս առաջին դեմքը կոնսերվատորիայում... Այն ժամանակ, երբ դասատուներից ոմանք պարապմունքի էին գնում ներվային դեմքով, զղայնացած արտահայտությամբ, ոմանք էլ հոգնած կամ տրտում տեսքով, Տանեկը միշտ քայլում էր առույգ, կարծես ամբողջ էությունից խելք ու թարմություն էր ճառագայթում: Նրա դեմքն ու աչքերը, որոնք արտացոլում էին մտքի անընդհատ ու աշխույժ աշխատանք, ասում էին, որ նա շոտպում է դասարան ոչ թե պարտականությունից դրդված, այլ նրան այդտեղ մղողը իր աշխատանքով անկեղծորեն հափշտակվելն ու աշակերտների հետ շփուկը ծարավն են»<sup>1</sup>: Այնուհետև Կ. Սարա-

<sup>1</sup> Կ. Սարաջև, Սերգեյ Իվանովիչ Տանեկ. Հուշերի թերթիկներ, «Մուզիկա» հանդեսի 1915 թ. № 233, նոյեմբերի 21, էջ 503—504:

ջևը հիշում է Ս. Ի. Տանեկի պարապմունքները  
երգչախմբի ու օրկեստրի դասարաններում:

«Սերգեյ Իվանովիչի աշխատանքի հստակու-  
թյունն ու լրջությունը աչքի էր ընկնում մանա-  
վանդ երբ դա համեմատում էինք Տանեկի հաջորդ-  
ների կողմից օրկեստրի ու երգչախմբի դասարան-  
ները վարելու հետ: Այս վերջինները միշտ հետա-  
մտում էին մի նպատակի՝ դասարանում անդիր  
սերտել տալու ինչ-որ կանխորոշված համերգի կամ  
ներկաշացման ծրագիրը: Իսկ հետագա ղեկավար-  
ներից մեկն էլ բացահայտ լիտիովթյամբ դասա-  
րանում աշակերտների գլուխն էր մտցնում հերթա-  
կան սիմֆոնիկ հավաքույթի ծրագիրը, որովհետև  
ո՛չ կարող էր դիրիժորություն անել, ո՛չ էլ ինք-  
նուրույն կերպով պարտիտուրան սովորեցնել:  
Ամենևին այդպես չէր Տանեկի օրոք. օրկեստրի ու  
երգչախմբի հետ պարապելիս սա հետևում էր  
մի հիմնական սկզբունքի՝ օրկեստրի ու երգչա-  
խմբի ուսանողների զանգվածին դաստիարակել,  
զարգացնել՝ ծանոթացնելով նրան դասական գրա-  
կանության նմուշներին, այդ թվում Պալեստրին-  
նայի, Բախի, Հենդելի, Հայդնի, Մոցարտի, Բեթհո-  
վենի կապիտալ, հազվադեպ կատարվող ստեղ-  
ծագործություններին: Այդ պարապմունքները, ո-  
րոնք ամենևին «դիրիժորի համար փորձեր» չէին,  
միշտ ուղեկցվում էին սեղմ, բայց ոչ երբեք տա-  
փակ տեխնիկական-տեսական և ընդհանուր-էս-

թետիկական ու պատմա-կենսագրական բնութի  
բացատրություններով»<sup>1</sup>:

Կ. Ս. Սարաջևը հետադայում միշտ ընդգծում էր,  
որ հատկապես Ս. Ի. Տանեկն էր ներարկել իրեն  
արվեստի հասարակական, մեծապես էթիկական  
ու դաստիարակչական նշանակության ըմբռնումը,  
դասական երաժշտության ու ժողովրդական ստեղ-  
ծագործության առջև խոնարհվելը և վերջապես  
դիլետանտիզմը շահնդուրժելը, սեփական աշխա-  
տանքի նկատմամբ խստապահանջ լինելը:

Մինչև իր կյանքի ամենավերջին օրերը Կ. Սա-  
րաջևը խոնարհվում էր Ս. Ի. Տանեկի առջև որպես  
մարդու ու երաժշտի, հաճախ ու սիրով նվազում  
էր նրա գործերը:

Կ. Սարաջևի արխիվում պահպանվող մի շարք  
նյութեր վկայում են, որ կոնսերվատորիան ավար-  
տելուց հետո էլ նա շարունակում էր շփվել Տա-  
նեկի հետ: Իսկ Ե. Կոպոսովա-Գերժանովսկայայի  
հուշերից փմանում ենք, որ «նրան (Սարաջևին,  
Գ. Տ.) շատ էր սիրում ու գնահատում Ս. Ի. Տա-  
նեկը, որին հաճախ էր այցելում և որի տանը  
բազմիցս նվագում էր Բեթհովենի ու Չայկովսկու  
բոլոր կվարտետներն ու տրիոները»<sup>2</sup>:

Կոնսերվատորիայում ուսանելու տարիներին

<sup>1</sup> Կ. Սարաջև, Սեզեյ Իվանովիչ Տանեկ, Հուշերի թերթիկ-  
ներ, «Մուրիկա» հանդեսի 1915 թ. № 223, նոյեմբերի 21,  
էջ 504:

<sup>2</sup> Ե. Կոպոսովա-Գերժանովսկայա, Կ. Ս. Սարաջև, կենսա-  
գրություն (ձեռագիր):

ձևավորվեցին երիտասարդ երաժշտի աշխարհա-  
յացքն ու գեղարվեստական ճաշակը, նա ձեռք բե-  
րեց պրոֆեսիոնալ հաստատուն ու բազմակողմա-  
նի գիտելիքներ: Մեծապես ընդլայնվեց նրա ընդ-  
հանուր ու երաժշտական տեսադաշտը:

Կ. Սարաջևը ուսանողական տարիներից սկսեց  
կազմել նոտաների ու գրքերի կոլեկցիաներ: Նո-  
տաների սերը հարատևեց նրա ամբողջ կյանքում:  
Դրա հետևանքով նա կարողացավ հավաքել նո-  
տաների մի հազվագյուտ գրադարան, որը սլարու-  
նակում էր ոչ միայն պարտիտուրաներ ու կլավիր-  
ներ, այլև սիմֆոնիկ ու կամերային երկերի նվա-  
գախմբային պարտիաների լրիվ կոմպլեկտներ:

Այդ շրջանում Կ. Սարաջևը շատ էր կարգում,  
ժանոթանում էր դասական ու ժամանակակից  
երաժշտական գրականությանը, մեծ ուշադրություն  
դարձնում կամերա-գործիքային անսամբլներին:  
Ի. Վ. Գրժիմալիի կվարտետային դասարանում ու-  
սանելու շրջանում (որտեղ նա ջութակ կամ ալտ էր  
նվագում), կամերային մեծաքանակ գրականու-  
թյուն էր նվագում Մոցարտի, Հայդնի, Բեթհովենի,  
Շուբերտի, Բորոդինի, Չայկովսկու և ուրիշների  
հասարչա բոլոր կվարտետները, ինչպես նաև մի  
շարք տրիոներ ու կվինտետներ: Իմանալով, թե  
Սարաջևը կամերային նվագի ինչպիսի կրքոտ սի-  
րահար էր, հաճախ էին նրան հրավիրում այս կամ  
այն տունը կվարտետներին մասնակցելու համար:

Կոնստանտնոպոլիս Սարաջևը մշտապես և մեծ հափըշ-

տակութեամբ նվազում էր նաև ուսանողական սիմ-  
ֆոնիկ նվագախմբում (որպես առաջին ջութակնե-  
րի կոնցերտամեյստեր), ինչպես նաև երգում էր ու-  
սանողական երգչախմբում: Այդ տարիներին նա  
առանձնապես սիրեց հինավուրց վարպետներ ժոս-  
քեն դը Պրեի, Պալեստրինայի երկերը, Բախի, Մո-  
ցարտի, Բեթհովենի ու Գլինկայի հոյակապ ստեղ-  
ծագործութունները:

Կոնսերվատորիայում իշխում էր Չայկովսկու  
պաշտամունքը, որի առջև խոնարհվում էր նաև  
Կ. Ս. Սարաջևը: Երբ նա արդեն հայտնի երաժիշտ  
էր (1938 թվականին), հիացմունքով էր վերհիշում  
իր առաջին տպավորութունները Չայկովսկու ըս-  
տեղծագործութուններից ու այդ հանճարեղ կոմ-  
պոզիտորի անձնավորութունից: Մասնավորապես  
նա պատմում էր, թե ինչպես 1891 թվականին  
Չայկովսկին այցելեց Մոսկվայի կոնսերվատորիան,  
1892 թվականին ղեկավարեց փորձերն ու համեր-  
գը, և վերջապես 1893 թվականին Մոսկվայի կոն-  
սերվատորիայի դասատուներով ուժեղացված օր-  
կեստրային դասարանը առաջին անգամ նվագեց  
Չայկովսկու Վեցերորդ սիմֆոնիան հեղինակի ներ-  
կայութեամբ՝ ըստ ձեռագրի (այդ կատարմանը ոչ  
ոքի ներս չէին թողնում, բայց Սարաջևը կարողա-  
ցել էր թաքնվել ու գաղտագողի լսել ամբողջ սիմ-  
ֆոնիան): «Ինձ ապշեցրեց Պյոտր Իլյիչի կերպարը՝  
միանգամայն զմայլելի թովչանք ու հմայք ունե-  
ցող ժպիտը և մանավանդ վճիտ աչքերի առանձնա-

կի արտահայտութիւնը»<sup>1</sup>, — գրում է Կ. Սարաջևը:

Սիմֆոնիկ համերգներում, ուր միշտ հաճախում էր Սարաջևը, հետզհետե ավելի հաճախակի էին կատարվում «Հզոր խմբակի» կոմպոզիտորների, ինչպես նաև այն ժամանակ տակավին երիտասարդ Ռախմանինովի, Գլազունովի ստեղծագործութիւնները: Կ. Սարաջևի վրա հսկայական տպավորութիւն գործեց այդ շրջանում Մոսկվայում դիրիժոր Լը Մուրեի ղեկավարութեամբ կատարված Բեռլինովի «Յանտաստիկ սիմֆոնիան»:

Այդ տարիներից արդեն Սարաջևը ոչ միայն սիրում էր, այլև քաջ գիտեր դասական երաժշտութիւնը, որը նրա ամբողջ կյանքում մնաց որպես գեղարվեստական կատարելութեան ամենաբարձր նմուշը, այն չափանիշը, որով նա մոտենում էր երաժշտական արվեստի երևույթները դնահատելուն:

Ուսանողական տարիներից Սարաջևը արդեն անհատական սերտ հարաբերութիւններ հաստատեց բազմաթիվ երիտասարդ երաժիշտների, այդ թվում Կ. Ն. Իգումնովի, Ս. Վ. Ռախմանինովի, Ա. Բ. Գոլդենվելդերի և ուրիշների հետ: «Կոնստանդին Նիկոլաևիչի (Իգումնովի, Գ. Տ.) Մոսկվայի կոնսերվատորիայում սովորելու ամբողջ ժամանակը, — վերհիշում է Կ. Սարաջևը, — լիովին համըն-

<sup>1</sup> Սարաջևի նամակը Կլինի Չայկովսկու թանգարանի գիրկատորին: 1938 թ. դեկտեմբեր: Չայկովսկու թանգարան, Կլին:

կալ կոնսերվատորիայում ուսանելու իմ տարինե-  
րին: Ես խիստ որոշակի հիշում եմ նրա այդ ժա-  
մանակի կերպարանքը՝ ընդունվելու առաջին իսկ  
օրից. շատ նիհար ու բարձրահասակ մի երիտա-  
սարդ, լայն ու բարձր ճակատով, շափազանց լու-  
կյաց, համեստ, անհամարձակ. համալսարանի  
ուսանողի երկար, համազգեստային սերթուկով<sup>1</sup>:  
Սարաջևի հուշերը հետաքրքրական տեղեկություն-  
ներ են պարունակում նաև Իգումնովի կոմպոզի-  
տորական աշխատությունների մասին: Իգումնովին  
վերաբերող հուշերի կապակցությամբ Սարաջևը  
գրում է այդ ժամանակ Մոսկվայի կոնսերվատո-  
րիայում իշխող ընդհանուր մթնոլորտի և տարբեր  
հոսանքների ու դպրոցների (Սաֆոնովի, Տանեևի,  
Պաքստի, Ջիլոտի) պայքարի մասին: Սարաջևի և  
Իգումնովի բարեկամական հարաբերությունները  
շարունակվեցին նրանց ամբողջ կյանքում: Սարա-  
ջևը այդ հիանալի դաշնակահարի մասին ասում  
էր, որ նա «բյուրեղանման մաքուր հոգու տեր մի  
հմայիչ մարդ էր»:

Իր հուշերում Սարաջևը խոսում է նաև Ռախմա-  
նինովի հետ ունեցած առաջին հանդիպումների  
մասին: «Սերգեյ Վասիլևիչ Ռախմանինովին ճա-

<sup>1</sup> Կ. Սարաջև, Հուշեր Իգումնովի մասին: Զեռագիր: Գլին-  
կայի անվան Երաժշտական կուլտուրայի կենտրոնական թան-  
գարան (Սարաջևի արխիվ): Հետազայում այդ թանգարանը  
կրճատ կանվանենք ԵԿԿԹ:

նաշում էի Մոսկվայի կոնսերվատորիան ընդունվելու իմ առաջին օրերից՝ 1889 թ. աշնանից, — գրում է նա: — Այդ ժամանակ Ռախմանինովն արդեն բուլորի կողմից համարվում էր որպես վերին աստիճանի շնորհալի դաշնակահար ու կոմպոզիտոր<sup>1</sup>: Բազմաթիվ հետաքրքրական տեղեկություններ են պարունակում Սարաջևի Հուշերը կոնսերվատորիայում Ռախմանինովի պարապմունքների, նրա տարբեր ստեղծագործությունների, մասնավորապես սիմֆոնիայի մասին, «որի համար նա մտադիր էր օգտագործել հին ռուսական եղանակներ», այդ ստեղծագործության տխուր ճակատագրի մասին և այլն: Սարաջևը անձամբ ծանոթացել է Ռախմանինովի հետ 1897 թվականին: «Այդ ժամանակ Ռախմանինովը ինքնամոփոփ ու մենակյաց կյանք էր վարում, նյութական կարիքի մեջ էր, ապրում էր իր ազգականներից մեկի տանը՝ սարավույթի խիստ անձուկ սենյակում: Նրան օգնելու նպատակով ես դաշնամուրացին նվագի մասնավոր դասեր էի ճարում նրա համար և, ի միջի այլոց, կարողացա իմ ապագա կնոջ հետ պարապելու դասերը ընձեռել նրան: Այս հանգամանքը մեզ ավելի մոտիկացրեց, և հետագայում արդեն, իմ ամուսնանալուց հետո, նա սկսեց լինել մեր տանը: Բացի դրանից, մենք բավական հաճախակի իրար հան-

---

1 Կ. Սարաջև, Հուշեր Ռախմանինովի մասին: Չեռագիր: ԵԿԿԹ: Սարաջևի արխիվ:

դիպում էինք երաժշտական մի սեղմ խմբակում: Մեր այդ խմբակը շաբաթը մի անգամ հավաքվում էր Ա. Բ. Գուլգենվելյզերի բնակարանում, որտեղ գալիս էինք երաժշտությամբ զբաղվելու նպատակով, նվագում էինք կվարտետներ, տրիոներ, ծանոթանում երաժշտական նոր գործերին: Այդ խումբակում բավական հաճախակի լինում էր Ռախմանինովը ու Կրեմմն էլ մասնակցում որպես գերազանցորեն իր ստեղծագործությունների կատարող: Առաջին անգամ այդտեղ լսեցինք մենք նրա Դաշնամուրային 2-րդ կոնցերտը, 2-րդ սյուիտան երկու դաշնամուրի համար, թալչութակի սոնատը: Այդ բոլոր ստեղծագործությունները ապշեցրին մեզ իրենց հասունությամբ ու գունագեղությամբ»:

Այդ տարիներին Սարաջևի հետ ունեցած բարեկամական հարաբերությունների մասին խոսում է Ա. Բ. Գուլգենվելյզերը իր հուշերում: «Մենք բարեկամացանք, և ջերմ, մտերմական հարաբերությունները շարունակվեցին մեր ամբողջ կյանքում, թեև վերջին տարիներին հազվադեպ էինք հանդիպում իրար, — գրում է Գուլգենվելյզերը: — Մեզ մերձեցնողը երաժշտության վառ սերն էր, երաժշտական գրականության ծանոթանալու որոնախույզ ցանկությունը: Կոստյա Սարաջևը աշխույժ, սրամիտ տղա էր, աչքի էր ընկնում նմանակերպություն անելու ընդունակությամբ: Վիրտուոզություն էր նա վերարտադրում մանավանդ պրոֆեսոր Գրոֆմալիի տիպիկ կերպարանքը... Կոնսեր-

վատորիայում ուսանելու վերջերին և ավարտելուց  
 հետո մի քանի տարի շարունակ իմ բնակարանում  
 ստեղծվեց տնային կվարտետ: Կոնստանդին Սո-  
 լոմոնովիչը նվագում էր առաջին ջութակ, երկրոր-  
 դը՝ նվագում էր Ռեյնհոլդ Մորիցեիչ Գլիերը, որ  
 նույնպես Գրոբմալիի աշակերտն էր, իսկ այտի  
 պարտիաների կատարողները փոխվում էին. սկզբ-  
 բում դա կատարում էր հիանալի ջութակահար,  
 Մեծ Թատրոնի նվագախմբի անդամ Սեմյոնովը,  
 հետո, կարճ ժամանակով, Գրիչա Պիշնովը, իսկ  
 այնուհետև, մինչև վերջը, առաջնակարգ երաժիշտ  
 Ալեքսանդր Կարլովիչ Մետները: Թավջութակի  
 պարտիան մշտապես կատարում էր Միխայիլ Եվ-  
 սեևիչ Բուկինիկը: Մենք հաճախակի էինք հավաք-  
 ւում՝ առնվազն ամսական երկու անգամ, հաճախ  
 էլ շաբաթը մի անգամ: Մենք նվագեցինք անհա-  
 մար կվարտետներ ու անսամբլներ դաշնամուրի  
 հետ: Նվագում էինք դասական գրականության  
 գործեր՝ Հայդն, Մոցարտ, Բեթհովեն, Շուբերտ,  
 Բրամս, Չայկովսկի, Բորոդին և այլն: Սառկայն  
 զգալի տեղ էինք հատկացնում թե՛ քիչ հայտնի և  
 թե՛ մանավանդ նոր գործերին: Օրինակ՝ Գլիերի  
 նոր գործերը առաջին անգամ մեր հավաքույթնե-  
 րում են նվագվել: Մեր հավաքույթները դառնում  
 էին հանրահայտ. այնտեղ երբեմն լինում էին շատ  
 երաժիշտներ: Հաճախ էր լինում Ռախմանինովը և  
 նվագում էր իր նոր գործերը: Մշտապես լինում էր  
 Միխայիլ Ակիմովիչ Սոլոնովը, որ աչքի ընկնող

ձայն շուներ, սակայն թերթից հիանալի կարգում էր նոտաները: Նա կատարում էր, օրինակ, Մուսորգսկու, այն ժամանակ տակավին սակավահայտ, գործերը, ինչպես նաև դասական ու նոր հեղինակների արևմտյան ու ռուսական մի շարք ստեղծագործություններ: Մի հավաքույթում եղավ Ջիլլոտին, ներկա եղավ ու երգեց Շալյապինը, իսկ մի հավաքույթում էլ Ռախմանինովը ինձ հետ նվագեց նոր միայն գրած Երկրորդ սյուիտը երկու դաշնամուրի համար, ինչպես նաև իր Գաշնամուրացին կոնցերտի առաջին մասը, որ առաջին կատարմանը դեռ պատրաստ չէր (համերգում կատարվել էին միայն երկրորդ ու երրորդ մասերը)»<sup>1</sup>:

1  
1929

\*\*\*

Ուսանողական տարիներից արդեն Սարաջևը խիստ հետաքրքրվում էր Հայաստանի պատմությամբ ու կուլտուրայով: Դրան նպաստում էր մանավանդ նրա շփումը Լազարյան ճեմարանի ուսանողության հետ (Կ. Սարաջևի եղբայրներից մեկը այդ ճեմարանի սան էր): Նա լինում էր Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ն. Ի. Ներսիսովի տանը, որտեղ և ծանոթացել էր բանաստեղծ Ալեքսանդր Մատուրյանի և այն ժամանակ սկսնակ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի հետ:

<sup>1</sup> Ա. Գոլդենվեյզեր. Հուշեր Կ. Ս. Սարաջևի մասին: Չեռագիր: 1959:

Սարաջևը 1895 թվականի ամառն անցկացրեց Գանձակում (այժմ Կիրովաբադ) ապրող իր քրոջ մոտ: Այդ շրջանում նա շրջեց մոտակա գյուղերում ու գրի առավ մոտ հիսուն հայկական ժողովրդական երգ:

Մոսկվայում Բնագիտություն, մարդաբանություն ու ազգագրություն սիրողների ընկերության ազգագրական բաժնին կից երաժշտական-ազգագրական հանձնաժողովում տեղի էին ունենում տարբեր ժողովուրդների երաժշտությանը նվիրված զեկուցումներ: Այդ զեկուցումներից մեկը, որ նվիրված էր Անդրկովկասի ժողովուրդների երաժշտությանը, կաբդաց կոմպոզիտոր-ազգագրագետ Ա. Ն. Կորեշչենկոն: Կոնստանդին Սարաջևը եռանդազին բողոքեց հայ ժողովրդի ինքնուրույն երաժշտություն ունենալը հերքող Կորեշչենկոյի թեզիսի դեմ: Այս կապակցությամբ նա հրապարակեց մի հոդված՝ «Երկու խոսք հայ երաժշտության մասին», որտեղ շարադրեց իր հայացքները՝ հայ երաժշտության վերաբերյալ՝ համարելով դա մեր ժողովրդի խորապես ինքնուրույն կուլտուրայի անքակտելի մի մասը<sup>1</sup>:

Այդ հոդվածում Սարաջևը ջանում է ցույց տալ հայ երաժշտության հնամենի ակունքները: Նա տե-

---

1 Տե՛ս «Братская помощь пострадавшим армянам» ժողովածուն («Եղբայրական օգնություն կոտորածներից տուժած հայերին»), Մոսկվա, 1898, էջ 519:

ղեկություններ է հաղորդում Հայաստանի հոգևոր  
երաժշտության զարգացման մասին սկսած V դա-  
րից, խոսում է շարականների, մեղեդիները գրի  
առնելու սկզբնական մեթոդների և վերջապես Կա-  
րա-Մուրղայի, Եկմալյանի, Չիլինդարյանի և այ-  
լոց «Պատարագների» մասին: Սարաջևը շեշտում  
է հայ երաժշտության մեծ դերը «առօրյա կյան-  
քում», նշում, որ նա պարունակում է «բազմաթիվ  
հետաքրքրական ու ինքնատիպ գույներ», երբեմն  
էլ հետամտում է «մերկացուցիչ-բարոյախոսական  
ու դաստիարակչական նպատակներին»:

Աշուղների ստեղծագործությունը նա համարում  
է դեմոկրատական երաժշտա-բանաստեղծական  
արվեստի ճյուղերից մեկը: Առանձնապես շեշտում  
է նա հայ ժողովրդական ու աշուղական երաժշ-  
տության ուրույնությունը, նրա տարբերությունը  
պարսկական ու արաբական երաժշտությունից:  
Հողվածագիրը արժարժում է նաև հայ ժողովրդա-  
կան ստեղծագործության նմուշների գրառումն աշ-  
խուժացնելու անհրաժեշտության հարցը: Սարաջևն  
իր հողվածին կցել է երկու հատված Մ. Եկմալյա-  
նի «Պատարագ»-ից՝ «Հայր մեր» և «Սուրբ, սուրբ»  
և իր կատարած գրառումներից մի քանիսը, որոն-  
ցից երկուսը եկեղեցական հին եղանակներ են  
(«Հայր մեր» և «Սրբասացություն»), իսկ երկուսը՝  
ժողովրդական մեղեդիներ:

Կ. Սարաջևի հողվածը թեև գիտական տեսակե-  
տից բավական խոր չէր, թեև պարունակում էր մի

շարք վիճելի ու նույնիսկ սխալ գրույթներ, սակայն ուներ այն առավելությունը, որ ուղղակի ու աներկբա կերպով դնում էր Հայաստանի երաժշտական կուլտուրայի հնության ու ազգային ուրույնության հարցը, այնպես որ հետաքրքրություն հարուցեց մեր երաժշտության պատմության ու սեսության որոշ պրոբլեմների նկատմամբ: Մանավանդ չպետք է մոռանանք, որ դա գրվել է ավելի քան վաթսուն տարի առաջ:

Հարազատ ժողովրդի երաժշտության նկատմամբ տածած հետաքրքրության վկայությունն են Սարաջևի ուսանողական տարիներին՝ գրած գործերը՝ դաշնամուրային տրիոն, ջութակի վարիացիաները, լարային կվարտետը, որոնց մեջ երիտասարդ հրաժիշտը օգտագործել է հայ երաժշտությունից վերցրած ինտոնացիաներ: Ցավոք սրտի այս գործերի ձեռագրերը կորել են առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:



Կոնստանդին Սարաջևը 1898 թվականին ավարտեց Մոսկվայի կոնսերվատորիան արձաթե մեծ մեդալով և ստացավ «ազատ արվեստագետի» կոչում: Նույն տարին էլ նա ամուսնացավ Նատալիա Նիլովնա Յիլատովայի՝ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի պրոֆեսոր մանկա-

բույժ նիւ Յյոդորովիչ Յիլատովի դասեր հետ՝  
Սերնդից-սերունդ բժշկությամբ զբաղվող, բարձր  
կուլտուրականությամբ, լայն հետաքրքրություննե-  
րով ու առաջադիմական հայացքներով աչքի ընկ-  
նող Յիլատովների ընտանիքը<sup>2</sup>, անկասկած, նույն-  
պես ազդեցություն է գործել Սարաջևի ընդհանուր  
զարգացման վրա:

Տասնչորս տարեկանից արդեն Սարաջևը ջութա-  
կի մասնավոր դասեր էր տալիս: Իսկ կոնսերվա-  
տորիան ավարտելուց հետո, 1898 թվականից նա  
նշանակվեց ջութակի հաստիքային ավագ դասա-  
տու Մոսկվայի Սինոդի ուսումնարանում: Նա միա-  
ժամանակ ինքնուրույն համերգներ էր տալիս: Նրա,  
որպես մենակատար ջութակահար, առաջ քաշվելու  
մասին կարելի է դատել թեկուզ այն բանից, որ  
նա հաջողությամբ նվագում էր Պագանինիի, Վի-  
վալդիի, Սարասատեի և այլ կոմպոզիտորների  
ջութակի խիստ դժվարին գործերը, ինչպես նաև  
այնպիսի կապիտալ ստեղծագործություն, ինչպես  
Չայկովսկու Զութակի կոնցերտը նվագախմբի հետ:

Մինչև 1900 թվականը Սարաջևը շարունակում էր  
ջութակի դասեր առնել Ի. Վ. Գրժիմալիից, իսկ  
1900 թ. ամռանը մեկնեց Պրագա՝ հայտնի ջութա-

1 Կ. Սարաջևը այդ ամուսնությունից ունեցավ երկու զա-  
վակ՝ Կոնստանդինն ու Քամարան:

2 Նատալիա Յիլատովայի յոթ եղբայրներից հինգը բժիշկ  
էին: Սովետական անվանի ակնաբույժ ակադեմիկոս Վ. Պ.  
Յիլատովը նիւ Յյոդորովիչի եղբոր տղան էր:

կահար պրոֆեսոր 0. Շեշիկի մոտ կատարելագործվելու համար:

1900 թվականին Կ. Սարաջևը ընդունեց ակադեմիայի կոմպոզիտոր ու դիրիժյոր Մ. Մ. Իպոլիտով-Իվանովի առաջարկը՝ աշխատել Մոսկվայի մասնավոր (նախկին Մամոնտովյան) օպերայում որպես ջութակների մենակատար-կոնցերտմեյստեր<sup>1</sup>:

Կ. Սարաջևի նվիրական ու վաղեմի երազը դիրիժյոր դառնալն էր: Մ. Իպոլիտով-Իվանովը կարողացավ նկատել երիտասարդ երաժշտի դիրիժյորական ակնառու ընդունակությունը և ամեն կերպ սատարեց նրան իրականացնելու այդ երազը: Իպոլիտով-Իվանովի հանձնարարականով Սարաջևը 1901 թվականին սկսեց աշխատել «Բեմական արվեստը սիրողների խմբակում» որպես սիմֆոնիկ նվագախմբի ու երգչախմբի դիրիժյոր: Շաքաթը երկու-երեք անգամ պարապում էր երգչախմբի ու նվագախմբի հետ, որոնք կազմված էին գերազանցորեն ուսանող-ուսանողուհիներից, միջնակարգ դպրոցների դասատուներից: Սարաջևի դիրիժյորությամբ այդտեղ կատարվեցին Չայկովսկու Առաջին սյուիտան, Գրիգի «Պեր Գյունտը», Ա. Ռուբինշտեյնի «Բաբելոնյան աշտարակաշինություն» խումբերգերը և այլ ստեղծագործություններ:

1902 թվականի գարնանը Մոսկվայի կոնսերվա-

<sup>1</sup> Մ. Իպոլիտով-Իվանովը միաժամանակ Մոսկվայի մասնավոր օպերայի գլխավոր դիրիժյորն էր:

տորիայի դիրեկտոր Վ. Ի. Սաֆոնովը առաջարկեց Սարաջևին վարել ջութակի մասնագիտական դասարան: Ուսումնական տարին սկսվելուց առաջ Սարաջևը դարձյալ մեկնեց Պրագա, Շեչիկի մոտ՝ ուսումնասիրելու ջութակահարություն ավանդելու և ջութակի ռեպերտուարի մեթոդիկան: Սակայն ո՛չ այդ և ո՛չ էլ մոտակա տարիներին նա հնարավորություն չունեցավ աշխատելու կոնսերվատորիայում:

Շարունակելով հափշտակվել կամերային հյաժըշտությամբ՝ Սարաջևը կազմակերպեց մի լարային կվարտետ, ուր, բացի իրենից (նա կատարում էր առաջին ջութակի պարտիան), մտան Ե. և Ա. Բելոուսով եղբայրները (թավջութակ ու երկրորդ ջութակ) և Կարամզինսկին (ալտ): Հետագայում ալտի կատարումը հանձնվեց Ա. Մետնեբին: Պարապմունքների համար ավելի ժամանակ ու հնարավորություն ունենալու նպատակով կվարտետի անդամները նույնիսկ փոխադրվեցին մի տեղ՝ միասին բնակվելու: Նրանք աշխատում էին վերին ատտիճանի համառ ու ինտենսիվ<sup>1</sup>, պատրաստելով

<sup>1</sup> «Սարաջևը գտավ դահլիճ ունեցող մի խոշոր բնակարան, և մենք սկսեցինք նախապատրաստվել՝ ամեն օր պարապելով 7 ժամ: Վաղ առավոտից ամեն մեկս զբաղվում էինք առանձին 3 ժամ, ապա 12-ից մինչև 2-ը ձեռնամուխ էինք լինում անսամբլի վրա միասին աշխատելուն. այնուհետև հանգստանում էինք և 7-ից մինչև 9-ը նորից փորձեր անում»: Ե. Կոպոտովա-Գերժանովսկայա. Կ. Ս. Սարաջև. Հուշեր, էջ 5 (ձեռագիր):

մի ընդարձակ ծրագիր ութ համերգի համար, որի մեջ ի դեպ մտնում էր հատկապես այդ անսամբլի համար գրված Ս. Տանեևի կվարտետը երկու թավջութակով:

Կ. Սարաջևը եղել է նաև «Բրամսի խմբակի» (ուր մտնում էին նաև Կ. Իգումնովը, Յու. Պերվենցը և ուրիշներ) հիմնադիրներից ու մասնակիցներից մեկը: Այդ խմբակը Բրամսի ստեղծագործություններից կազմված համերգներ էր տալիս Սինոդի ուսումնարանի դահլիճում:

«Արդեն իննսունական թվականների սկզբից ես ու Կոնստանդին Նիկոլաևիչը (Իգումնովը, Գ. Տ.), — գրում է Սարաջևը, — մտերմացանք շնորհիվ մեր ցանկությունների համընկնելուն՝ մասսայականացնելու Բրամսի ստեղծագործությունը, մի կոմպոզիտոր, որին բոլորովին հանիրավի անտեսում էին Մոսկվայի երաժիշտները կոնսերվատորիայի գլխավորութեամբ: Եվ մենք հանգեցինք «Բրամսի խմբակ» ստեղծելու հաստատ որոշմանը: Շարաթը մի անգամ հավաքվելով՝ մենք նվագում էինք Բրամսի ստեղծագործությունները՝ սոնատներ, արիոններ, կվարտետներ ու սեքստետներ: Խմբակը բաղմամբիվ լավ գործիքահարների ներգրավեց ակտիվորեն մասնակցելու դրան, որը և հնարավորություն տվեց հրապարակային ելույթներ ունենալու»<sup>1</sup>:

1 Կ. Սարաջև, Հուշեր Իգումնովի մասին (ձեռագիր): ԵԿԿԹ, Սարաջևի արխիվ:

Սարաջևը հաճախակի մասնակցում էր նաև հայ ուսանողների հայրենակցական միության կազմակերպած երաժշտական երեկույթներին: Այդ երեկույթներից մեկում, որ տեղի ունեցավ Սյունազարդ դահլիճում (նախկին Ազնվականների ակումբում) կատարվեցին հայ ժողովրդական «Հո՛՛յ, Նազան», «Լորիկ» և այլ երգերի նրա խմբերգային մշակումները:



Որոշելով վերջնականապես նվիրվել դիրիժյորական արվեստին՝ Կ. Սարաջևը 1904 թվականին մեկնեց Վայացիդ՝ կատարելագործվելու համաշխարհային հռչակ վայելող խոշորագույն դիրիժյոր Արթուր Նիկիշի մոտ: Սարաջևը երկու տարի եղավ Նիկիշի աշակերտը: Այդ տարիներին Նիկիշի աշակերտն էին նաև հետագայում անվանի դիրիժյորներ դարձած Կոուտսը, Կապլապեերը, Վարոնը, Մեսրցելը, Հեսինը, Յու. Պոմբերանցը:

Ամեն շաբաթ, հինգշաբթի օրերը աշակերտական նվագախումբը հավաքվում էր, և Նիկիշը իր սաներին հանձնարարում էր հերթով դեկավարել դերազանցորեն դասական հեղինակների նախորդ պատրաստած սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարումը:

կստաբարո, կտրուկ, իր աշակերտներին միշտ մեծ պահանջներ ներկայացնող Նիկիշը ըստ արժանվույն գնահատեց Սարաջևի դիրիժյորական ակնբախ ընդունակությունը, վառ երաժշտականությունն ու իսկական արտիստական ավյունը, նշան էլ կատարելով անվանում էր Schwarzman (Սև մարդ): Սարաջևի մաղերը սեփ-սև էին, նա թողնում էր սրածայր (էսպանյուլ) մորուք ու բեղ և արտաբուստ նույնիսկ ինչ-որ բանով նման էր իր ուսուցչին:

Սարաջևը Նիկիշի ղեկավարությամբ մշակեց դիրիժյորական հիանալի տեխնիկա՝ այն արտահայտելի, որոշակի ու պլաստիկ ժեստը, նվագախումբը իր գեղարվեստական նպատակներին հասցնելու այն հմտությունը, որոնք կատարելագործվելով ու հարստանալով՝ հետագայում դարձան նրա սեփական կատարողական ոճի հիմքը: Նիկիշի դասարանում Սարաջևը ուսումնասիրեց մի հսկայական ուսուցիչություն, ղեկավարեց դասական սիմֆոնիկ դրամատիկական մեծաքանակ գործերի կատարումը, այդ թվում Մոցարտի, Բեթհովենի երկերը, Շումանի «Մանֆրեդը» և այլն:

Երիտասարդ դիրիժյորը հսկայական օգուտ էր ստանում նաև կանոնավորապես ներկա լինելով այն փորձերին, որ վարում էր Նիկիշը Գևանդ-հաուզի շենքում<sup>1</sup>: Նա մեկնում էր Գրեզդին, Հալե,

<sup>1</sup> «1905 և 1906 թվականներին ես առիթ ունեցա աշխատելու Լայպցիգում, պրոֆ. Նիկիշի դասարանում: Երկու սեզոնի

որտեղ նույնպես լսում էր սիմֆոնիկ համերգներ, լինում էր օպերային թատրոններում: Սարաջևի վրա առանձնապես ուժեղ տպավորություն գործեց Վինննայի երաժշտական կյանքը, որտեղ ի թիվս բազմաթիվ այլ ստեղծագործությունների, նա լսեց Վազների «Տրիստան և Իզոլդա» օպերան Գուստավ Մալերի ղեկավարությամբ և Բեթհովենի սիմֆոնիաների մի ցիկլ Ֆելիքս Վալչնգարթների ղեկավարությամբ:

Սարաջևը հիանալի յուրացրեց Նիկիշի դպրոցի գեղարվեստական սկզբունքներն ու տեխնիկական ձևերը: Դրա վկայությունն է նրա հետագա ամբողջ դիրիժյորական ինքնուրույն գործունեությունը:

Ն. Յա. Մյասկովսկին Սարաջևին անվանում էր «Մեր Նիկիշը»<sup>1</sup>: Ս. Ֆելչնբերգը գրում էր. «Լինելով նշանավոր դիրիժյոր Արթուր Նիկիշի աշակերտը՝

---

ընթացում Նիկիշի դասարանում ներկա լինելուց ու դիրիժյորություն անելուց բացի, հնարավորություն ունեի նաև տեսնելու Գևանդհաուզի համերգների բոլոր նախնական փորձերը, որ սեղոնում 26 անգամ տեղի էին ունենում Արթուր Նիկիշի ղեկավարությամբ: Այդպիսի հանճարեղ դիրիժյորի աշխատանքը զննելու արժեքը, բացի զուտ երաժշտական-կատարողականից, նաև հետևյալն էր: Ինձ համար միանգամայն պարզ ու ակնբեր դարձավ դիրիժյորի ձևերի ամեն մի ժեստի, մարմնի շարժման ու կեցվածքի իմաստը, նշանակությունը»<sup>2</sup>: Մոսկվայի կոնսերվատորիայի դիրիժյորական բաժանմունքում Կ. Սարաջևի արած ղեկուցումից (30-ական թվականների սկզբին):

<sup>1</sup> Ն. Մյասկովսկու նամակը Վ. Գերժանովսկուն՝ 1912 թ. ապրիլի 23 թվակիր: ԵկկԹ, ֆ—3 № 252:

Կոնստանդին Սոլոմոնովիչը շատ բան էր ընկալել նրա դեկավարելու հպարտ, զուսպ մաներից»<sup>1</sup>: Իսկ Բ. է. Խաչինը վերհիշելով իր պարասյունները Կ. Սարաջևի մոտ՝ շեշտում է. «Հիմա արդեն ես հասկանում եմ, որ դա Նիկիշի դպրոցն էր»<sup>2</sup>:

1908 թվականին Արթուր Նիկիշը հրավիրվեց Մոսկվա մի շաբթ համերգներ տալու: Ուշանալու պատճառով նա հանձնարարեց Սարաջևին նվազախմբի հետ նախօրոք սերտել ու նախապատրաստել իր տալիք համերգների ծրագիրը: Ինչպես Զ. Բ. Սարաջևան է պատմում, Նիկիշը Մոսկվա գալով՝ շատ գոհ մնաց Սարաջևի աշխատանքից. նվագախմբին տված իր ցուցումների մեծ մասը համընկնում էր իր աշակերտի մինչ այդ տված ցուցումներին: Դարձյալ Զ. Բ. Սարաջևայի վկայությամբ՝ Նիկիշը հաջող ավարտած համերգներից հետո նվիրեց Կ. Սարաջևին իր լուսանկարը հետևյալ մակագրությամբ. «Zur freundlichen Erinnerung an unserem gemeinsamen slacht und unserem gemeinsamen sieg Arthur Nikisch»<sup>4</sup> (Բարեկամա-

1 Ս. Ֆեյնբերգ, Իմ ստեղծագործական հանդիպումները Կ. Ս. Սարաջևի հետ: Չեռագիր, 1959:

2 Բ. է. Խաչին, Հուշեր ուսուցչիս մասին: Չեռագիր, 1959:

3 Զ. Բ. Սարաջևայի հետ սույն տողերի հեղինակի ունեցած զրույցից: Նիկիշի մակագրությամբ կրող վերահիշյալ լուսանկարը ցավոք սրտի կորել է առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ:

կան հիշատակ մեր համատեղ մարտի ու համատեղ հաղթանակի առթիվ: Արթուր Նիկիշ):



Կոնստանդին Սարաջևը 1906 թվականին վերադարձավ Մոսկվա և ոգևորությամբ նվիրվեց ստեղծագործական, կատարողական և երաժշտահասարակական բազմակողմանի գործունեության: Ամենից առաջ պետք է առանձնապես շեշտենք Սարաջևի ակտիվ աշխատանքը առաջավոր երաժիշտների կազմակերպած և դեմոկրատական ուղղությամբ տոգորված ուսումնական ու լուսավորական հաստատությունում՝ ժողովրդական կոնսերվատորիայում<sup>1</sup>: «Մենուդ առնող մասսայական երաժշտական շարժման 1905 թվականի ունույնցիայից առաջացած առկայծումները, — գրում է Գ. Բերնանդտը, — թերևս ամենից ավելի ցայտուն կերպով կապվեցին ժողովրդական կոնսերվատորիա կազմակերպելու հետ»<sup>2</sup>:

Ժողովրդական կոնսերվատորիան բավական մեծ դեր կատարեց հոծ մասսաներում երաժշտական

<sup>1</sup> Ժողովրդական կոնսերվատորիան հիմնվեց 1906 թ. մարտի 4-ին: Նրա կազմակերպիչների ու անդամների թվում էին Արազիևը (Արակիշվիլին), Բրյուսովան, Գուրենովեյզերը, Գրեշանինովը, Դեյշա-Միոնիցկայան, Իգումնովը, Կաստալսկին, Կաշկինը, Լինյովան, Ա. Մետները, Սարաջևը, Տանեևը, Էնգելը, Ցավորսկին և ուրիշներ:

<sup>2</sup> Գ. Բերնանդտ, Ս. Ի. Տանեև, Մ.—Լ. 1950, էջ 194:

գիտելիքներ տարածելու գործում: Այդտեղ ուսուցումը ձրի էր ու հասարակության շքավոր խավերին մատչելի, սովորողները գերազանցորեն բանվորներ, ուսանողներ, արհեստավորներ ու հասարակ պաշտոնյաներ էին: Ժողովրդական կոնսերվատորիան կազմակերպում էր հանրամատչելի համերգներ, երաժշտական տարբեր նյութերի մասին դասախոսություններ: Նրա ուսանողները երաժշտական գրագիտություն էին սովորում, ծանոթանում երաժշտության պատմությանը, ժողովրդական երգերին, երգում էին երգչախմբում: Սմենաընդունակներին հնարավորություն էր տրվում սովորել երգել կամ նվագել որևէ գործիքով: Կ. Սարաջևը ջութակի և երաժշտական գրագիտության դասեր էր տալիս Զամոսկվարեցիի շրջանում:

1904 թվականին վախճանվեց Սարաջևի կինը՝ Նատալիա Նիլովնան, և երեք տարի անց նա նորից ամուսնացավ հանգուցյալի հորեղբորաղջկա (Ն. Ֆ. Ֆիլատովի եղբոր դստեր)՝ Զոյա Բորիսովնա Ֆիլատովայի հետ: Խիստ զարգացած, շափազանց կենսասեր ու եռանդուն Զոյա Բորիսովնան մինչև Սարաջևի կյանքի վերջին օրերը եղավ նրա ուրախության ու վշտի մասնակից, հավատարիմ ընկերուհին<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Կ. Սարաջևը երկրորդ ամուսնությունից ունեցավ մի տղա՝ Նիլը, որ գիտական աշխատակից է ֆիզիոլոգիայի գծով, և երկու դուստր՝ Կիրան ու Ալան, որոնք մենակատար տավիղահարներ են ՍՍՌՄ Մեծ թատրոնի նվագախմբում:

1907 թվականին Կոնստանդին Սարաջևը ընտրու-  
վեց Մոսկվայի «Նվազախմբային երաժիշտների  
փոխօգնութեան ընկերութեան» նախագահ: Այդ հա-  
սարակական պաշտոնը վարելու ընթացքում նա  
համառ պայքար էր մղում նվազախմբերի երա-  
ժիշտների աշխատավարձը բարձրացնելու համար,  
ինչպես նաև կապալառուների կողմից նրանց շա-  
հագործելու դեմ: Նա համարձակ կերպով պաշտպա-  
նում էր երաժշտական «դեմոսի» իրավունքները.  
օրինակ՝ երբ Պետերբուրգի նախկին Մարիինյան  
թատրոնի դիրեկցիան անտեսելով ուս երաժիշտ-  
ների շահերն ու իրավունքները՝ մտադրվեց ազատ  
պաշտոնների համար առանց կոնկուրսի հրավիրել  
միայն արտասահմանյան երաժիշտներ, Կ. Սարա-  
ջևը, որպես «Նվազախմբային երաժիշտների փոխ-  
օգնութեան ընկերութեան» նախագահ, թերթերում  
մի բաց նամակ հրատարակեց արքունի մինիստրի  
հասցեին՝ կոնկուրսների կանոնադրությունը խախ-  
տելու առթիվ, ու կարողացավ շեղյալ համարել տալ  
այդ որոշումը: Հետագայում, երբ Ա. Գլազունովը  
Մարիինյան թատրոնի դիրեկտորի պաշտոնի հա-  
մար հանձնարարեց Սարաջևին ընդունել, կայսե-  
րական թատրոնների դիրեկտոր Տելյակովսկին հի-  
շելով «բաց նամակի» պատմությունը՝ հակա-  
ռակվեց դրան:


Հետզհետե ավելի հոուն էր դառնում նաև Սարա-  
ջևի կատարողական գործունեությունը: Նա հան-  
դես էր գալիս անձնական համերգներով, մասնակ-

ցում էր կամերային-գործիքային անսամբլներին: Նրա համերգները մշտապես մեծ հետաքրքրություն էին առաջացնում, հատկապես խելացիորեն կազմված ծրագրերի շնորհիվ, որոնց մեջ մտնում էին կլասիկների լավագույն գործերը, ինչպես նաև ամենաակնառու նորույթները: Օրինակ՝ նրա համերգներից մեկում, որ տեղի ունեցավ Մոսկվայում 1908 թ. հունվարի 17-ին, առաջին անգամ կատարվեց Ս. Տանեևի Տրիոն (opus 22): «Երեք կատարողներն էլ, այդ թվում Տրիոյի հեղինակը դաշնամուրի պարտիայում, և պ. պ. Սարաջևն ու Բուկինիկը ջութակի ու թավջութակի պարտիաներում, արժանի են մեծ գովեստի՝ ոգեշունչ նրբագեղության ու սքանչելի անսամբլի համար, — գրել է քննադատ Ն. Կաշկինը: — Նոր ստեղծագործությունը հսկայական ու արժանի հաջողություն ունեցավ դահլիճում հավաքված բազմամարդ հասարակության մեջ»<sup>1</sup>:


Կ. Սարաջևը երաժշտա-պրոպագանդիստական լայն ու խիստ բեղմնավոր գործունեություն ծավալեց որպես դիրիժյոր, իսկ մի ժամանակ էլ՝ որպես ամառային հանրամատչելի սիմֆոնիկ համերգների գլխավոր դիրիժյոր Սոկոլնիկիում (1908, 1910, 1911 թվականներին և որպես Սերգեև-Ալեք-

---

<sup>1</sup> Ն. Կաշկին. Կ. Սարաջևի համերգը և Ս. Ի. Տանեևի նոր տրիոն: «Ռուսկոյե սլովո» օրաթերթ, 1908, № 16, հունվարի 19:



Աբգոս Գրիգոր



Կ. Ս. Սարգսյան

սեւեյան ժողովրդական տան գլխավոր գիրիժուր  
(1911, 1912 թթ.):

Այդ մանավանդ Սոկոլնիկիում տրվող, համերգ-  
ները մեծ ժողովրդականութեան էին վայելում:  
Սոկոլնիկիում տեղի ունեցող համերգների կապակ-  
ցութեամբ Սարաջևը մոտիկացավ երաժշտական  
անվանի քննադատ վ.Վ. Դերժանովսկու հետ, որ  
հրավիրված էր այդտեղ սրայես ծրագրերների կոն-  
սուլտանտ ու թերթերի ինֆորմատոր:

Կ. Սարաջևի վարած համերգների հաջողութե-  
նը հետևանք էր թե՛ գիրիժուրի գեղարվեստական  
ղեմքի վառ արտիստականութեան ու ինքնատիպու-  
թեան և թե՛ վերին աստիճանի հետաքրքրական ու  
բովանդակալից ծրագրերի: Ասլշեցուցիչ էին Սա-  
րաջևի արտասովոր հիշողութունն ու վիթխարի  
աշխատունակութունը: Համեմատաբար կարճ ժա-  
մանակամիջոցում նրա ղեկավարութեամբ կատար-  
վեցին թե՛ դասական, թե՛ ժամանակակից կոմպո-  
զիտորների բազմաթիվ սիմֆոնիկ ստեղծագործու-  
թյուններ:

Վերհիշելով Սոկոլնիկիում տրված համերգները՝  
Սարաջևը գրում էր. «Այդ համերգներում կատար-  
վեցին թե՛ ռուս, թե՛ արտասահմանյան երիտա-  
սարդ կոմպոզիտորների բազմաթիվ նոր ստեղծա-  
գործություններ, մեծ մասամբ ըստ ձեռագրերի,  
ինչպես օրինակ՝ Մյասկովսկու, Պրոկոֆևի, Դեբյու-  
սիի, Ստրավինսկու, Ռավելի և շատ ուրիշների  
գործեր: Այդ համերգներում առաջին անգամ հան-

դես եկան շատ սկսնակ երիտասարդ երաժիշտներ՝ դաշնակահարներ Օռլովը, Պրոկոֆևը, Բորովսկին, Ֆեյնբերգը, երգչուհի Նինա Կոշիցը և շատ ուրիշներ: Մոսկվայում առաջին անգամ Սոկոլնիկիում իմ ղեկավարութեամբ կատարվեց Բեթհովենի բոլոր սիմֆոնիաների ցիկլը»<sup>1</sup>:

Համերգների ընդարձակ ծրագիրը պարունակում էր բազմաթիվ հետաքրքիր գործեր, այդ թվում և սիմֆոնիկ ստեղծագործություններ (սիմֆոնիաներ, ուվերտյուրներ, սյուիտներ, կոնցերտներ, օպերային հատվածներ, վոկալ երկեր օրկեստրի նվագակցությամբ (Բախից, Հենդելից, Մոցարտից, Բեթհովենից, Գրիգից, Սեն-Սանսից, Լիստից («Ֆաուստ» սիմֆոնիան, «Պրելյուդներ»), դաշնամուրային երկու կոնցերտները օրկեստրի նվագակցությամբ), Սվենդսենից, Դեբյուսից, Ռոժե Դյուկասից, Դյուկայից, Ֆլ. Շմիդտից, Վագներից (հատվածներ «Տանհայզեր»-ից, «Նիբելունգների մատանի»-ից, «Տրիստան և Իզոլդա»-ից, «Նյուրբնբերգցի մայտերգերը»-ից), Շոպենից, Ռ. Շտրաուսից, Գլինկայից, Բորոգինից, Ռիմսկի-Կորսակովից, Մուսորգսկուց, Չայկովսկուց (ներառյալ Հինգերորդ և Վեցերորդ սիմֆոնիաները, «1812 թ. հանդիսավոր ուվերտյուրը»), Սկրյաբինից (ներառյալ «Աստվածային պոեմը»), Գլազու-

<sup>1</sup> Կ. Սարաչև, Ինքնակենսագրություն, 1952 թ. ղեկամբերի 18-ի ձեռագիր, պահվում է Զ. Բ. Սարաչևայի մոտ:

նովից (Ութերորդ սիմֆոնիան), Լյապունովից, Արենսկուց, Մյասկովսկուց, Ստրավինսկուց, Պրոկոֆևից և այլն:

Իր ստեղծագործական որոնումների մեջ խիզախ ու համարձակ, միաժամանակ և խորամիտ երաժիշտ Սարաջևը սիրում էր կատարել մանավանդ մինչ այդ էստրադայից շնչած գործեր, այնպես որ բառի բուն նշանակությամբ «առաջին հայտնադործող» էր երաժշտության մեջ: Նա կարողանում էր «որոնել-գտնել» և ըստ արժանվույն զնահատել երիտասարդ կոմպոզիտորների նոր, տակավին անհայտ ու մինչ այդ ամենևին չկատարված պարտիտուրաներ, ըստ որում ոչ միայն զնահատել, այլև համերգային էստրադա հանել: Արդեն այդ տարիներին նա բազմաթիվ հետաքրքրական ու նշանակալի երկերի առաջին կատարողն էր: Օրինակ՝ Սոկոլնիկիի համերգներում Սարաջևի դեկավարություն «Լուսլուս» սիմֆոնիկ պոեմը, Ս. Պրոկոֆևի «Աշնանայինը» և «Երազները», իսկ Ժողո-

1 «...Սարաջևը ամառային սեզոններին ղեկավարում էր և՛ Սոկոլնիկիի սիմֆոնիկ համերգները, և՛ հանությունը նվագում նոր գործեր, — զրկ է Ս. Պրոկոֆևը: — Նրանց (Գերժանովսկու և Սարաջևի) հետ ծանոթացավ նախ Մյասկովսկին և օգտվելով դրանից՝ խոսեց իմ մասին. զրա հետևանքը եղավ այն, որ 1911 թ. ամռանը Սոկոլնիկիում տեղի ունեցավ, թեև առանց հաջողության, իմ «Երազներ»-ի և «Աշնանային»-ի կատարումը: Հաջորդ ամռանը ավելի լավ ընդունվեց Առաջին դաշնա-

վրրդական տանը (1912) Պրոկոֆևի Առաջին դաշնամուրային կոնցերտը:

Սոկոլնիկիի համերգները ամենատաղանդավոր ու լուրջ դիրիժյորներից մեկի համբավ պարզևեցին Սարաջևին: Մամուլը ջերմորեն արձագանքեց Սարաջևի համերգներին ու բարձր գնահատեց թե՛ նրա դիրիժյորական արվեստը և թե՛ համերգային գործի վարգապմանը միտող եռանդուն գործունեությունը: Բազմաթիվ ունեցնղիաներում, քննադատական հոդվածներում շեշտում էին մեծահարուստ ռեպերտուարը, հետաքրքիր ծրագրերը, նշում էին ոչ միայն Սարաջևի ստեղծագործական հասունությունը, այլև նրա կատարողական տաղանդի որոշակիացած հատկանշական դժերը: Որպես մեկնաբան արվեստագետ «Սարաջևը հետաքրքիր է մանավանդ» այնտեղ, որտեղ մեծ վերելքի, տարերայնություն, էսթետիկական լարման, կրքի, հուսահատություն, ուրախություն, ընդհանրապես ամենից ավելի խոր էմոցիաների արտահայտություն կա:— Դրա փայլուն օրինակը կարող է լինել Սկրյաբինի «Աստվածային սլոն»-ի կատարումը<sup>1</sup>:

---

մուրային կոնցերտը: Այդ գործի անդրանիկ կատարումն էր դա և ընդհանրապես իմ առաջին ելույթը նվագախմբի հետ» (Ս. Պրոկոֆև. Երիտասարդ տարիներ. «Սովետական մուզիկա», 1941, № 4, էջ 82):

<sup>1</sup> «Մուզիկա» հանդես, 1911, № 36:

Դիրիժյոր Սարաջևի մեծ ավյունը, էմոցիոնալ մեծ շիկացումը, նվագախումբը անծանոթ մի քստեղծագործությամբ հրապուրելու հմտությունը միշտ գնահատում էին նրա կոմպոզիտոր բարեկամները, այդ թվում և Ն. Մյասկովսկին ու Ս. Պրոկոֆևը, որոնց հետ նա հրկար տարիներ մտերմական հարաբերություններ պահպանեց: Սարաջևը շատ էր սիրում Պրոկոֆևին ու Մյասկովսկուն, խոնարհվում էր նրանց ստեղծագործության առաջ, որը և անխոնջ կերպով պրոպագանդում էր:

Տակավին 1912 թվականին, Մյասկովսկու ԵՂորորդ սիմֆոնիան Սարաջևի կողմից կատարվելուց հետո, կոմպոզիտորը նվիրեց նրան այդ ստեղծագործության պարտիտուրան հետևյալ մակագրությամբ. «Մեծատաղանդ դիրիժյոր ու բացառիկ նրբազգաց երաժիշտ Սարաջևին խնդրում եմ ընդունել բարեկամական այս դուչըն ընծան ի նշան անսահման երախտագիտության՝ հեղինակի մտահղացումները 1912 թ. հուլիսի 11-ին հազվագեպ սրտալի վերարտադրելու համար»<sup>1</sup>:

Ն. Մյասկովսկին Սարաջևին բարեկամաբար անվանում էր «կրակ դիրիժյոր», «մեր Նիկիշը», «Սուլտոմոնոշկա», «Սուլտոմոշա»<sup>2</sup>, Ս. Պրոկոֆևն էլ ան-

1 Ն. Մյասկովսկու Երկրորդ սիմֆոնիայի հեղինակային մակագրությունը կրող պարտիտուրան պահվում է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի գրադարանում:

2 Ն. Մյասկովսկու Վ. Դերժանովսկուն գրած նամակից: Պահվում է ԵԿԿԹ-ում:

վանում էր «Սոլոմոն», «Սոլոմոնոշա»: «Ձէ՞ որ ես շատ եմ սիրում Սոլոմոնոշայի կատարումը», — գրել է նա Վ. Դերժանովսկուն<sup>1</sup>: Պրոկոֆևն էլ Մյասկովսկու նման դեռ այդ ժամանակ Սարաջևին գերադասում էր մյուս դիրիժյորներին:

Սարաջևի մասին 1910 թվականին մի ծավալուն հոդված հրատարակեց Գ. է. Կոնյուսը, որ առաջին անգամ էր տեսնում նրան դիրիժյորական պուլտի առջև:

«Շատ վաղուց «դիրիժյորական փայտիկի» մասին միտքը տիրաբար համակել է Սարաջևին... և ոչ մի հեղադարձ հանդամանքներում չի լքել նրան, — գրել է նա: — Երբ էլ որ այցելես նրան, շեռ կարող շապշել նրա շուրջը եղած բազմապիսի ուղղությունների՝ կլասիկներից սկսած մինչև ծայրահեղ մոդերնիզմի շինծու նմուշների նվագախումբային պարտիտուրաների մեծ քանակից: Եվ ինձ համար հետաքրքրական էր ստուգել, թե իրականում ինչպիսին կլինի առանձնասենյակի լուսթյան մեջ աճած այդ ներքին ձգտումը, որ տարիներ շարունակ իրեն դրսևորելու առիթի էր սպասում:

Անցնելով հսկայական Մանեթի ինչ-որ դեկորացիաներով խցկված կիսախավար անկյունը՝ ես հասա Չաչկովսկու արդեն սկսված 6-րդ սիմֆոնիային և առաջին իսկ տակտերից զգացի, որ կատարումը ակամա հափշտակում է ինձ: Երիտասարդ ուժերից կազմված ոչ մեծաթիվ նվագախումբը ասես էլեկ-

<sup>1</sup> Ս. Պրոկոֆևի Վ. Դերժանովսկուն դրած նամակից:

արականացած հետևում էր առաջնորդին և պատանեկան հավատով կրկնում նրա հափշտակությունը՝ կենդանի ու անքակտելի միասնություն կազմելով նրա հետ: Եվ ինչպես միշտ լինում է կուլեկտիվ վերելքի այդպիսի դեպքերում, թեմատիկ թերությունները չէին նկատվում, կորչում էին: Ունկնդիրները զսպված լսում էին այն ներքին իմաստը, որ դիրիժյորը հմտությամբ բխեցնում էր կրած շտական ստեղծագործություններից: Նա վերարտադրում էր ոչ թե նոտաներ, ոչ թե իրար հաջորդող կամ միաժամանակ հնչող հնչյունների հաջորդականություններ, այլ այն ներքին, թաքուն նշանակությունը, որի համար հնչյուններն ինքնին արտաքին մի պարզ պատյան են: Չայկովսկու Ց-րդ սիմֆոնիայի այդ կատարումից հետո ևս հաստատապես հավատում էի Սարաջևի դիրիժյորական տաղանդին»<sup>1</sup>:

1 Գ. Է. Կոնյուս, Սիմֆոնիկ համերգների սեզոնը փակվելու առթիվ. «Ուարո Ռոսսիի», 3—X—1910, № 210: Սոկոլնիկիում «Ժողովրդական տանը» տեղի ունեցած Սարաջևի համերգների մասին դրված է նաև «Մոսկվայի պատմություն» գրքի V հատորում (Մ., 1955, դր. 19, էջ 597): «Մոսկվայի կրթության կյանքում ակնառու տեղ էին զբաղում ամառային համերգները Սոկոլնիկիում ու Ժողովրդական տան այգում: Դրանց դիրիժյորն էր Կ. Ս. Սարաջևը՝ անսպառ եռանդի տեր մի մարդ, որ ձգտում էր սիմֆոնիկ կրած շտակունքը դարձնել այն շրջանների սեփականություն: Նրա ամառային ծրագրելը չէին սահմանափակվում թեթև «գրոսայգիներին հատուկ կրած շտակամբ», այլ պարունակում էին նաև դասական ու

Սովորելիկիում տրվող ամառային համերգների հանրագումարը կատարելով՝ «Մուղիկա» հանդեսը շեշտում էր. «Դրանց գաղափարական կողմը, բովանդակութեան ճշմարտությունն ու թարմութեանը, ոգևորությունը, որով կատարվում էին՝ շնայած արտաքին անհնարին, սպանիչ պայմաններին, այնպես են, որ մնում է մոտեցող ձմռան սեզոնին ջանկալ, որ դա ընթանա քաղաքային համերգների հետքերով: Հիրավի, նորույթների այնպիսի առատություն, ռեպերտուարի այնպիսի ընտրություն, որի դեպքում դիրիժյորի համար ծրագրերի շահավետություն ոչ մի նկատառում չի կարող լինել, քանի որ ընդհանրապես այնքան վիթխարի ու մոռումենտալ է նրա ռեպերտուարը, — որտե՞ղ մենք կհանդիպենք այդպիսին:

Վերջապես ինչպե՞ս չգնահատենք Ռուսաստանում առաջին անգամ կատարվող բեթհովենյան սիմֆոնիաների ցիկլը և ընդհանրապես ծրագրերում Բեթհովենի զգալի դերակշռումը, որը, սակայն, չի բացառում այնքան մեծաքանակ նոր ստեղծագործությունների կատարման հնարավորությունը, որպիսին սեզոնի ընթացքում մեզ չեն տալիս բոլոր համերգային հիմնարկությունները միասին վերցրած»<sup>1</sup>:

---

ժամանակակից ռեպերտուար: Սարաջևը հանդես էր գալիս որպես կատարվող երկերի ընտրությանը խիստ վերաբերվող երաժիշտ-լուսավորիչ»:

<sup>1</sup> «Մուղիկա» հանդես, 1911, № 36, օգոստոսի 5, էջ 745:

Հետաքրքիր են նաև սովետական ականավոր դաշնակահար ու կոմպոզիտոր Ս. Է. Ֆեյնբերգի հուշերը Սոկոլնիկիում տրված Սարաջևի համերգների մասին:

«Կոնստանդին Սոլյոմոնովիչ Սարաջևին հիշում եմ 1911 թվականից, այն շրջանից, երբ նա ղեկավարում էր սիմֆոնիկ համերգները Սոկոլնիկիում, ամռան սեզոնին:

1911 թվականը ինձ համար կոնսերվատորիան ավարտելու տարին էր: Ես ինքս առաջին անգամ որպես մենակատար պետք է հանդես գայի այդ համերգներից մեկում: Ուստի բնական է, որ դրանք ինձ համար հատուկ հետաքրքրություն ու գրավչություն էին ստանում: Ես սիրում էի այդ դարնանային ու ամառային համերգները Սոկոլնիկիի «Շըրջանակի» կիսաբացօթյա շենքում, որտեղ սիմֆոնիկ նվագախումբը հնչում էր ոչ միայն շրջափակված շենքի ներսում, այլև դրանից դուրս՝ աչուձառուղիներում և շավիղներում ձայնը կտրած բազմօթյան մեջ: Հնչյունները միաձուլվում էին վաղածամ ամռան բնօթյանը, երաժշտական կերպարներն ստանում էին մի առանձնակի տրամադրություն, որ կախված էր շրջապատի անդրադարձյալն գոյավիճակից, մերթ ցերեկվա լույսով, մերթ էլ՝ ավելի ուշ, էլեկտրական աղեղնավոր լապտերներից լուսավորված զրոսայգու ծառերից ու տերևներից, մի տրամադրություն, որ, ի տարբերություն համերգային փակ շենքերի, կախ

ված էր նույնիսկ համերգը հաջող վարելուն նպաստող կամ խոչընդոտող եղանակից:

Այդ սիմֆոնիկ համերգների գլխավոր ձգողական ուժը նվագախմբի հմայիչ, տաղանդավոր, տաքարյուն ու երիտասարդ ղեկավար Կ. Ս. Սարաջևն էր՝ Սոկոլնիկիի համերգների գլխավոր դիրիժորը: Նա մեզ գերող սիմֆոնիկ հնչողութունների հոգին ու ստեղծողն էր:

Այդ ամռան ընթացքում կատարվեցին բազմաթիվ հիանալի ստեղծագործութուններ: Ես հատուկ ուշադրությամբ ու հետաքրքրությամբ լսեցի ամենաառաջավոր կոմպոզիտորը համարվող Սկրյաբինի սիմֆոնիկ երաժշտութունը: Կատարվեցին վազների, Բեթհովենի, Չայկովսկու երկերից: Եթե չեմ սխալվում, այդ սեզոնում Կոնստանդին Սոլոմոնովիչը կատարեց նաև երիտասարդ Պրոկոֆևի գործերը, սակայն այդ ժամանակ այդ երիտասարդ կոմպոզիտորը համարյա անհայտ էր: Ինձ համար բավական ուշ սկսվեց Պրոկոֆևի երաժշտությամբ հափշտակվելը:

Մեզ՝ այդ համերգներին հավաքվող երիտասարդությանը, գերում էր ոչ միայն կատարվող երաժշտությունը, այլև դիրիժորի ամբողջ պատկերը, նրա տիրական, բայց միաժամանակ և շնորհազեղ ժեստը:

Դեռ այն ժամանակ ես սկսեցի տարբերել երկու տիպի դիրիժորներին. ոմանք ամբողջովին տիրապետում էին նվագախմբին, նրանց չուրաքանչյուր

շարժումն արտահայտում էր ղեկավար մտահղացմանը ենթարկվելու կամք ու պահանջ: Ժեստերի ամբողջ պլաստիկան խստորեն զուսպ էր և իր կամային նպատակամիտութեամբ տալավորութուն էր գործում: Ոչինչ չէր կորչում, զուր չէր վատնվում որպես իր ակտիվության համար կիրառում չգտած ավելցուկային էներգիա: Ժեստի որոշ ժխտութունն ու խստութունը կապված են հրաժշտական պատկերացումների հստակության և նվագախմբի կոլեկտիվին առաջադրված զեղարվեստական խընդիրների որոշակիության հետ:

Մյուս դիրիժյորների շարժման պլաստիկան ավելի շուտ պատկերում է երաժշտական կերպար, բան խթանում նրա առաջանալուն. կատարողը ենթարկվում է հնչեղութեանը ավելի մեծ շափով, բան անհրաժեշտ է դրա բնույթի վրա ակտիվորեն ներգործելու համար:

Կոնստանդին Սոլումոնովիչը ներշնչում էր մեզ որպես արտիստ ու կատարող հենց նրանով, որ նրա դիրիժյորական արվեստը՝ դիրիժյորական ժեստերի ամբողջ պլաստիկան ու դինամիկան պատկանում էին առաջին տիպին: Նրա տիրական ու արտահայտիչ ժեստը անմիջական արձագանք էր գտնում նվագախմբի մեջ ու մշտապես առաջացնում համապատասխան հնչեղութուն, վառ, ցայտուն ֆրազավորում:

Կինեկով նշանավոր դիրիժյոր Արթուր Նիկիշի աշակերտը՝ Կոնստանդին Սոլումոնովիչը շատ բա-

նով ժառանգել էր դիրիժյորական նրա հպարտ, զուսպ մաները:

Համարյա 1911 թվականի ամբողջ ամառն ինձ համար անցավ Սոկոլնիկիի համերգների ցիկլում կատարվող սիմֆոնիկ սքանչելի երաժշտության ու դրանց ղեկավարի անջինջ արվեստի տպավորության տակ<sup>1</sup>:

Արդեն այդ տարիներին Սարաջեն իր դիրիժյորական գործունեությամբ նպաստում էր ուսական դիրիժյորական արվեստի բարձրացմանն ու ամբապնդմանը, որն այդ տարիներին հաճախ էր տրհամարհվում արևմտյան գաստրոլյորների առջև ստրկահաճությունն անելու հետևանքով:

Սարաջեր 1909 թվականի ամռանը սիմֆոնիկ համերգ ղեկավարեց Յալթայում: Այդ համերգում, Սարաջեի ղեկավարությամբ, Գլադունովի 2-րդ սիմֆոնիայի կատարումը արժանացավ նրա հեղինակի (որ այդ ժամանակ հյուրընկալված էր իր բարեկամ Ալ. Սպենդիարյանի մոտ ու ներկա էր համերգին) հիացական ղնահատականին: «Այսպիսի դիրիժյորի տեղը ոչ թե Յալթայում է, այլ մայրաքաղաքի լավագույն համերգներում»<sup>2</sup>, — ասաց Գլադունովը:

<sup>1</sup> Ս. Ֆեյնբերգ, Իմ ստեղծագործական հանդիպումները Կ. Ս. Սարաջեի հետ (ոուսերին, ձևագիր), 1959:

<sup>2</sup> Ե. Կոպոսովա-Գեթմանովսկայա, Հիշողություններ Կ. Ս. Սարաջեի մասին (ձևագիր):

Սիմֆոնիկ համերգներին զուգընթաց Սարաջևը ղեկավարում էր նաև ժողովրդական տանը տրվող օպերային ներկայացումները (1911—1912): Այդ տեղ նա ղեկավարեց ընդամենը 26 օպերա, ըստ որում դրանցից մի քանիսը՝ Չայկովսկու «Մաշկինկերը», Իպոլիտով-Իվանովի «Դավաճանությունը», Ռախմանինովի «Ալեքոն», Մոցարտի «Ֆիգարոյի հարսանիքը»: Մասնեի «Վերթերը» նա ղեկավարեց նոր բեմադրությամբ:

Սարաջևի գործունեությունը «Ժողովրդական տան» օպերայում նույնպես արժանացավ մամուլի դրական գնահատականին:

«Վաղուց արդեն Սարաջևը սիմֆոնիկ երաժշտության տաղանդավոր ու թովիշ դիրիժորի հռչակ է ձևոք բերել: Հիմա միանգամայն անառարկելիորեն կարելի է ասել, որ նա նույն շափով տաղանդավոր ցուցաբերեց իրեն նաև որպես օպերային դիրիժոր: Կատարումով հափշտակվեց նաև լիփ-լիցուն թատրոնի հասարակությունը: Ասենք այլ կերպ չի էլ կարող լինել, երբ նկատվում է կատարողների անկեղծությունը կատարվածի հանդեպ»<sup>1</sup>:

Իպոլիտով-Իվանովի «Դավաճանություն» օպերան կատարելու վերաբերյալ Գ. Կոնյուսը նշում էր, որ «...Սարաջևը կարողացավ շատ տեսարանների հաղորդել առույգություն, աշխուժություն,

<sup>1</sup> Գ. Կոնյուս, «Դավաճանություն» ժողովրդական տանը: «Ուտրո Ռոսսիի», 14 հունվարի 1912, № 11:

ցայտունութիւնն ու նշանակալիութիւնն, որ առաջ ես դրանց մեջ շէի ենթադրում»։ Իսկ գնահատելով Սարաջևի կողմից «Կարմեն» օպերայի բեմադրութիւնը նույն թատրոնում՝ Կոնյուսը ընդգծում էր, որ «այն ամենը, ինչ վերաբերում է մեկնաբանմանը՝ տեմպերը, երկի գաղափարի ընդհանուր ըմբռնումը, ապա այդ ամենով ունկնդիրներին ուրախացրեց տաղանդավոր դիրիժյորը։ Նվագախումբում հնչում էին այնպիսի հետաքրքրական մանրամասնութիւններ, որ սովորաբար օպերային բեմում չենք լսում»<sup>1</sup>։

Նոր նախաձեռնումներով շափազանց հափշտակված Կ. Ս. Սարաջևը 1909 թվականից դառնում է «Ժամանակակից երաժշտութեան երեկուցիների»<sup>2</sup> ամենագործունէյա մասնակիցներից մեկը, իսկ 1912 թ.-ից՝ Վ. Վ. Դերժանովսկու Մոսկվայում հրատարակած «Մուզիկա»<sup>3</sup> հանդեսի աշխատակիցը։

Ռուսաստանի երաժշտական կյանքն այդ տարիներին աչքի էր ընկնում մեծ բարդութեամբ, խոր հակասութիւններով և ուղղութիւնների լարված պայքարով։ Դեմոկրատական, ռեալիստական հո-

1 Վ. Կոնյուս. «Կարմեն» ժողովրդական տանը։ «Ուրոս Ռոսսիի», Մ., 1911, հոկտ. 27, № 247։

2 Պետրորուրգի «Ժամանակակից երաժշտութեան երեկուցիների» խմբակը գոյութիւն ունեցավ 1901—1912 թթ., իսկ Մոսկվայինը՝ 1909—1917 թթ.։

3 «Մուզիկա» շաբաթաթերթը լույս էր տեսնում Մոսկվայում 1910 թ.-ից մինչև 1917 թվականը։

սանքները բախվում էին հակաժողովրդական, անկումային հոսանքներին: Ակադեմիզմին, էպիգոնությանը հակադրվում էին տրադիցիաների խորտակումն ու գերնորարարութունը: Ավագ սերնդին փոխարինելու էր գալիս երիտասարդութունը: Ռուսական դասական երաժշտության առաջատար դպրոցների տրադիցիաներն ու գեղարվեստական սկզբունքները շարունակող կոմպոզիտորների (Ս. Գլազունով, Ա. Լյադով, Ս. Տանեև, Ս. Ռախմանինով և ուրիշներ) կողքին հանդես էին գալիս իրենց հետ նոր հովեր բերող երիտասարդ երաժիշտներ: Սրանց մեջ էլ, իր հերթին, կային ստեղծագործական անհատականությամբ, գեղարվեստական նաշակով ու հափշտակութուններով միանգամայն տարբեր կոմպոզիտորներ, ինչպես Սկրյաբինն ու Ստրավինսկին, Մյասկովսկին ու Պրոկոֆևը, Միսները, Ռեբիկովը, Չերեպնինը, Գլիերը, Վասիլենկոն և ուրիշներ:

«Ժամանակակից երաժշտության երեկույթները» և «Մուզիկա» հանդեսը ակտիվորեն մասնակցում էին հոսանքների այդ պայքարին՝ նպատակ ունենալով պաշտպանել ու պրոպագանդել այն ամենը, ինչ «նոր» էր ու «ժամանակակից»: Սակայն գեղարվեստական տարբեր ուղղություններն ու նրանց ներկայացուցիչները այդ հասկացությունների մեջ բոլորովին տարբեր բովանդակություն էին դնում՝ նայած իրենց էսթետիկական դիրքերին:

Սովորաբար ընդունված է կարծել, որ «ժամա-

նակակից երաժշտության երեկույթները» և «Մուզիկա» շաբաթաթերթը եղել են երաժշտական մոդեռնիզմի կենտրոնը Ռուսաստանում: Այդ մասին տակավին 1912 թվականին գրել է Վ. Վ. Դերժանովսկին՝ ազդարարելով «Մուզիկա» շաբաթաթերթի պլատֆորմը. «Մեր նորածին օրգանը մոդեռնիզմի միակ ամբողջ է Ռուսաստանում»: Եվ իսկապես էլ կազմակերպական ու զաղափարական տեսակետից կապված լինելով նկարչական օրգան «Միր իսկուսատվ»-ի հետ՝ «Մուզիկա»-ն տպագրում էր հոգվածներ (Նուրոկի, Նովիկի, Սաբանեևի, Վ. Բենուայի և ուրիշներ), որոնք բացասում էին հասարակական նշանակությունը, ժողովրդայնությունը, կյանքի ճշմարտությունը, զաղափարականությունը արվեստում, կլասիկ ժառանգությունը, ռուսական ազգային արվեստի ռեալիստական տրադիցիաները, որպես «հնացած», կատաղորեն մերժում էին: Նրանք քարոզում էին «մաքուր արվեստի», ինքնաբավ ձևի պաշտամունք, վահանի վրա էին բարձրացնում ժամանակակից մոդեռնիստների կյանքից կտրված, սուբյեկտիվիզմով, միատիկացով, էսթետականություն մը համակված կեղծ նորարարական գործերը, կոչ էին անում դեմքով շրջվել դեպի Սրևմուտք ու ժամանակակից բուրժուական արվեստի տարրեր հոսանքները: Ահա այս ամենը արտացոլվում էր նաև «ժամանակակից երաժշտու-

1 Վ. Վ. Դերժանովսկու 1912-ի նոյեմբերի 20-ի թվակիր՝ Վ. Ռեբիկովին գրած նամակից:



Կ. Ս. Սարաջյանը դիրիժորական պուլտի առջև:

МОСКОВСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ  
1923-24 академический год. Четвертый цикл концертов.

**БОЛЬШОЙ ЗАЛ**  
в пятницу 11<sup>го</sup> апреля  
**ПОКАЗАТЕЛЬНЫЙ**  
**СИМФОНИЧЕСКИЙ КОНЦЕРТ**  
**ОРКЕСТРА УЧАЩИХСЯ М. Г. К.**

СТАРШАЯ ГРУППА  
под управлением профессора

**К. С. САРАДЖЕВА**  
при участии профессора  
**К. Н. ИГУМНОВА**

**ХОРА УЧАЩИХСЯ М. Г. К.**

**ПРОГРАММА:**

- 1 Бородин Соединяя 26-2 б-мол  
2 Рахманинов Концерт № 2 с-мол для ф. к. с оркестром

3 Мусоргский

Вальс Шопен  
Переложение Скрябина  
Песня из Ледяной горы

**Начало в 8 час. вечера.**

Цены общедоступные.

Угледарительные билеты в Центральном зале (Литературн. Б. и Концертном Отделе М. Г. К.) - в 2-ой категории с 3 час. 400  
в зале Большого зала.

Կ. Սարաճյանի համերգի փոխընթաց

Յյան երեկույթների» համերգային գործունեության մեջ, որովհետև այդ կազմակերպությունը իր հիմնական նպատակն էր համարում լայնորեն պրոպագանդել արևմտյան երաժշտության նորագույն երկերը՝ ներառյալ դեկադենտ-կոմպոզիտորներին օրապակաս գործերը:

Բայց սխալ կլիներ հախուռն կերպով ու հաւասարապես բացասական գնահատական տալ «Ժամանակակից երաժշտության երեկույթներ»-ի շուրջ մասնակիցների ու «Մուզիկա» շաբաթաթերթի գործունեությանը: Դրանց կազմը միասեռ չէր. նրանց մեջ կային տարբեր հայացքների, տարբեր ձրգտումների տեր մարդիկ: Այդտեղ կային երաժիշտներ, որոնք այն ժամանակ թեև դեռ աչքի չէին ընկնում իրենց դիրքի բավականաչափ հստակությանմբ, սակայն ընդունակ էին ավելի օբյեկտիվորեն դիտել երաժշտական կյանքը, կարողանում էին դիպուկ ու շատ բանով ճիշտ գնահատականներ տալ երաժշտական արվեստի շատ երեկույթներին, իսկական նորն ու գեղարվեստապես արժեքավորը զանազանել դեկադենտների օրապակաս, կեղծ նորարարական գործերից: Մարդկանց ուշադրությունը հրավիրելով դեպի «նորն» ու «ժամանակակիցը», նրանք կարողանում էին գնահատել նաև դասական ժառանգությունը: Երաժիշտների այս խումբի հայացքները մասամբ արտացոլվեցին նաև «Մուզիկա» շաբաթաթերթի սկզբնական ծրագրի կետերից մեկում, որը ասում էր. «Կուլտուրայի

գաղափարը անբաժանելի համարելով ժառանգականության գաղափարից՝ «Մուզիկա»-ի խմբագրությունը նորի որոնումները միացնում է անցյալը հարգելու ու սիրելու հետ»<sup>1</sup>: Այդ մարդկանց նախաձեռնությամբ շաբաթաթերթում տպագրվում էին Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի առանձին հոդվածներն ու նամակագրությունը, հոդվածներ Մուսորգսկու օպերաների, Բեթհովենի մասին (մասնավորապես 9-րդ սիմֆոնիայի՝ Սերովի վերլուծումը, էինյովայի հոդվածները ֆուլերբի մասին, Ա. Օսովսկու, Վ. Մ. Բելյակի, Բրյուսովայի և այլոց հոդվածները: Առանձին ձիշտ ու նրբազգաց գնահատականներ էին պարունակում նաև Վ. Գ. Կարատիգինի, Վ. Վ. Գերժանովսկու հոդվածները, թեև ամբողջությամբ վերցրած՝ նրանց դիրքավորումը սխալ էր: Առանձնապես ուշադրություն գրավեցին այն ժամանակ «Մուզիկա»-ին թղթակցող Ն. Մյասկովսկու և Բ. Սասֆևի հոդվածները: «Մյասկովսկու և Սասֆևի քննադատական հոդվածներն իրենց սկզբունքայնությամբ ու զեղարվեստական նրբազգացությամբ խախտում էին շաբաթաթերթի նեղ խմբակային տոնը, — գրում է Ի. Նեստեր, — նրանց ակտուալ, կենսականորեն պրոբլեմային հոդվածները ուժեղ հակապատկեթ էին կազմում այն իդեալիստական ցնդարանության, որով լի էին մոդեռնիստական երաժշտա-

<sup>1</sup> «Մուզիկա» հանդես, 1910, նոյեմբերի 27, № 1:

գետներին օպուսները»<sup>1</sup>: Մյատեղ տեղին է հիշատակել Ն. Մյասկովսկու «Բեթհովեն և Չայկովսկի» ծրագրային մեծ հողավածը, Բ. Վ. Ասաֆևի (Բզոր Գլեբովի) հրապարակախոսորեն սուր, կրքոտ ելույթները շաբաթաթերթում ի պաշտպանություն երիտասարդ Ս. Ս. Պրոկոֆևի և այլն: Չի կարելի չհիշել և այն, որ «Ժամանակակից երաժշտության երեկույթներ»-ի ծրագրերը պարոսնակում էին ոչ միայն գեկադենտական կոմպոզիտորների գործեր, այլև արտասահմանյան ու հայրենական երաժշտության հետաքրքրական նորություններ (Դերյուսի, Ռավել, Դյուկա, Վոլֆ, Ռեգեր, Սկրյաբին, Մյասկովսկի, Պրոկոֆև և ուրիշներ), ինչպես նաև երաժշտական կլասիկայի առանձին նմուշներ: Պետք է ասել, որ «Ժամանակակից երաժշտության երեկույթներ»-ի մասնակիցներից մի քանիսը նպատում էին տաղանդավոր, երիտասարդ ուսուցիչներին (այդ թվում Ն. Մյասկովսկու, Ս. Պրոկոֆևի, Ռ. Գլիերի և ուրիշներին) ստեղծագործությունները համերգային էստրադա հանելու, օգնում էին հալեցնելու անտարբերության սառույցը նոր, տակավին անհայտ երկերի նկատմամբ:

Կոնստանդին Սարաջևի գործունեությունը «Ժամանակակից երաժշտության երեկույթներ»-ում և «Մուզիկա» շաբաթաթերթում իր նպատակամտությամբ մոտենում էր Ն. Մյասկովսկու ու Բ. Այա-

<sup>1</sup> Ի. Նեստև, Ս. Ս. Պրոկոֆև, Մոսկվա, 1957, էջ 60 (նուսերին):

Ֆեի և ոչ թե ի. Սարաճևի, Նուրոկի ու Նուլեյի գործունեութեանը: Սարաճևը կանոնավորապես տպագրում էր ոչ մեծ հոդվածներ, ինչպես՝ Շոպենի կոնցերտի օրկեստրային նվագակցութեան Բալակիրևի մշակման (1910, № 3), Ս. Լյապոնովի «Ժելյազովա Վոլյա» պոեմի (1910, № 4—5), Բալակիրևի նվագախմբային սյուիտի (1910, № 6), Չերեպնինի, «Գավոտի», (1910, № 8), Ս. Լյապովի «Ամազոնուհիների պարի» (1910, № 9), Մ. Գնեսինի «Շելլից»-ի (1910, № 12), Մ. Ռավելի «Իմ մայրը դանդաղու է»-ի (1910, № 15) մասին և այլն: 1915 թվականին տպագրվեց Սարաճևի մեծ հոդվածը Ս. Տանեևի մասին, (1915, № 233): Սարաճևի հոդվածները, տեսական հարցեր լուծելու հավակնություն շունենալով հանդերձ, աչքի էին ընկնում մեծ երաժշտականութեամբ, պրոֆեսիոնալիզմով, վկայում էին հեղինակի երաժշտական հետաքրքրությունների լայնությունն ու գերազանց ճաշակը: Առանձնապես եռանդուն էր Սարաճևի կատարողական գործունեությունը «Ժամանակակից երաժշտութեան երեկույթներ»-ում: Նրա, որպես դիրիժյոր, հանդես գալու և նրա համերգների ծրագրերի մասին վերևում արդեն խոսել ենք: Իսկ այստեղ պետք է նշել նաև նրա մասնակցությունը լարային կվարտետին (Սարաճև, Պարելլտեյն, Բակալեյնիկով, Զիսերման): Այս կվարտետի կատարմամբ Մոսկվայում առաջին անգամ հնչեցին Գեբյուսիի, Ռավելի, Ֆլորան Ծմիդտի, Մյասկով-

սկու, Պրոկոֆևի և ուրիշների կամերային-գործի-  
քային ստեղծագործությունները:

«Լարային կվարտետի անդամները հավանորեն  
ստիպված են եղել շատ աշխատանք թափել հաս-  
նելու համար այն ավարտված կատարմանը, որ  
ցուցաբերեցին նրանք Ռավելի կվարտետում ու  
Ֆլորան Ծմիդտի կվինտետում», — գրել է Ն. Գ.  
Կաշկինը<sup>1</sup>:

Կոնստանդին Սարաջևի էսթետիկական դիրքերը  
այդ ժամանակ տակավին բավականաչափ հետե-  
վողական չէին՝ և բավական էլ հակասություններ  
էին պարունակում: Չպետք է թաքցնել, որ երբևէն  
հափշտակում էր նրան մոդեռնիստների գործերի  
բորբոքող նորույթը, ձևի ինքնաբավ նորարարու-  
թյունը ժամանակակից մի քանի գործերում, և այն  
ժամանակ արտաքին պատյանի տակ նա չէր նկա-  
տում վնասակար բովանդակությունը: Սակայն կա-  
րևոր է շեշտել մի այլ հանգամանք, այն, որ նրա  
ստեղծագործական գործունեության առաջատար  
տենդենցը պրոգրեսիվ ուղղվածություն ուներ,  
կապված էր կլասիկան, ժողովրդական ստեղծա-  
գործությունը հարգելու հետ, արվեստի բովանդա-  
կալիությունն պահանջի, ուսև երիտասարդ կոմպո-  
զիտորների նոր երկերը համարձակ ու անխոչ  
կերպով պրոպագանդելու, ունկնդիրների հոծ

<sup>1</sup> «Տրուսակոյն սլովո» օրաթերթ, 1909, հունվարի 18,  
№ 14:

զանգվածները երաժշտական արվեստին հաղորդակից դարձնելու ձգտումի հետ:

Սարաջևը իր ամբողջ բազմակողմանի ու եռուն գործունեութունը կապում էր լայն լսարանի, երաժրշտական մասսայական լուսավորման խնդրի հետ: Նա անողորք էր այն մարդկանց նկատմամբ, որոնք վատ ճաշակ, գոեհկություն, անփութություն ու մակերեսայնություն էին ցուցաբերում երաժրշտության ասպարեզում: Նրա մեջ իրար էին զուգորդվում կլասիկային ջերմեռանդորեն հավատարիմ լինելը և նորի համառ ու տևական որոնումները. նա միշտ ապրում էր իր ժամանակի հասարակական ու գեղարվեստական շահագրգռություններով:

1913 թվականին Սարաջևը հաճությամբ ընդունեց տաղանդավոր ռեժիսյոր Կ. Մարջանովի (Մարջանիշվիլու) առաջարկը՝ ստանձնել «Ազատ թատրոնի» գլխավոր դիրիժյորի պաշտոնը: Այդ թատրոնը նոր էր ստեղծվել Մոսկվայում, և նրա գլխավոր կազմակերպիչը, դիրեկտորն ու հիմնական ռեժիսյորը ինքը՝ Մարջանովն էր: Ըստ Սարաջևի, իրեն հրապուրողը Մարջանովի վառ անձնավորությունն էր, նրա հետ աշխատելու հեռանկարը, ինչպես նաև կազմակերպիչների գաղափարը՝ ստեղծել մի սինթետիկ թատրոն, որը համախմբի դրաման, ողբերգությունը, բարձրարվեստ կոմեդիան, մելոդրաման, պանտոմիմը, օպերան ու օպերետը<sup>1</sup>:

<sup>1</sup> Սույն աշխատության հեղինակի և Սարաջևի զրուցից:

ինչպես հայտնի է՝ թատրոնը գոյություն ունեցավ ընդամենը մի թատերաշրջան, բաժանվեց շորս կոլեկտիվի, որոնցից մեկի հիման վրա ծնունդ առավ Քահիրովի «Կամերային թատրոնը»:

Կարճ ժամանակամիջոցում Սարաջևը կարողացավ «Ազատ թատրոն»-ում տալ մի քանի բեմադրություն, այդ թվում ինչպես նշված էր ծրագրում, նաև Գոգոլի—Մուսորգսկու «Սարոչինյան տոնավաճառը» օպերան: Այդ ներկայացումով էլ տեղի ունեցավ թատերաշրջանի բացումը 1913 թվականի հոկտեմբերի 1-ին: Ինչպես գիտենք՝ այս օպերան Մուսորգսկին չէր ավարտել: Ըստ Ե. Կոպոսովա—Դերժանովսկայայի հուշերի՝ Սարաջևն ու Մարջանովը համադրեցին Բեսելի հրատարակած բոլոր հատվածները: Յու. Սախնովսկին գլուխ բերեց գործիքավորումը, լիբրետոն լրացվեց Գոգոլի իսկական տեքստով: Այդ օպերայից բացի, բեմադրվեցին նաև «Պիերետի քողը» (Շնիցլերի, երաժշտությունը է. Դոնանիի), Ա. Քահիրովի բեմադրությունը՝ Ա. Դոդե-Բիզեի «Առլեզիանկա», «Դեղին կոֆտան»: Ավարտվեց Ն. Ռիմսկի-Կորսակովի «Անմահ Կաշչեյը» օպերայի բեմադրական աշխատանքը: Թատրոնը ծրագրել էր նաև բեմադրել Ի. Ստրավինսկու «Սոխակներ»-ը, Կորսակովի «Անտար»-ի և Գլազունովի 8-րդ սիմֆոնիայի բեմական իլյուստրացիաները:

Քաղմապիսի շնորհներով օժտված, վերին ստիճանի սրամիտ, սրտաբաց, եռանդուն, անձնա-

կան բացառիկ հմայքով լի Սարաջևը բառի բուն իմաստով «հասարակութեան հոգին» էր և վայելում էր բարեկամների ու արվեստակիրացների սերն ու հարգանքը: Նա հիանալի պատմող էր, սիրում էր ֆանտազիային զոռ տալ, կատակել, երբեմն զուտ պատանեկան շարաճճիութեամբ<sup>1</sup>: Խիստ կարեկից էր նա մարդկանց նկատմամբ: Սակայն՝ շմուռնանք նաև նկատել, որ որոշ շափով խիստ և խոսքից անզուսպ լինելով, ինչպես և ուղղամիտ կերպով, ոչ մի բանի հետ հաշվի չնստելով՝ իր հայացքները շիփ-շիտակ արտահայտելու, նմանապես, թեև միշտ սրամիտ, բայց կծոզ ծաղրի սիրահար լինելու պատճառով բավական շատ հակառակորդներ ու նույնիսկ թշնամիներ վաստակեց:

«Կարելի է ասել, — վկայում է Յու. Տյուլինը, — որ Կոնստանդին Սոլումոնովիչի մեջ կար երկու հակադիր խառնվածք, երկու մարդ. մեկը տպավորվող, պոռթկուն, անհամբեր, դյուրաբորբոր, երբեմն շափից ավելի խստապահանջ, իր եզրակացությունների մեջ անհամբեր. մյուսը, բնդհակա-

<sup>1</sup> Սարաջևը կենդանիների հիանալի նմանակերպություն էր անում: Մի անգամ կուրով գնալիս նա «հաշում է»: Կառապանը մտրակով խփում է նախ աջ կողմին, բայց շանը չհայտնաբերելով անցանք՝ խփում է մյուս կողմին ու հայհոյում: Հետո արդեն, երբ հասկանում է, որ իր հաճախորդի խաղն է դա, հանդիմանական շեշտով ասում է. «Ի՛նչ ասեմ, տե՛ր իմ, դուք լավ կաննիք բալադանում (խեղկատականոցում) աշխատե՛իր»:

ռակը, հանդարտ, կշռադատող, իր որոշումների մեջ զգույշ, մշտապես ուշադիր ու բարյացակամ: Նախ՝ բորբոքված վիրճարկում, գերիշխում էր առաջին խառնվածքը, հետո էլ հաղթում էր երկրորդը: Դրանցից էլ առաջանում էին ժամանակավոր հակասությունները նրա վերաբերմունքի ու դատողությունների մեջ»<sup>1</sup>:

Մենք արդեն խոսել ենք Սարաջևի բարեկամական հարաբերությունների մասին իր ժամանակակիցների, այդ թվում Ն. Մյասնկովսկու, Ս. Պրոկոֆևի, Կ. Իգումնովի, Վ. Գերժանովսկու, Ա. Սպենդիարյանի և շատ ուրիշների հետ:

Սարաջևը իր հուշերում խոսում է նաև Ն. Ռիմսկի-Կորսակովի և Յ. Կյուրիի հետ ունեցած հանդիպումների մասին: Նա պատմում է, որ Ռիմսկի-Կորսակովի և Կյուրիի հետ նույնիսկ ծանոթ էր և մակագրված լուսանկարներ էր ստացել նրանցից: Բալախիբևին շատ լավ է ճանաչել որպես կոմպոզիտորի: Նրա ստեղծագործություններից կատարել է «Թամարա» սիմֆոնիկ պոեմը, իսպանական Թեմայով քայլերգի ու վերտյուրը, որի թեման Գլինկան է տվել նրան: Ղեկավարել է նրա Առաջին սիմֆոնիայի և դաշնամուրային կոնցերտի՝ տպագրվելուց հետո առաջին կատարումը նրա համերգում:

---

<sup>1</sup> Յու. Տյուլին, Նոր Երաժշտության անխոնջ պրոպագանդիստը, Չեռագիր, 1959:

Սարաջևի ստեղծագործական հաջող գործունեությունը հանկարծակի ընդհատվեց 1914 թվականի համաշխարհային առաջին պատերազմի պատճառով:

«Ամառվանից (1914 թ. հուլիսի վերջին) ես զորակոչվեցի գործող բանակ, որպես շարքային զինվոր, և օգոստոսի 6-ին արդեն հարավ-արևմտյան ճակատում էի», — գրում է նա<sup>1</sup>: Սարաջևը կրեց պատերազմի ժամանակի բոլոր դժվարություններն ու ծանրությունը. նա եղավ զինվոր, ձիապան, գրագիր, շտաբի աշխատող: Բայց այդտեղ էլ աղատ պահերին զբաղվում էր երաժշտությամբ: Ուր էլ որ գնար, նրա հետ էր անբաժան ու սիրելի ջութակը, որը նվագում էր զինվորների համար ամենաառննպաստ պայմաններում: Երբեմն նրան հաջողվում էր մուտք գործել որևէ զինվորական փողային նվագախումբ և այն ժամանակ, երթի պայմաններում, լուրջ երաժշտությունից մի որևէ բան էր նվագում: «Երբ հիշում եմ, թե ինչպես ուղմիրթի մի կորած վայրում նա նվագում էր Չայկինի (Չայկովսկու, Գ.Տ.) 4-րդ սիմֆոնիան կամ մի ուրիշ բան, հիացմունքից մազերս երեբում են զխիս վրա ու շեմ կարողանում տեղումս նստել: Ա՛խ, տա-

<sup>1</sup> Կ. Սարաջև, Ինքնակենսագրություն, ղեկտ. 18, 1952: Պահվում է Զ. Բ. Սարաջևայի մոտ:

ղանդավոր դե է», — գրել է գործող բանակից Ն. Մյասկովսկին Վ. Գերթանովսկուն<sup>1</sup>։

1917 թվականին Սարաջևին ուղարկեցին Տաճկական ճակատ, բայց Բաքվից այն կողմ նա չկարողացավ գնալ։ «Ես հարկադրված էի կաշկանդվել այդտեղ (Բաքվում, Գ.Տ.), որովհետև տաճկական ճակատի ճանապարհը փակվել էր, — գրում է Սարաջևը։ — Միայն... մայիս ամսին ինձ հաջողվեց հասնել Աստրախան և ապա Վոլգայի ու Սարատովի վրայով վերադառնալ Ռուսաստան»<sup>2</sup>։

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան Սարաջևը դիմավորեց ազնվորեն ու անվարան, անմիջապես կանգնեց այն առաջավոր ինտելիգենցիայի շարքերում, որը անշահախնդիր կերպով ու խանդավառությամբ լծվեց երիտասարդ ռեսպուբլիկայի նոր կուլտուրան կերտելու գործին։

Կոնստանդին Սարաջևը շխնայելով ո՛չ ուժ, ո՛չ եռանդ ու ո՛չ էլ ժամանակ՝ իր տաքարյուն բնավորության ամբողջ կրքոտությամբ ու հափշտակությամբ նվիրվեց երաժշտական գործունեության։ 1918—1920 թվականներին նա աշխատում էր Սարատովում որպես Բանվորական պալատի սիմֆոնիկ համերգների ղրիթմյոր, «Սովետական օպերային թատրոնի» կազմակերպիչ ու զլխավոր ղիթմյոր և Սարատովի կոնսերվատորիայում որպես

<sup>1</sup> Ն. Մյասկովսկու նամակը Վ. Գերթանովսկուն, 1915 թ. մարտի 1, ԵԿԿԹ, № 372։

<sup>2</sup> Սարաջևի ձեռագիր ինքնակենսագրությունից։

ջութակի, օպերային ու կամերային դասարանների դասատու: 1918 թվականին Սարատովի կոնսերվատորիայի գեղարվեստական խորհուրդը ճիածայն որոշումով պրոֆեսորի կոչում տվեց նրան: 1920 թվականի սկզբին Հյուսիսային Կովկասի զինվորական օկրուգի քաղվարչությունը Սարաջևին հրավիրեց Ռոստով-Դոն՝ սիմֆոնիկ նվագախումբ ու օպերային թատրոն կազմակերպելու, իսկ նույն տարվա ամռանից նշանակեց նրան սիմֆոնիկ նվագախմբի դիրիժյոր Ադոլֆ-Սեծովյան ռազմատորմիգում, ուր և աշխատեց մինչև 1922 թվականը, երբ նվագախումբը լուծարվեց:

Սարաջևը կազմակերպել է նաև կամերային-գործիքային անսամբլներ, որոնք նույնպես սպասարկում էին Կարմիր Բանակի ռազմա-օդային և ծովային զորամասերին, դասավանդել Սևաստոպոլի կոնսերվատորիայում: Սարաջևի այս շրջանի կյանքի ու գործունեության մասին հետաքրքիր տեղեկություններ են պարունակում նրա բարեկամ, այժմ երաժշտական ականավոր տեսաբան Յու. Տյուլինի և սովետական հնագույն երաժիշտներից մեկի՝ ՍՍՌՄ Պետական նվագախմբի արտիստ Ա. Նովիկովի հուշերը:

«Կոնստանդին Առլոմոնովիչ Սարաջևի և նրա բազմամյա ընտանիքի հետ ես ծանոթացա 1920 թվականի աշնանը Սևաստոպոլում, ուր եկել էր նա ծովային ուժերի Քաղվարչության սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ Ղրիմը վրանդելյան զորքերից

ազատագրվելուց անմիջապես հետո, — գրում է Յու. Տյուլինը: — Այն ժամանակ Սևաստոպոլը իր «նրկ-րորդ ծննդյան» շրջանն էր ապրում: Այդտեղ կուտակվել էին զգալի չափով կուլտուրական ուժեր, որոնք և ներգրավվել էին կյանքը սովետական ձևով վերակառուցելու գործում: Արվեստի բաժինն սկսեց ղեկավարել Լ. Վ. Սորբինովը, երաժշտության բաժինը՝ կոմպոզիտոր Վ. Մ. Դեշեվովը, որը մեծ եռանդ և կազմակերպչական անզուգական ընդունակութուններ երևան բերեց նաև ժողովրդական կոնսերվատորիա ստեղծելու գործում՝ զլխավորելով այն որպես առաջին դիրեկտոր: Ստեղծվեց սովետական օպերային թատրոն, որտեղ և զլխավորապես կենտրոնացավ իմ աշխատանքը որպես առաջին կոնցերտմեյստերի: Ամենքն էլ աշխատում էին հափշտակությամբ, եռանդագին, ինքնամոռաց կերպով: Նոր կյանքի բուռն կերտման ոտմանտիկ շրջանն էր դա:

Կ. Ս. Սարաջևի ղեկավարությամբ տեղի ունեցող սիմֆոնիկ նվաղախամբի համերգները Սևաստոպոլի երաժշտական կյանքը բարձրացնող խոշոր իրադարձություն էին»<sup>1</sup>:

«Այդ դժվարին շրջանում սիրելի ու անմոռանալի Կոնստանդին Սոլովոնովիչը շնայած այն բանին, որ ինքն էլ բացառություն չէր կազմում,

<sup>1</sup> Յու. Տյուլին, Նոր երաժշտության անխոնջ պրոպագանդիստը, (ձևագիր), 1959:

ինքն էլ զրկանքի ու կարիքի մեջ էր՝ այն էլ առավել ևս սուր, քանի որ բազմանդամ ընտանիք ուներ, այնուամենայնիվ իր առույգությամբ, արիությամբ ու տոկունությամբ վարակում էր մեզ նվազախմբի արտիստներիս և ընդհանրապես իր շրջապատի բոլոր մարդկանց. հարուցում ու պահպանում էր մեր մեջ առույգության, եռանդի ոգին, լավ օրերի, լուսավոր գալիքի հավատը:

Այնքան երիտասարդական լուսաշող կենսորախություն կար իր շրջապատի մարդկանց հետ շփվելու նրա ձևի մեջ, որ թվում էր, թե այնքան էլ չենք հոգնում, այնքան էլ դժվարություն չենք զգում: Արդեն այնքան սոսկալի բան չէր փորձեր անել համերգի ցուրտ սրահում, որտեղ ջերմաստիճանը զերոյի վրա էր, երբեմն էլ զերոյից ցած:

Երեկոյան դահլիճը տաքացնում էր լեփ-լիցուն հասարակությունը:

Հապա երբ համերգի էինք գնում բանակային կամ ռազմա-ծովային զորամասերը, ուր պետք է հասնեինք սառնամանիքին ծովածոցի վրայով. ջրից մառախուղ էր բարձրանում, անտանելի ջարտը խլում էր օրգանիզմի տաքության վերջին մնացորդը, և մտածում էինք. «Եվս մի երկու բուպե, և դու անպայման կսառես, կսառես ու շունչդ կփրչես»:

Հանգուցյալ Կոնստանդին Ստրամոնովիչը իր ներկայությամբ, անմիջականորեն մասնակցելով գործին, ընկերական ուշադրությամբ, ուրիշներին

հոգ տանելով, մեկին կատակով, մյուսին բարեհաբույր կարեկցանքով, գոտեպնդում էր բոլորիս»<sup>1</sup>:

Կոնստանդին Սարաջևը մեկն էր առաջին մարդկանցից, որոնք 1921 թվականին արժանացան Աշխատանքի Հերոսի պատվավոր կոչման:

«1922 թվականի ապրիլին Լուսավորության ժողովում Ա. Վ. Լունաչարսկու կանչով ես մեկնեցի Մոսկվա և նույն տարվա աշնանից հրավիրվեցի որպես պրոֆեսոր Մոսկվայի կոնսերվատորիայում, որտեղ աշխատեցի մինչև 1935 թ...», — գրում է Սարաջևը<sup>2</sup>:

Կոնսերվատորիայում նա ավանդում էր երաժրշտական-տեսական առարկաներ, վարում նվագախմբի, խմբերգի և օպերային դասարանները, ինչպես նաև ուսուցանում էր պարտիտուրաներ ընթերցելը:

Մեծ է Սարաջևի ծառայությունը Սովետական Միությանում դիրիժորական կրթությունը վարձաքանակու ասպարիզում: Ըստ էության առաջին անգամ նա է Մոսկվայի կոնսերվատորիայում ստեղծել դիրիժորական ֆակուլտետ և մի քանի տարի դեկավարել այն որպես դեկան: Նա տարբեր յամանակներ եղել է նաև գիտատեսական ֆակուլտետի դեկանը և օրկեստրային ու լիդալ ֆակուլ-

<sup>1</sup> Մ. Նովիկով, Հիշողություններ Կ. Ս. Սարաջևի մասին: Չեռագիր, 1959:

<sup>2</sup> Սարաջևի անտիպ ինքնակենսագրությունից:

տետների դեկանի տեղակալը: Փորձված մանկավարժ Սարաջևը դեկավարելով դիրիժյորական դասարանը, պատրաստել է բազմաթիվ երիտասարդ բարձրորակ կադրեր: Նրա դասարանից են գուրսեկել այնպիսի դիրիժյորներ, ինչպես Բ. Խաչկինը, Մ. Պավերմանը, Լ. Գինզբուրգը, Ս. Սախարովը, Գ. Բուդաղյանը, Մ. Շորինը, Ա. Գորչակովը, Յու. Տիմոֆեևը և ուրիշներ: Հիանալի դպրոցը, կենսական և ստեղծագործական մեծ փորձը, լայն ու բազմակողմանի էրուդիցիան, հիանալիորեն դրականություն իմանալը Սարաջևին մեծ հեղինակություն էին տվել աշակերտների շրջանում: Նրանք մեծ հարգանքով ու երախտագիտությամբ են հիշում Սարաջևին որպես ուսուցչի, դաստիարակչի ու ավագ ընկերոջ:

Սարաջևի, որպես մանկավարժի մասին, հետաքրքիր տեղեկություններ են պարունակում նրա աշակերտների՝ Բ. Խաչկինի, Մ. Պավերմանի, Վ. Շեբալինի և այլոց հուշերը, որոնցից մենք իմանում ենք, թե ինչպես Սարաջևը անհրաժեշտ էր համարում, որ դիրիժյորական դասարանում այս կամ այն աշակերտի հետ պարապելիս, ներկա լինի և ամբողջ խումբը:

«Մենք միշտ միասին էինք պարապում՝ ամբողջ կուրսով,— գրում է Մ. Պավերմանը...— Մասնագիտության դասի օրը մենք ոչ մի այլ պարապմունք չունեինք և ամբողջ ժամանակ լինում էինք մեր ուսուցչի դասարանում, թեկուզ և դասը տևեր

մի բանի ժամ: Զխոսելով արդեն աշակերտի մեծ օգուտի մասին, երբ նա ոչ միայն անձամբ էր պարապում ուսուցչի մոտ, այլև իր ընկերների հետ հետևում էր նրա պարապմունքին, որով և այդպիսի դասի ընթացքում ուսանողը ծանոթանում էր բաղմամբիլ այլ ստեղծագործությունների, երբ դրանք սերտում էին մյուս ուսանողները»<sup>1</sup>:

Սարաջևը հսկայական նշանակություն էր տալիս ուսանողների՝ նվագախմբի հետ կատարած պրակտիկային:

«Կոնստանդին Սոլովոնովիչը, որպես մանկավարժ, մի հիանալի հատկություն ուներ. նա իրեն պարտավոր էր համարում ոչ միայն աղագեմիական պարապմունքները վարել աշակերտների հետ ըստ ԲՈՒՀ-ի ծրագրի, այլև ամեն տեսակ միջոցներ գտնել, որպեսզի դիրիժյոր ուսանողները պարապմունքներին զուգահեռ կարողանան գործնական հմտություն ձեռք բերել, կենդանի գործում կիրառել դասարանում ստացած գիտելիքները»<sup>2</sup>:

Դիրիժյորական ազատ տեխնիկա մշակելուն մեծ ուշադրություն դարձնելուց բացի, Սարաջևը շափազանց կարևոր էր համարում երաժշտական գրականության, սիմֆոնիկ պարտիտուրաների մանրակրկիտ ուսումնասիրությունը, ուսանողների ներկայությունը ֆիլհարմոնիայի ու օպերային

<sup>1</sup> Մ. Պավերման, Հուշեր իմ ուսուցչի մասին, (ձեռագիր):

<sup>2</sup> Բ. Է. Խայկին, Հուշեր իմ ուսուցչի մասին, (ձեռագիր):

Թատրոնի փորձերին: Սարաջևի ջանքերի նպատակն էր՝ երիտասարդ դիրիժյորին դաստիարակելիս, անհրաժեշտ գիտելիքներով նրան ղինելիս, առավելագույն շափով բացահայտել նրա ստեղծագործական հնարավորությունները և շնչել նրա անհատականությունը:

«Տարբեր գործեր՝ սիմֆոնիաներ, ուվերտյուրներ և այլն ուսումնասիրելիս, Կոնստանդին Առլմոնսովիչը երբեք աշակերտին չէր ճնշում իր հեղինակությունամբ, — գրում է Մ. Պավերմանը, — չէր հարկադրում իր մեկնաբանությունը, սակայն միշտ էլ ճիշտ ուղու վրա էր դնում նրան՝ ներարկելով լավ ճաշակ, վարժեցնելով հասկանալ ստեղծագործության ոճը, միաժամանակ մեկնաբանության ազատություն ընձեռելով աշակերտին»:

Սարաջևը գիտեր երաժշտական մեծաթիվ երկեր և ոչ մի հնարավորություն բաց չէր թողնում իր աշակերտների երաժշտական տեսադաշտը ընդլայնելու համար: Եվ որպեսզի իր դասարանի ուսանողները ծանոթանան սիմֆոնիկ նոր ստեղծագործություններին, նա հրավիրեց իր բարեկամ, սովետական երաժշտության մեծ էնտուզիաստ, հայտնի երաժշտագետ ու հետազոտող Պ. Լամին:

Ըստ Վ. Շերալինի հուշերի՝ Լամը հաճախ էր գալիս Սարաջևի դասարանը նվագելու, բայց ավելի հաճախ Սարաջևն էր լինում նրա բնակարանում՝ երբեմն էլ իր աշակերտներին տանելով իր հետ: Լամի խմբակի մշտական այցելուներն էին Ն.

Մշակովսկին, Ա. Ալեքսանդրովը, Ս. Ֆեյնբերգը, Ա. Գեդիկեն և ուրիշներ, քիչ ավելի ուշ՝ նաև Պրոկոֆևրը: «Այդ հավաքույթներում Կոնստանդին Առամոնովիչը այն էր, ինչ կոչվում է «հասարակության հոգին», — գրում է Վ. Շերալինը: — Վերին աստիճանի սրամիտ զրուցակից ու պատմող, որ շատ բան էր հիշում կոնսերվատորիայի պատմությունից, Ռուսաստանի նախառևոյությունն կյանքից, այնպես որ աշխուժացնում էր հասարակությունը իր դիպուկ վերհուշներով և գլխավորապես երաժշտական թեմա ունեցող հանպատրաստից հորինումներով<sup>1</sup>:

Կ. Սարաջևը և Պ. Լամբ բարեկամ էին, հաճախ էին իրար հանդիպում<sup>2</sup>, օգնում էին միմյանց ստեղծագործական աշխատանքում վանազան խորհուրդներով<sup>3</sup>: Լամբ նոտայի մի հսկայական գրադարան ուներ, ուր կային երաժշտական բավական շատ հագվագյուտ գործեր: Նա մեծ հմտությամբ դաշնամուրի համար (4 կամ 8 ձևերի) վերաշարադրում էր սովետական կոմպոզիտորների, մասնա-

<sup>1</sup> Վ. Շերալին, Հուշեր Սարաջևի մասին, (ձեռագիր):

<sup>2</sup> Այդ գրքում կան Սարաջևի ու Լամբի փոխհարաբերությունները լուսարանող հետաքրքիր հիշողություններ:

<sup>3</sup> Սարաջևի արխիվում պահվում է Մուսորգսկու «Բորիս Գուդոնով» օպերայի լիբրետոն, որ Լամբ նվիրել է նրան հետևյալ մակագրությամբ. «Միրելի Կոստյային՝ իմ բարի խորհրդատուին ու օգնականին, ջերմագին սիրող Պ. Լամբից. 16—11—1928»:

վորանպես ն. Մյասկովսկու նոր ստեղծագործությունները: Այսպիսով, շատ գործեր նախ հնչում էին Սարաջևի դասարանում, ապա կատարվում համերգային էստրադայում:

«Կոնստանդին Սոլոմոնովիչը իր անձնական օրինակով և դասարանում պարապելու իր սիստեմով աշխույժ հետաքրքրություն էր ներարկում իր աշակերտներին մեզ ժամանակակից սովետական կոմպոզիտորների նոր երկերի նկատմամբ: Արևմտյան նոր երաժշտությունը Կոնստանդին Սոլոմոնովիչը իմանում էր, բայց շատ քիչ էր նվագում»<sup>1</sup>:

Օպերային դասարանը ղեկավարելիս՝ Սարաջևը ուսանողների ուժերով բեմադրեց 1928 թ. «Խովան-շչինան», իսկ 1929 թ. «Մաշիկներ» օպերաները:

Կոնսերվատորիայում աշխատելուն զուգընթաց Սարաջևը դասավանդում էր Սկրյաբինի անվան, Ստասովի անվան, Հոկտեմբերի անվան երաժշտական ուսումնարաններում՝ վարելով նվագախմբի ու ջութակի դասարանները, բեմական արվեստի պետական ինստիտուտի ռեկտորն էր (1922—1924), պետքազվարչության նվագախմբի կոնսուլտանտն ու քեղարվեստական ղեկավարը (1934):

1924 թվականին Սարաջևը անդամագրվեց «Ժամանակակից երաժշտության ասոցիացիային», որը ծնունդ էր առել «Ժամանակակից երաժշտու-

<sup>1</sup> Մ. Պավլեման, Հուշեր Սարաջևի մասին (ձեռագիր):

թյան երեկույթները» հիման վրա, և սկսեց մասնակցել նրա կազմակերպած համերգներին: Ինչպես առաջ, այժմ էլ Սարաջևը համամիտ չէր ԺԵԱ-ի որոշ անդամների ծայրահեղ հայացքներին, որոնք բացասում էին դասական ժառանգությունը, արհամարհում էին երաժշտության բովանդակալիությունը և ընդունում էին միայն «գերթամանակակից» ֆորմալիստական երաժշտությունը:

Սարաջևի պատկերացման մեջ հետզհետե ավելի ներդաշնակորեն միաձուլվում էին նորարարությունն ու տրագիցիաները, գեղարվեստական ձևի ասպարեզում կատարվող համարձակ որոնումներն ու բովանդակության նշանակալիությունը և պրոգրեսիվությունը: ԺԵԱ-ին մասնակցելը նա ենթարկում էր սովետական կոմպոզիտորների նորագույն ստեղծագործությունների պրոպագանդին: Նրա դեկլարությունները կատարվեցին բազմաթիվ նոր գործեր Ա. Ալեքսանդրովից, Լ. Կնիպերից, Վ. Շերալինից, Լ. Պոլովինկինից, Գ. Շոստակովիչից և ամենից առաջ, իհարկե, իր բարձր գնահատած Ս. Պրոկոֆևից ու՝ Ն. Մյասկովսկուց:

«Ես անձամբ նիկոլայ Յակովլևիչին (Մյասկովսկուն, Գ. Տ.), որ 4-րդից մինչև 27-րդ սիմֆոնիաները գրել է իր կյանքի սովետական շրջանում, համարում եմ սովետական սիմֆոնիզմի իսկական կլասիկը», — գրել է Սարաջևը<sup>1</sup>:

<sup>1</sup> Ն. Պեկոյին գրած Սարաջևի նամակից (ԵԿԿՔ, Սարաջևի արխիվ):

Մենք արդեն ասել ենք, որ ամենից առաջ Սարաջևն է կատարել Մյասկովսկու 2-րդ սիմֆոնիան: Ահա հիմա էլ նա եղավ Մյասկովսկու 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 11-րդ սիմֆոնիաների առաջին կատարողը, այդ պատճառով էլ Մյասկովսկին անվանում էր իրեն «Սարաջևի սանիկը»: Պահպանվել է կոմպոզիտորի լուսանկարը հետևյալ մակագրությամբ. «Թանկագին Կոնստանդին Սոլոմոնովիչ Սարաջևին՝ ի հիշատակ «սանիկից»: Ն. Մյասկովսկի»<sup>1</sup>: 1924 թվականի մարտին Ռեուլյուցիայի թատրոնում, Սարաջևի դիրիժորությամբ տեղի ունեցած սիմֆոնիկ համերգում առաջին անգամ կատարվեց Ս. Պրոկոֆևի Երրորդ դաշնամուրային կոնցերտը Ս. Ֆեյնբերգի մասնակցությամբ, իսկ ավելի ուշ՝ նրա Կլասիկ սիմֆոնիան (1927), Զուբակի կոնցերտը և Սիմֆոնիետան (1929):

1928 թվականի փետրվարին Սարաջևի դիրիժորությամբ Մոսկվայում տեղի ունեցավ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեուլյուցիային նվիրված սիմֆոնիկ համերգ: «Հոկտեմբերյան» ստեղծագործություններից առաջին անգամ կատարվեցին երիտասարդ Դ. Շոստակովիչի 2-րդ սիմֆոնիան՝ «Չոն Հոկտեմբերին», Մոսսուվի «Պողպատ» բալետից մի սյուիտա և այլն: Զի կարելի բարձր չգնահատել Սարաջևի ստեղծագործական վիթխարի ջանքերը, բացառիկ նախաձեռնու-

<sup>1</sup> Այս լուսանկարը կրում է 4—111—1947 թվականը և այժմ պահվում է նրա կնոջ մոտ:

Յյունը, համառությունն ու համարձակությունը և վերջապես մեծ շահագրգռվածությունը սովետական թեմա ունեցող սիմֆոնիկ երկերը պրոպագանդելու գործում: Վերհիշելով այդ համերգը՝ Գ. Շոստակովիչը գրել է.

«Առաջին անգամ Կ. Ս. Սարաջևին ես հանդիպեցի իմ Երկրորդ սիմֆոնիայի («Զոն Հոկտեմբերին») փորձերի ու կատարման ժամանակ Մոսկվայում՝ Հոկտեմբերի 10-ամյակին նվիրված համերգում (1928): Կ. Ս. Սարաջևը խիստ բարյաղակամ և ուշադիր վարվեց ինձ հետ: Փորձերին նա շահագանց մանրակրկիտ էր, բժախնդիր, օգնում էր և ինձ՝ այն ժամանակ դեռ երիտասարդ ու ոչ բավական փորձված կոմպոզիտորիս, իր արժեքավոր խորհուրդներով: Հետագայում ես հաճախ առիթ ունեցա հանդիպելու Կ. Ս. Սարաջևին: Նա վայելում էր երաժիշտների մեծ սերն ու հարգանքը: Արժեքավոր էին նրա ճշմարիտ հետաքրքրությունն ու սերը նոր երաժշտության հանդեպ: Նա անխոնջ կերպով պրոպագանդում էր Ն. Յա. Մյասկովսկու, Ս. Ս. Պրոկոֆևի, Վ. Յա. Շեբալինի և այլ կոմպոզիտորների ստեղծագործությունները, միշտ մանրակրկիտ սերտում էր դրանք, հասու լինում դրանց իմաստին ու հիանալի վերարտադրում այն»:

---

<sup>1</sup> Գ. Շոստակովիչ, իմ հանդիպումները Կ. Ս. Սարաջևի հետ: 1959, (ձեռագիր):

Իր ամբողջ կատարողական գործունեությունը Սարաջևը ակտիվորեն նպաստել է սովետական սիմֆոնիզմում նոր թեմաներ առաջ գալուն: Ճիշտ է՝ այդ տարիներին ստեղծված բավական շատ սիմֆոնիկ գործեր աչքի էին ընկնում գաղափարագեղարվեստական հակասություններով, տառապում էին վերացականությամբ, երբեմն էլ ֆորմալիզմի գծեր ունեին: Սիմֆոնիաներում նոր թեմաների գոյացումը հեշտ չէր տեղի ունենում: Կոմպոզիտորները հարկադրված էին հաղթահարել շատ դժվարություններ: Ուստի և առավել մեծ էր նորարար գիրիվյորի ծառայությունը, քանի որ նա չէր վախենում այդ դժվարություններից, համարձակորեն բաժանում էր դրանք հեղինակների հետ, համարձակորեն ստեղծագործական ոխակի էր դիմում, երբեմն գերադասելով դա այն ապահով հաջողությունը, որ կարելի էր սպասել կլասիկների հավանություն ստացած երկերի կատարումից: Այս պատճառով էլ Սարաջևի այդ տարիների կատարողական գործունեությունը ինչպես մի կաթիլ ջրի մեջ արտացոլում էր սովետական վաղ շրջանի սիմֆոնիկ ստեղծագործության վիճակը, նրա նվաճումներն ու թերությունները, այդ պատճառով էլ սովետական կոմպոզիտորները այդքան սիրում, զնահատում ու հարգում էին նրան:

Կուսավորության ժողովրդական կոմիտարիատը 1926 թվականին (հունվար, փետրվար, մարտ)



Սարաջևին գործուղեց Պրագա ու Վիեննա սովետական կոմպոզիտորների երկերից համերգներ տալու և արտասահմանյան ունկնդրին սովետական երաժրշտական ստեղծագործութեանը ծանոթացնելու համար: Սարաջևը փայլուն կերպով կատարեց այդ միսիան:

Այդ համերգների քաղաքական ու կուլտուրական նշանակությունը նշեց նաև Ա. Վ. Լունաչարսկին «Մի տեղաշարժ արվեստաբանության մեջ» հոդվածում<sup>1</sup>: Սարաջևի դիրիժյորությամբ տեղի ունեցող համերգները միշտ էլ անցնում էին հսկայական հաջողությամբ, լեփ-լեցուն դահլիճում: Իր բարեկամ Պ. Լամին ուղարկած նամակում Սարաջևը գրում էր.

«Իմ սիրելի՛ բարեկամ Պավլուշա

Վերջապես երեկ տեղի ունեցավ առաջին համերգը: Առաջին բաժնում նեեղլին ներածական խոսք ասաց ժամանակակից ոուս երաժշտության մասին, ապա կատարվեց Մյասկովսկու Յոթերորդ սիմֆոնիան, երկրորդ բաժնում՝ Վեցերորդը: Թե՛ ստեղծագործությունների, թե՛ կատարման հաջողությունը հսկայական էր և՛ հասարակության (առաջին բաժնից հետո ինձ բեմ հրավիրեցին 7 անգամ, իսկ վերջանալուց հետո՝ ոչ պակաս 12 անգամ), և՛ երաժիշտների մեջ: Համերգին ներկա էր

<sup>1</sup> Ա. Լունաչարսկի, Մի տեղաշարժ արվեստաբանության մեջ, «Վեստնիկ կոմակադեմիի», Մ., 1926, գիրք XV, էջ 85—107:

ամբողջ մամուլը՝ թե՛ շեխական, թե՛ գերմանա-  
կան. ներկա էին բոլոր կոմպոզիտորները, բալլեր  
դիրիժյորները: Բացակա էր ուսու հասարակություն-  
նը, այսինքն՝ ապուշ վտարանդիները: Այսօր ար-  
գեն գերմանական թերթում լույս է տեսել մի քըն-  
նադատական, որն ուղարկում եմ. ինձ հայտնեցին,  
որ դա գրել է մի խիստ լուրջ քննադատ: Համերգից  
հետո ես տեսակցություն ունեցա շեխական ժողո-  
վրդական օպերայի պետի հետ (նա գլխավոր դի-  
րիժյորն է). հիանալի երաժիշտ է, կոմպոզիտոր՝  
մոդեռնիստներից և տեղական խոշոր հեղինակու-  
թյուն: Ինքը եկավ ինձ մոտ ու ասաց, թե համեր-  
գից դուրս էր եկել այնպիսի զգացողությամբ,  
ասես մաքրման լոգանք էր ընդունել: Նրան ուրա-  
խացնում է այն, որ ուսու երաժշտությունն ընթա-  
նում է իր ուսական ճանապարհով, առանց կա-  
պերը խզելու հին, լավ տրագիցիաներից ու շի են-  
թարկվում Արևմուտքի ժամանակակից հիպնոզոլ  
ազդեցությանը ի դեմս Ստրավինսկու (որին այս-  
տեղ լավ են ճանաչում) և ուրիշ այդպիսիների:  
Մեր լիազոր ներկայացուցչութունում շաբաթ օրը  
իմ պատվին տրվեց թեյասեղան, որին հրավիրված  
էին այստեղի բոլոր ականավոր երաժիշտները,  
պրոֆեսորներ, կոմպոզիտորներ ու քննադատներ՝  
ավելի քան հարյուր մարդ: Ինձ ծանոթացրին  
ամենքի հետ, խոսեցի շատերի հետ և ի վերջո,  
շատերի խնդրանքով, ես ստիպված էի մի փոքրիկ  
զեկուցում կարդալ Սովետական Ռուսաստանի ե-

րաժշտական գործի մասին: Զեկուցում էի, իհարկե, ուսեսրեն: Ինձ լսում էին լւրված ուշադրությամբ ու ագահությամբ՝ որպես մի այլ աշխարհից եկած մարդու: Երկու հոգի գրի էին առնում իմ խոսքերը, և հետո այդ ամենը թարգմանվեց շեխերեն ու գերմաներեն»<sup>1</sup>:

Մի այլ նամակում Սարաջևը գրում է.

«Ես ստիպված էի մի քանի անգամ զեկուցում կարդալ «ուսական» թեմաների մասին, որոնք, ինչպես ասացին ինձ, ոչ միայն հաջող էին, այլև խիստ արժեքավոր քաղաքական տեսակետից, ինչպես ասաց ինձ լիազոր ներկայացուցիչը, դա առանձնակի նշանակութուն ունի այժմ, երբ լուծվում է Սովետական Ռուսաստանը ճանաչելու հարցը»<sup>2</sup>:

Արտասահմանյան մամուլը բարձր գնահատեց Սարաջևի դիրիժյորական վարպետութունը, հետաքրքրությամբ ընդունեց կատարված ստեղծագործութունները՝ Մյասկովսկու 6-րդ և 7-րդ, Գեդիկի 3-րդ սիմֆոնիաները, Կնիպերի, Մելկիխի և ուրիշների գործերը:

«Պրագեր տագերլաթ» թերթը 1926 թ. հունվ. 25-ի համարում շեշտում էր, որ «Նոր Ռուսաստանի երաժշտութունը համարյա հայտնի չէր. երա-

<sup>1</sup> Սարաջևի կամին գրած 1926-ի հունվարի 21 թվակիր նամակից: ԵԿԿԹ:

<sup>2</sup> Սարաջևի կամին գրած 1926-ի փետրվարի 3 թվակիր նամակից: ԵԿԿԹ:

ժըշտական գործը պրոպագանդելու արժանիքը պատկանում է Սարաջևին»: «Պրավո լյուդու» թերթը դարձյալ նույն օրվա իր համարում գրում էր. «Հասարակությունը ջերմորեն ընդունեց դիրիժյորին... Նրա ղեկավարությամբ սքանչելի էր հնչում Ֆիլհարմոնիայի նվագախումբը: Նա կարողացավ նվագախումբը հասցնել գեղարվեստական բարձր դրսևորումների»: «Չեշսկի սվետ» թերթը նշում էր, որ «Սարաջևը իսկապես ցույց տվեց իրեն որպես ժամանակակից ուս երաժշտության լավագույն մեկնաբանը»:

Երկու օր հետո պրոֆեսոր Նեեդլին «Ռուդե պրավո» թերթում գրում էր. «Վերջապես մեզ մոտ եկավ դուսական երաժշտությունը՝ ռևոլյուցիայից ծնված երաժշտությունը: Մյասկովսկու երաժշտության մեջ հրապուրիչ է ծայրահեղ լրջությունը, ձևոնաժողովյան և կրկեսային համարների բացակայությունը: Ընդհանրապես ուս նոր երաժշտության այս բնորոշ գծերը հակակշռում են Ռուսաստանի կուլտուրական անկման մասին Արևմուտքում արվող խոսակցությունների: Այդ երաժշտությունը բարոյապես մաքուր է ու գեղարվեստական՝ ի հակադրություն Արևմուտքի նեխած երաժշտության: Մյասկովսկու VI սիմֆոնիան նրա լավագույն գործն է... Սարաջևի անձանձիր մեկնաբանությունը թույլ տվեց թափանցել գեղարվեստական այդ ստեղծագործության էություն մեջ ու դրանից զգալի շափով աճեց ընդհանրապես այդ

համերգին բնորոշ լրջության տպավորությունը»<sup>1</sup>։

Պրագայում ու Վիեննայում տեղի ունեյած սովետական երաժշտության համերգներին ունկընդիրներ էին եկել զանազան քաղաքներից։ Այդ համերգների արձագանքը այնքան մեծ էր, որ Սարաջևի ղեկավարությամբ հնչած ստեղծագործություններից մի քանիսը (մասնավորապես Մյասկովսկու Վեցերորդ սիմֆոնիան) դրանից հետո կատարեցին տարբեր նվագախմբեր Արևմտյան եվրոպայի ու Ամերիկայի քաղաքներում։

1931—1932 թատերաշրջանում Սարաջևը հաջողությամբ ղեկավարեց համերգների մի ցիկլ՝ վորոնեժ քաղաքում, «...ծավալելով շափաղանց լուրջ աշխատանք, որը նվագախմբի անդամները մեծ հարգանքով են հիշում մինչև այսօր»<sup>2</sup>։

Այդտեղ Սարաջևը կատարում էր մասնավորապես Բեթհովենի բոլոր սիմֆոնիաները (բացի 9-րդից), Բեռլիոզի «Բենվենուտո Չելլինի»-ն, Պրոկոֆևի սիմֆոնիկ ստեղծագործությունները, Չայկովսկու բոլոր սիմֆոնիաները։ Առաջին անգամ այդտեղ կատարվեց նաև Չայկովսկու 1930 թվականին հայտնաբերված «Ֆանտազիա C-moll»-ը։

Չեռնամուխ լինելով վորոնեժում սիմֆոնիկ համերգները ղեկավարելուն՝ Սարաջևը մշակեց

<sup>1</sup> «Ռուզկե պրավո», 28 հունվարի, 1926։

<sup>2</sup> Կապլինսկի, վորոնեժի սիմֆոնիկ նվագախմբի տաս տարին, վորոնեժ, 1935, էջ 38 (ոտաներն)։

բոլոր մանրամասնություններով մտածված մի վերին աստիճանի հետաքրքրական ու բազմազան պլան, որտեղ նա գրել է, որ այդ համերգները «... նպատակ ունեն օգնել մասսայական ունկընդորին տիրապետելու կուլտուրական, երաժշտական ժառանգությանը, հսկայական նյութ են տալիս նրան սոցիալ-պատմական ու գեղարվեստական եզրակացությունների համար, իսկ այդ հարցում նրան, իհարկե, պետք է օգնեն ներածական խոսքն ու բացատրությունները... Ամփոփելով մեր խոսքը՝ անհրաժեշտ է նշել, որ այդ պլանի կատարումը (որի թափը գերազանցում է անգամ մաշրաբազաքների համերգային հատուկ կազմակերպությունների կիրառած սովորական աշխատանքի ծավալից) պահանջում է գործի բոլոր մասնակիցների համերաշխ ու լարված աշխատանքը ու բանվորական հասարակայնության զորեղ պաշտպանությունը»<sup>1</sup>:

Դժվար է գերազնահատել Սարաջևի ներդրած ավանդը երաժշտական ինքնագործունեության զարգացման ասպարիզում: 1924 թվականին նա գլխավորել է իր իսկ ակտիվ մասնակցությունը հենց նոր հիմնադրված սիրողների սիմֆոնիկ նվագախումբը, որ աշխատում էր նախ Լոմոնոսովի անվան Մեխանիկա-էլեկտրատեխնիկական ինստի-

<sup>1</sup> Կ. Սարաջև, Ձեկուցում վորոնեծի սիմֆոնիկ համերգների գեղարվեստական-բազաբական խորհրդում: Եկկթ (Սարաջևի արխիվ):

տուտում, ապա Մոսկվայի բարձրագույն տեխնի-  
կական ուսումնարանում և վերջապես Նոգինի ան-  
վան ակումբում: Սարաջեր ահագին անշահախըն-  
դիր ճիգ ու ջանք, անկեղծ հափշտակութուն է  
ներդրել այդ նվագախմբում (ինչպես նաև Մոսկ-  
վայի զինվորական օկրուգի նվագախմբում) ու  
հասցրել դա բարձր պրոֆեսիոնալ մակարդակի:  
Նվագախմբի աշխատանքի մեջ նա ներգրավում էր  
նաև դիրիժյորական իր դասարանի աշակերտնե-  
րին: Իր գոյության տարիներին այդ ինքնագործ  
նվագախումբը հանդես գալով բանվորական ա-  
կումբներում, ֆարբիկաներում ու գործարաննե-  
րում, ուսումնական հաստատություններում՝ տվել  
է դասական և սովետական սիմֆոնիկ ստեղծագոր-  
ծություններից կազմված ավելի քան հարյուր հա-  
մերգ: Այդ խոշոր ու բեղմնավոր աշխատանքը  
նպատակ ուներ իրագործել «Երաժշտությունը մաս-  
սաներին» լոզունգը:

«Այդ նվագախմբի կատարմամբ լսելով խիստ  
դժվարին պարտիտուրաներ, — գրել է «Տրուդ»  
թերթը, — չես հավատում, որ դա սիրողների մի  
կողեկաթիվ է, որոնք վաղը առավոտից կգնան աշ-  
խատելու տրեսաներում ու կոմբինատներում:  
Նվագախումբը իր ներդաշնակ նվագով ու գեղար-  
վեստական հասունությամբ շի զիջում պրոֆեսիո-  
նալ սիմֆոնիկ նվագախմբի»: Այդ նվագախմբի  
աշխատանքին Սարաջեր մոտենում էր ամենայն  
լրջությամբ ու գեղարվեստական պատասխանա-

տվությամբ: Նվազախամբի անդամին նա ներարկում էր լուրջ երաժշտության, սիմֆոնիկ ստեղծագործության գեղարվեստապես արժեքավոր նմուշների սեր ու ճաշակ: Իր հսկայական հեղինակությամբ, խստապահանջությամբ, հետաքրքրել կարողանալով նա ստեղծեց նվազախամբի օրինակելի կարգապահություն, որը հնարավորություն ընձեռեց նրան հասնելու գեղարվեստական գերազանց արդյունքների:

Այդ նվազախամբը լիովին ապացուցեց ինքնագործ սիմֆոնիկ նվազախամբերի գոյության հնարավորությունն ու անհրաժեշտությունը՝ դրանով իսկ սկզբնավորելով ուրիշ այդպիսի կոլեկտիվների առաջ գալը: Նա դարձավ մայրաքաղաքի 20-ական թվականների երկրորդ և 30-ական թվականների երկրորդ կեսերի երաժշտական կուլտուրայի յուրօրինակ ու խիստ հետաքրքիր օջախներից մեկը:

Երկու անգամ՝ 1929 և 1934 թվականներին նրա վեցին նվազախամբի գործունեության հորելյանական տարելիցները (հնգամյակն ու տասնամյակը): Նվազախամբը կոչվեց «Պրոֆ. Կ. Ս. Սարաջևի» անվամբ: Նվազախամբի աշխատանքում Սարաջևի ունեցած հատուկ ծառայությունը նշվեց օրկեստրի հորելյանի առթիվ մամուլում ըույս տեսած հոդվածներում<sup>1</sup>:

<sup>1</sup> «Իզվեստիա», «Պրավդա» թերթերում և «Մուզիկա ի ռեպուբլիկա», «ժիզն իսկուստովա», «Սովրեմեննայա մուզիկա» հանդեսներում:

Großer  
Musikvereins-  
Saal



Montag  
1. März 1926  
halb 8 Uhr

Österr. Gesellschaft zur Förderung der geistigen  
und wirtschaftlichen Beziehungen mit Rußland

# SINFONIE-KONZERT

Dirigent:

Prof. **Constantin Saradjew**  
(Moskau)

Mitwirkend:

**Der Philharmonische Chor**  
**Das Wiener Sinfonie-Orchester**

**Neue russische Musik**

PROGRAMM:

Nicolai Miaskowsky

VI. Sinfonie op. 23.

*Poco largamente — Allegro feroce,  
Presto tenebroso,  
Andante Appassionato,  
Allegro vivace.*

(Erstaufführung in Wien.)

**Vorher:**

Beethoven

Konzert C-moll.

*Moderato,  
Adagio sostenuto,  
Allegro scherzando.*

Klavier: **Ella Kugel.**

Klavier: Bösendorfer.

Karten an der Musikvereinskasse.


Stein & Steiner, Wien

Կ. Ա. Սարաճյանի ղեկավարությամբ սիմֆոնիկ  
համերգի ամբիշք:  
Վիեննա 1926 թ.:



Կ. Ս. Սարգսյանը և Արամ Խաչատրյանը:

Նվագախմբի տասնամյա հորեկյանի առթիվ  
 Ռ. Մ. Գլիերը գրեց «Սիմֆոնիկ ֆրագմենտ», իսկ  
 Մյասկովսկին, Ալեքսանդրովը, Շերալինը, Նեչաևը,  
 Շենշինն ու Մելկիխը գրեցին «Saradgef» սյուիտը:



Սյուիտը կազմված էր վեց մասից՝ Պրելյուդ  
 (հեղ. Մյասկովսկու), Քալլերո (Ալեքսանդրովի),  
 Բնուերմեցցո (Շենշինի), Մենախոսուժյուն (Մել-  
 կիխի), վալս (Նեչաևի) և Ռոնդո (Շերալինի):

Այս թուր ստեղծագործությունները կատարվե-  
 ցին հորեկյանի օրը՝ Սյունազարդ դահլիճում տե-  
 ղի ունեցած համերգում: Հորեկյանի օրը թողարկ-  
 վեց հատուկ կրթաանշան, որի վրա պատկերված էր  
 վերոհիշյալ «Saradgef» երաժշտական թեման:

Սարաջևը հիրավի այրվում էր աշխատանքում՝  
 շուրջաբար տալով իր բոլոր ուժերն ու գիտելիք-  
 ները սովետական երաժշտական կուլտուրայի պրո-  
 պագանդին, ձեռք բերելով սովետական բազմաթիվ  
 կոմպոզիտորների սերն ու հարգանքը: Կոնստան-  
 դին Սոլովոյովիչի բեղմնավոր գործունեության  
 ապացույցն է այն նամակը, որ մի խումբ կոմպո-  
 ղիտորներ գրեցին ՌՍՖՍՌ Լուսավորության Ժող-  
 կոմատի արվեստի սեկտորին առ այն, որ իրենք  
 1931—1932 համերգային սեզոնի Մոսկվայի ֆիլ-  
 հարմոնիայի համերգներին մասնակցողների ցու-

ցակում չէին գտել «...սովետական ամենից ավելի ականավոր երաժիշտներից մեկի՝ դիրիժյոր Կ. Ս. Սարաջևի անունը»: Իրենց զարմանքն արտահայտելուց հետո նրանք ավելացնում էին, որ Սարաջևը «ամենատրակչալ, տաղանդավոր ու փորձառու դիրիժյորներից մեկն է», օժտված «երաժշտական գրականության արտասովոր, բացառիկ իմացությամբ», «... ականավոր մանկավարժ է, սովետական դիրիժյորական կադրերի ստեղծողը...» և «ոչ հանիրավի համարվում է ռուսական երաժշտական արվեստի առաջընթաց շարժման մեջ խոշոր դեր կատարած երաժիշտ...»: Նրանք ընդգծում էին նրա գործունեության նշանակությունը՝ պրոպագանդել «հոծ մասսաներում երաժշտական ժառանգությունն ու սովետական ստեղծագործությունը» և գտնում էին անպայման անհրաժեշտ Սարաջևին ներգրավել Մոսկվայի Ֆիլհարմոնիայի աշխատանքի մեջ, մանավանդ հիմա, «այն դժվարությունների կապակցությամբ, որոնք կծագեն և արդեն ծագել են համերգային կազմակերպությունների առաջ Պարտիայի ապրիլի 23-ի որոշումը կոնկրետացնելու գործում...»<sup>1</sup>:

Այս նամակը ստորագրել էին կոմպոզիտորներ Մյասկովսկին, Պոլովինկինը, Շերալինը, Ա. Ալեք-

<sup>1</sup> Նամակի պատճենը պահվում է ԵԿԿՑ-ում (Սարաջևի արխիվ): Խոսքը վերաբերում է ՀամԿ(բ)Պ Կենտկոմի «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» 1932 թվականի ապրիլի 23-ի որոշմանը:

սանդրովը, Շոստակովիչը, Ֆեյնբերգը, Մելկիխը,  
Իվանով-Ռադկևիչը, Ռախովը և Նեչաևը:



1935 թվականին Սարաջևի կյանքի ու գործու-  
նեռության մեջ սկսվեց մի նոր շրջան: Սովետա-  
կան Հայաստանի ղեկավար մարմինների հրավե-  
րով նա տեղափոխվեց Երևան, ուր և ապրեց մին-  
չև իր կյանքի վերջը: Մի նոր, բոլորովին երիտա-  
սարգական հափշտակությամբ նա լծվեց գործի:  
Կարելի է ասել, թե Սովետական Հայաստանում  
չկար երաժշտական կուլտուրայի մի բնագավառ,  
ուր հանդես չգար նրա արդյունավետ ու եռանդուն  
մասնակցութունը:

Կոնստանդին Սարաջևի ճակատագիրն այնպես  
դասավորվեց, որ նա իր կյանքի վեցերորդ տաս-  
նամյակի շեմքին հասնելուց հետո միայն եկավ իր  
հայրենիքը, ուր դեռ պատանեկան տարիներից խո-  
հերն ու երազանքները տանում էին նրան: Բայց  
նա Հայաստան եկավ իր տաղանդի ու ստեղծա-  
գործական ուժերի կատարյալ ծաղկման շրջանում,  
հսկայական կենսափորձով ու ընդարձակ գիտե-  
լիքներով հարստացած:

Հայաստան տեղափոխվելուց անմիջապես հետո  
Սարաջևը ստանձնեց մի երկու տարի առաջ հիմ-  
նադրված Պետական օպերայի ու բալետի թատ-  
րոնի երաժշտական ղեկավարի ու գլխավոր դի-

րիժյորի պաշտոնը: Այդ թատրոնում Սարաջևը աշխատեց մինչև 1939 թվականը՝ ահագին բան անելով կուլեկտիվի պրոֆեսիոնալ վարպետության մակարդակը բարձրացնելու, օպերային ու բալետային ռեպերտուարը ճոխացնելու համար:

«Կ. Ս. Սարաջևի առաջին իսկ հանդիպումը թատրոնի նվագախմբի հետ, ուր ես աշխատում էի որպես առաջին ջութակների կոնցերտմեյստերի տեղակալ, «Կարմեն» օպերայի ստուգողական փորձին, նվագախմբի արտիստների մեջ մեծ հարգանք ու վստահություն առաջացրեց Կոնստանդին Սոլոմոնովիչի նկատմամբ՝ շնորհիվ նրա հստակ, ոգեշնչված աշխատանքի, Բիզեի հանճարեղ երաժշտության խորապես մտածված բացահայտմանը,— գրում է իր հուշերում դիրիժյոր Ռ. Ստեփանյանը:— Չնայած չորսժամյա լարված ու բժախանդիր աշխատանքին՝ մենք նվազագույն հոգնություն իսկ չզգացինք, որովհետև Կոնստանդին Սոլոմոնովիչը նվագախմբի հետ պարապում էր վարպետորեն՝ աշխույժ ու հափշտակված: Փորձի կարծես «ամենատաղտկալի» պահերին (տեխնիկապես դժվար սերտվող որևէ հատվածի կամ փողային գործիքները մաքրելու ժամանակ) Կոնստանդին Սոլոմոնովիչը մի սրամիտ ու դիպուկ կատակով նորից էր նվագախմբին աշխատելու տրամադրում: Հաճախ փորձի ժամանակ նա մեզ օգնում էր հասնելու կատարման ավելի բարձր որակի՝ թելադրելով նվագելու հարմար ձևեր

(մատնագրում, շտրիխներ, շնչառություն և այլն) և այդ ժամանակ մենք տեսնում էինք, թե որքա՞ն քաջ է նա իմանում յուրաքանչյուր գործիքի տեխնիկական հնարավորություններն ու բնույթը: Ահա այսպիսի աշխատանքը անմիջապես արտացոլվում էր կատարման որակի վրա: Նվագախումբը բառի բուն իմաստով կերպարանափոխվում էր. հյուսիսի «երգում էին» լարային գործիքները, իսկ փողայինները ստանում էին մեղմ «երգահոնային» հրնչեղություն: Ի մի վերցրած՝ նվագախումբը հնչում էր լիարյուն ու հուզաթաթալ: Հետագայում ես բազմիցս համոզվեցի նրա աշխատանքի դարմանալի արդյունավետությանը: Նրա փորձերին կամ այլ պարապմունքներին ու դասերին, բացի տվյալ երկը սերտելուց, կատարողները միշտ էլ ձեռք էին բերում նվագելու ու երգելու ինչ-որ նոր ունակություններ, ինչպես նաև ընդհանուր երաժշտական կուլտուրա»<sup>1</sup>:

Սարաջևի անմիջական բեմագրություններից աչքի էին ընկնում Բիզեի «Կարմեն», Դարգոմիժսկու «Ջրահարս», Տիգրանյանի «Անուշ», Հ. Ստեփանյանի «Քաջ Նազար» օպերաները, Ասաֆևի «Բախչիսարայի շատրվան», Ա. Խաչատրյանի «Երջանկություն» բալետները և այլն: «Երջանկություն» բալետի նվագախումբը ղեկավարեց Սարա-

1 Ռ. Ստեփանյան, Հուշեր իմ սիրելի ուսուցչի մասին: 1959, (ձեռագիր):

ջեր նաև Մոսկվայում 1939 թ. տեղի ունեցած Հայ արվեստի տասնօրյակում՝ ՍՍՌՄ Մեծ թատրոնում:

Անդրադառնալով «Երջանկություն» բալետի վրա կատարած իր աշխատանքին՝ Ա. Խաչատրյանը գրել է. «Հաճախ էր Կ. Ս. Սարաջեր ղեկավարել իմ ստեղծագործությունների կատարումը: Սակայն առանձնապես մոտիկից շփվեցի ես նրա հետ ստեղծագործական աշխատանքի պրոցեսում, էրբ Երևանի օպերայի ու բալետի թատրոնում ստեղծվում ու բեմադրվում էր իմ առաջին՝ «Երջանկություն» բալետը: Այդ աշխատանքն ընթանում էր շափազանց ինտենսիվորեն ու ասես կոնվեկտորով: Պարտիտուրայի այն մասերը, որ ես գրել էի, անմիջապես հանձնվում էին Կ. Ս. Սարաջեին, և ես անհապաղ կարող էի լսել դրանք իրական հնչեղությամբ, անել անհրաժեշտ ուղղումներ, ճշտումներ ու լրացումներ: Կատարումը բառի բուն նշանակությամբ «կրնկակոխ» հետևում էր հորինմանը: Կոնստանդին Սոլումոնովիչը մեծ հմտությամբ, փորձառությամբ, իսկական վարպետությամբ էր ղեկավարում նվագախումբը, որը հրաշալի էր հնչում: Զութակների կոնցերտմեյստերը այն յամանակ հիանալի ջութակահար Ավետ Գաբրիելյանն էր, ալտերինը և թավջութակներինը՝ նրբաճաշակ երաժիշտներ Մ. Տերյանն ու Ս. Ասլամազյանը: Կ. Ս. Սարաջեր կարողանում էր զարմանալի նրբազգացությամբ գնահատել նոր ստեղծագործությունները, արժեքավոր խորհուրդներ ու

անհրաժեշտ դիտողություններ անել դրանց վերաբերյալ: Իսկ երբ մի որևէ բան նրա սրտով էր լինում, նա հրճվում էր պատանեկան անմիջականությամբ: Դա ոգեշնչում էր ինձ: Ես ու Կ. Ս. Սարաջևը ահագին ու դժվարին աշխատանք ունեինք: Կոնստանդին Սոլոմոնովիչը հանդես էր բերում մեծ նախաձեռնություն, արտիստական տաղանդ, հիրավի վիրտուոզ վարպետություն, նվագախմբի հիանալի ճանաչողություն: Դրա հետ նաև նա երբևից իր ճաշակը չէր հարկադրում, հաշվի էր առնում հեղինակի մտադրությունը և շարունակ հարցնում էր, թե իր կատարումը համապատասխանո՞ւմ է արդյոք իմ մտահղացմանը»<sup>1</sup>:

Արդեն այն ժամանակ, «Երջանկություն» բալետի վրա աշխատելիս, Սարաջևը կարողացավ դնահատել Ս. Խաչատրյանի այս նոր ստեղծագործության գեղարվեստական բարձր արժանիքները: Նա տեսնում էր դրանք թե՛ սովետական իրապանության հետ կապված բովանդակության և թե՛ երաժշտության ժողովրդական բնույթի, ազգային կոլորիտի մեջ:

«Երջանկություն» բալետը ամբողջովին վերցրած՝ լինելով վառ արտահայտված ազգային կոլորիտ ունեցող մի ստեղծագործություն, իր ֆարուլայով այնքան արդիական է, որ անկասկած հա-

<sup>1</sup> Ս. Խաչատրյան, Իմ հանդիպումները Կ. Ս. Սարաջևի հետ: 1959, (ձեռագիր):

վասար հետաքրքրությամբ և ուշադրությամբ դիտվելու է մեր ամեն մի եզրայրական ռեսպուբլիկայում, — գրել է նա... — Այս ստեղծագործությունը հայերի համար առանձնապես արժեքավոր է. դա ստեղծագործական արգասիքն է հայ կոմպոզիտորի, որը մշակել է ժողովրդական-ազգային պարերի առավելապես մասսայական մոտիվները, տվել դրանց վառ, գունագեղ նվագախմբային հնչեղութուն... Ժողովրդական մոտիվները (հայկական, ռկրաինական ու ռուսական) մշակելիս կոմպոզիտորն ստեղծել է իր թեմաները, որոնք ուղեկցում են (կոնտրապունկտում են) ժողովրդական թեմաներին: Այս թեմաները տճականորեն աջնատիճան ազգակից են, որ դրանց օրգանական միաձուլությունը (կոռնկների պարը, հոպակը, ռուսական պարը) զմայլեցնում է ու հիացմունք պատճառում»<sup>1</sup>:

Կոնստանդին Սարաջևը սիրում էր պատմակուլտուրական անալոգիաներ կատարել, կապակցել, հետաքրքրական և յուրօրինակ եզրակացություններ անել, երևան հանել նշանակալից փաստեր: Հայ արվեստի տասնօրյակին Մոսկվայի Մեծ թատրոնում իր հանդես գալու մասին արդեն շատ տարիներ անց նա պատմում էր տողերիս հեղինակին. «Գիտեք ինչ, դեռևս 1906. թվականին ես Ս.

<sup>1</sup> Կ. Սարաջև, «Երջանկություն» բալետի մասին: «Երջանկություն» ժողովածու (ռուսերեն), Մ., 1939, էջ 14:

Ռախմանինովից հրավեր ստացա՝ դիրիժյորի պաշտոնն ստանձնելու Մեծ թատրոնում: Բայց այն ժամանակ ստիպված էի հրաժարվել՝ վախենալով վերին աստիճանի դժվարին ու աննպաստ պայմաններից (ղեկավարելու էի Օբերի «Ֆրա Դիալոլո» օպերան, որը ես լավ չէի իմանում, հենց մի փորձով, ըստ կլավիրի, մանավանդ որ գլխավոր պարտիան կատարելու էր, առանց փորձի, Ֆիգները): Եվ ահա 33 տարի անց իմ փափագն իրականացավ. ես կանգնած էի երկրի լավագույն երաժրշտական թատրոնի դիրիժյորական պոլիտի առաջ: Բայց ինձ հուզողը միայն դա չէր: Ես հիշեցի, թե ինչպես համարյա հիսուն տարի առաջ ստիպված էի դանազան թերուսների ապացույցել, որ հայերը ունեն իրենց երաժշտությունը: Իսկ այժմ ես հանդիսատես եղա, թե ինչպես լեփ-լեցուն հանդիսասրահը հիացմունքով է ընդունում հայկական «Երջանկություն» բալետի սքանչելի երաժշտությունը, ասենք ոչ միայն դրա, այլևս մեր ողջ տասնօրյակինը, որ ինքնին Սովետական Հայաստանի արվեստի բուն ծաղկման հրաշալի դրսևորումն էր»:

«Երջանկություն» բալետին նվիրված ժողովածուում Սարաջևը գետեղել է մի հոդված «Երջանկություն» բալետի մասին», որի մեջ ուրվագծել է այդ ստեղծագործության արժանիքները<sup>1</sup>:

<sup>1</sup> Կ. Սարաջև, «Երջանկություն» բալետի մասին: «Երջանկություն» ժողովածու (ոտաերեն): Մ., 1939, էջ 14:

Տակավին 1913 թվականից, «Ազատ թատրոն»-ում աշխատելու շրջանից, Սարաջևը մոտիկից ծանոթ էր մեր նշանավոր նկարիչ Մարտիրոս Սարյանի հետ:

«Հաճախ էի ես տեսել նրան դիրիժյորական պոզիտի առջև, — գրում է Մ. Սարյանը իր հուշերում, — երբ նա կատարում էր դասական երաժշտութային ստեղծագործությունները և սովետահայ կոմպոզիտորների հեղինակությունները: Ինձ գրավում ու դուր էր գալիս դիրիժյորելու նրա մաները. արտաքուստ «կլասիկ» զսպվածությունը, կենտրոնացածությունը և կարգապահությունը զուգորդվում էին ներքին ուժեղ կամքի, ավյուրի և ուժանտիկական հուզվածության հետ: Հաճե՛լի է ինձ հիշել, որ Կոնստանդին Սուլումոնովիչը հեռաքրքրվում էր նաև իմ նկարչությանը ու սիրում էր իմ նկարներից շատերը:

Ես հանդիպում էի նրան նաև 1939 թվականին Մոսկվայում կայանալիք Հայ արվեստի ու գրականության տասնօրյակի պատրաստման ու հենց տասնօրյակի ժամանակ: Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան, որ ցուցադրվեց տասնօրյակի ընթացքում, ես էլի գեղարվեստապես ձևավորել: Իսկ Կոնստանդին Սուլումոնովիչը Ա. Խաչատրյանի «Երջանկություն» բալետի դիրիժյորն էր: Պետք է ասեմ, որ գերազանց ու փորձված երաժիշտ Կոնստանդին Սուլումոնովիչը շատ բանով նպաստեց բալետի հաջող կատարմանը:

Վաղուց էի ուզում նկարել Կոնստանդին Սուլ-  
մոնսովիչին: Սովորաբար ես սկսում եմ որևէ մեկի  
նկարել միայն այն ժամանակ, երբ իմ գիտակցու-  
թյան մեջ արդեն հստակ պատկերացում է կազմը-  
վում այն մարդու ներքին՝ հոգեկան կերպարանքի  
մասին, որին ուզում եմ պատկերել կտավի վրա:  
Նրան լավ ճանաչելու համար հետևում եմ ու  
զրոճյց սկսում նրա հետ իրեն ամենից ավելի հու-  
զող նյութի մասին: Ամենից առաջ ինձ հետաքրք-  
րում է անձնավորության ներքին բովանդակու-  
թյունը, բնավորությունը, հետո արդեն, իհարկե,  
նաև նրա արտաքին գրսևորումները ժեստերով,  
միմիկայով և այլն:

Այդպես եղավ նաև Կ. Ս. Սարաջևի հետ: Երբ  
1940 թվականին ես նկարեցի նրան, նա շնորհեց  
իմ դիմաց, ես էլ «չընդօրինակեցի»: Ես արդեն  
ճանաչում էի նրան որպես մարդու, գիտեի նրա  
հոգեկան աշխարհը, նրա շահագրգռությունները,  
խառնվածքն ու բնավորությունը: Երբ նա գալիս էր  
իմ արվեստանոցը, մենք սովորականի պես խո-  
սում էինք զանազան նյութերի մասին: Նա շատ  
լավ էր պատմում և դիտեր լավ էլ լսել: Լինելով  
տաքարյուն ու հափշտակվող՝ նա շուտով բոլորո-  
վին մոռանում էր և՛ նկարը, և՛, իհարկե, նաև որևէ  
հատուկ կեցվածք ընդունելը: Ես ջանացի նկա-  
րում դրոշմել Կոնստանդին Սուլմոնսովիչի կերպա-  
րանքը ամենից առաջ որպես ներքին մեծ ոգեշնչ-  
մամբ օժտված մարդու, խորաթափանց ու նրբա-

զգաց երաժիշտի: Ես ձգտեցի վերարտադրել դա  
և՛ նրա ամբողջ կերպարանքում, և՛ մանավանդ  
մտախոհ, ասես թախծի թեթև շղարշով ծածկված,  
բայց և միաժամանակ մի փոքր ժպտուն աչքերում,  
ինչպես նաև դիրիժյորի արտահայտիչ, խիստ  
պլաստիկ ձեռքում:

Կ. Ս. Սարաջևի հետ ես հանդիպումներ էի ունե-  
նում հետագայում ևս՝ Հայրենական Մեծ պատե-  
րազմի խստաշունչ տարիներին և դրանից հետո:  
Իմ հիշողության մեջ առհավետ մնացել է նա որ-  
պես մի հիանալի՝ ու շափազանց հետաքրքիր մարդ  
ու տաղանդավոր երաժիշտ: Այդ «կենդանի հիշո-  
ղության» մի մասնիկը ես՝ պահել եմ նաև Կ. Ս.  
Սարաջևի իմ նկարած դիմապատկերում<sup>1</sup>:

Հսկայական ավանդ մտցրեց Սարաջևը հայ սիմ-  
ֆոնիկ երաժշտության զարգացման գործում: Սրտը  
ժամանակ նա Հայֆիլհարմոնիայի գեղարվեստա-  
կան ղեկավարն էր ու գլխավոր դիրիժյորը, իսկ  
հետո պարզապես կանոնավորաբար համերգներ  
էր տալիս: Սարաջևը Հայաստանի ունկնդիրներին  
ծանոթացրեց դասական ու սովետական երաժշտու-  
թյան բազմաթիվ ստեղծագործություններին: Հա-  
յաստանում Սարաջևի կատարած գործերից են մո-  
ցարտի, Հայդնի, Շուբերտի, Շումանի սիմֆոնիա-  
ները, Բեռլիոզի, Վագների երկերը, Բեթհովենի

1 Մ. Սարյան, Մի էջ Կ. Ս. Սարաջևի մասին, ունեցած իմ  
հուշերից: 1959 թ, (ձեռագիր):

(բացի 9-րդից), Չայկովսկու բուր, Մյասկովսկու  
Հինգերորդ և Քսաներկուերորդ սիմֆոնիաները,  
Շոստակովիչի, Պրոկոֆևի ստեղծագործությունե-  
րը: Մեծ հետաքրքրությամբ էր նա հետևում երի-  
տասարդ հայ սիմֆոնիկ կուլտուրայի զարգացմա-  
նը: Եվ ոչ միայն հետևում էր, այլև ակտիվորեն  
մասնակցում էր դրան, իր օգտակար խորհուրդնե-  
րով մշտապես օգնում երիտասարդ կոմպոզիտոր-  
ներին ու կատարում, նրանց գործերը: Սարաչևը  
Ալ. Սպենդիարյանի, Ա. Խաչատրյանի, Ն. Տիգրան-  
յանի ստեղծագործությունների եռանդուն պրոպա-  
գանդիստն էր, Հ. Ստեփանյանի, Ա. Հարություն-  
յանի, Ա. Բաբաջանյանի, Է. Միրզոյանի և ուրիշ-  
ների շատ գործերի առաջին կատարողը:

Երիտասարդ կոմպոզիտորներն էլ շարունակ խոր  
հարգանքով, սիրով ու երախտագիտությամբ էին  
վերաբերվում նրան:

«Կոնստանդին Սուլումոնովիչը մեզ՝ երիտասարդ  
հայ կոմպոզիտորներին համար լոկ ուսուցիչ չէր:  
Նա մեզ էսթետիկական հաստատուն չափանիշեր  
ու բարոյական սկզբունքներ տվող հոգևոր հայր  
էր»<sup>1</sup>:

Կոնստանդին Սուլումոնովիչը թե՛ կոնսերվատո-  
րիայում, թե՛ տանը մշտապես շրջապատված էր  
երիտասարդ կոմպոզիտորներով, դիրիժորներով,

---

<sup>1</sup> Ալ. Հարությունյանի, Ա. Բաբաջանյանի և Է. Միրզոյանի  
հետ սույն տողերի հեղինակի ունեցած զրույցից:

նվագողներով: Նա հավատում էր երիտասարդ սերնդին, համարձակորեն ներգրավում էր երիտասարդութեանը մանկավարժական աշխատանքի մեջ, օգնում էր նրան: Թե ինչպես էին երիտասարդ երաժիշտները վերաբերվում նրան, կարող ենք տեսնել այն ժամանակ Մոսկվայի կոնսերվատորիան ավարտող կոմպոզիտոր Ղ. Մ. Սարյանի նամակից.

«Թանկագիր՛ն Կոնստանդին Սոլովոևովիչ, սըրտագին շնորհակալ եմ Ձեզ Ձեր հոգատար վերաբերմունքի համար: Ես ամեն ջանք կթափեմ, որպեսզի առավելագույն չափով օգտակար լինեմ այն ասպարեզում, որ Դուք վստահում եք ինձ: Երիտասարդ կադրերին մանկավարժութեան ասպարեզ ներգրավելու Ձեր գաղափարը հիանալի է, միայն թե մենք պարտավոր ենք այնպես անել, որ ամօթով չմնանք»<sup>1</sup>:

Բազմիցս ու մեծ խանդավառությամբ էր նվագախումբը ղեկավարում Սարաջևը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Իր բոցաշունչ ու ոգեշնչված արվեստով նա ջանում էր սեփական լուսան մտցնել ժողովրդի ընդհանուր ջանքերի մեջ: Ռեսպուբլիկայի ինտելիգենցիայի ժողովներում հանդես գալիս, անձնական զրույցների ժամանակ նա զայրույթով էր խոսում ֆաշիստական

1 Ղ. Մ. Սարյանի Կ. Սարաջևին գրած 1950 թ. մայիսի 17 թվակիր նամակից: ԵԿԿԹ (Սարաջևի արխիվ):

զավթիչներին՝ Սովետական Միության վրա կատարած ուխտադրուժ հարձակման մասին: Նրա խոսքերը մշտապես համակված էին ջերմ հայրենասիրուժյամբ, սովետական ժողովրդի վերջնական հաղթանակի հավատով: Սովետահայ ինտելիգենցիայի խոշորագույն ներկայացուցիչներին՝ Ավետիք Իսահակյանի, Մարտիրոս Սարյանի, Հայկանուշ Գանիելյանի, Հովսեփ Օրբելու, Մանուկ Աբեղյանի, Նաիրի Զարյանի և ուրիշներին հետ նա ևս ստորագրեց արտասահմանյան բոլոր հայերին ուղղված նամակը, որով կոչ էր արվում «համախմբել բոլոր ուժերը Սովետական Միության պաշտպանության, համայն մարդկության նենդու վտանգավոր թշնամու՝ ֆաշիզմի ոչնչացման համար»<sup>1</sup>:

Կոնստանդին Սարաջևը առանց ուժերը խնայելու շարունակում էր դեկավարել կլասիկների, սովետական կոմպոզիտորների երկերի նվագախումբային կատարումը: Նա հափշտակուժյամբ սերտում ու կատարում էր երկրի պաշտպանության թեմային նվիրված հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ գործերը:

Պատերազմի տարիներին Մոսկվայից Անդրկովկասյան ռեսպուբլիկաները էվակուացվեցին սովետական երաժշտության ականավոր գործիչ-

<sup>1</sup> «Արտասահմանյան երկրների բոլոր հայերին». «Պրավդա», 17 օգոստոսի, 1941:

ներ: Թբիլիսիում էին գտնվում Ն. Մյասկովսկին, Ս. Պրոկոֆևը, Կ. Իգումնովը, Կ. էրզելին: Այդ խստաշունչ տարիներին դարձյալ հանդիպեց ու բարեկամական տեսակցություններ ունեցավ նրանց հետ Սարաջևը: Նրա հրավերով Կ. Ն. Իգումնովը ստանձնեց հատուկ դաշնամուրի դասարանի վարումը Երևանի կոնսերվատորիայում, Կ. Ա. էրզելին՝ տավրդի դասարանը, որը և վաղեց մինչև պատերազմի վերջանալը:

1943 թվականին Երևանում հնչեց Գ. Շոտակովիչի Յոթերորդ սիմֆոնիան, որը հիացմունքով քնդունեց նաև Սարաջևը:

Շեշտելով այդ ստեղծագործության գաղափարագեղարվեստական մեծ նշանակությունը՝ Սարաջևը գրում էր, որ դրա մեջ փիլիսոփայական խոր մարմնավորում են գտել սովետական ամբողջ ժողովրդի մտքերն ու ապրումները, հոգեկան արիությունն ու աննկունությունը թշնամու դեմ մղվող պայքարում<sup>1</sup>:

Նույն իմաստը նշեց նա նաև Ն. Մյասկովսկու 22-րդ սիմֆոնիայում:

1944 թվականի հունվարին Մոսկվայում տեղի ունեցավ հայ երաժշտական արվեստի ցուցադրումը, իսկ դեկտեմբերին՝ Անդրկովկասյան ռեսպուբլիկաների երաժշտության տասնօրյակը Թբիլիսիում: Այդ միջոցառումները նպատակ

<sup>1</sup> Կ. Ա. Սարաջև, Երկտող, անտիպ, ԵԿԿԹ:



Զակից աջ. Ռ. Անդրխաչյան, Կ. Սարաչյան, Գ. Սարաչյան  
և Կ. Իգումնով:



Ա. Մարտիկյանը կը աշխատէր իր ընկերակիցներու հետ:

ունեին ամբողջ աշխարհին ցույց տալու Սովետական Անդրկովկասի ժողովուրդների հոգեկան արիությունը, սովետական երաժշտության վեհ հայրենասիրությունը, նրա արվեստագետների համերաշխությունը ֆաշիզմի դեմ մղվող ընդհանուր պայքարում: Եվ այդ համերգների ակտիվ կազմակերպիչներից ու մասնակիցներից մեկը Սարաջեն էր:

1936 թվականից մինչև իր կյանքի վերջը (միայն երկու տարվա ընդմիջմամբ՝ 1938—1939), Սարաջենը ղեկավարեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան որպես դիրեկտոր, միաժամանակ և նվագախմբի, օպերային ու դիրիժորական դասարանների դասատու:

Իր ընդարձակ գիտելիքներն ու ուժը, հսկայական փորձը, անսպառ ու անդուլ եռանդը ներգրեց նա իրեն վստահված Կոնսերվատորիայի զարգացման գործում՝ ջանալով այդ համեմատաբար երիտասարդ ուսումնական հաստատությունը դարձնել ուսպուրլիկայի ճշմարտապես կուլտուրական օջախներից մեկը: Նա աշակուրջ հետևում էր ուսումնական պրոցեսի բոլոր մանրամասնություններին: Նրան միշտ կարելի էր տեսնել ուսանողների բաց ու փակ համերգներում, քննություններին, գեղարվեստական խորհրդի նիստերում: Մեծապես հետաքրքրվելով ուսանողների պատրաստման որակով՝ նա շարունակ ներկա էր լինում տարբեր դասատուների պարապմունքներին: Իր

ընդարձակ գիտելիքների, մեծ էրուզիցիայի շնորհիվ, որոնք առատաձեռն բաշխում էր ամենքին, Սարաջևը մեծ հեղինակություն ու սեր էր վայելում իր արվեստակիցների և ուսանողության շրջանում:

Սարաջևը համառությամբ կոնսերվատորիայում դասավանդելու էր հրավիրում ոչ միայն Հայաստանի, այլև Մոսկվայի ու Լենինգրադի բարձրորակ երաժիշտներին: Նոտաների իր ճոխ ու արժեքավոր գրադարանը նա նվիրեց Երևանի կոնսերվատորիայի գրադարանին:

Սարաջևի դիրեկտորության շրջանում մեր կոնսերվատորիան մեծ հաջողությունների հասավ երաժշտական կազրեր պատրաստելու գործում: Նրա սաները հաջողությամբ աշխատում են այժմ երաժշտական հիմնարկություններում, ուսումնական հաստատություններում, օպերային թատրոնում և Հայֆիլհարմոնիայում, ոմանք էլ շարունակեցին իրենց կրթությունը Մոսկվայի ու Լենինգրադի ասպիրանտուրաներում, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտում: Երևանի կոնսերվատորիայի սաները լավ գրսևորեցին իրենց համամիութենական, միջազգային կոնկուրսներում ու ֆեստիվալներում:

«Նա ղեկավարում էր Երևանի կոնսերվատորիան ստեղծագործաբար ու ոգեշնչված, — գրում է Ա. Խաչատրյանը: — Մեծ ու արժանի հեղինակություն վայելելով, ընդարձակ գիտելիքների տեր, միշտ զգոն, թափթփվածության ու անկուտուրա-

կանութեան նկատմամբ անողորք, ինքն իսկ լինելով բարձր արվեստին անվերապահորեն ծառայելու օրինակ՝ Կ. Ս. Սարաջեք հենց միայն իր ներկայութեամբ ստեղծագործական մթնոլորտ էր ստեղծում կոնսերվատորիայում»:

Սարաջեքի դիրիժյորական դասարանը Երևանի կոնսերվատորիայում, ինչպես և առաջ նրա նույն դասարանը Մոսկվայի կոնսերվատորիայում, ըստ արժանվույն համարվում էր Սովետական Միության լավագույններից մեկը: Ուշագրութեամբ ու սիրով էր Սարաջեք աճեցնում դիրիժյորական դասլար ընձյուղները: Նրա դասարանից դուրս եկած դիրիժյորները հաջողութեամբ ինքնուրույն աշխատանք են կատարում օպերային թատրոններում ու սիմֆոնիկ նվագախմբերում: Նրանցից են Ռ. Ստեփանյանը, Ա. Սաթյանը, Գ. Վարժապետյանը, Գ. Կարապետյանը, Ա. Եղիազարյանը, Ռ. Սարգսյանը, Հ. Ոսկանյանը, Է. Մանուչարյանը, Գ. Հարությունյանը, Ա. Կոպիլովը, Յու. Դավթյանը, Ա. Քաթանյանը, Գ. Լորիկյանը, Ս. Ղազարյանը և ուրիշներ:

«Կոնստանդին Սոլոմոնովիչը դիրիժյորական պարապմունքների ժամանակ ուսանողներից պահանջում էր նախ և առաջ ճիշտ ու ինքնուրույն կերպով բացահայտել ստեղծագործության մեջ հեղինակի ներդրած գաղափարը, ներարկում էր կատարվող գործի ոճին խորամուխ լինելու ունակութուն և մանավանդ խստութեամբ հետևում էր ու-

սանողի մեջ լավ, ազնիվ ճաշակ դաստիարակե-  
լուն:

Դիրիժյորական տեխնիկայի պարապմունքների ժամանակ Կոնստանդին Սոլոմոնովիչը ձգտում էր հասնել ժեստի հատակության, որոշակիության ու արտահայտչության, նվագախմբի առանձին զոր-  
ծիքների ու խմբերի ճիշտ ու ժամանակին սկսե-  
լուն, հռանդուն «աուֆտակտին» և այլն. սակայն  
ըստ այդմ նա ջանում էր երևան բերել ուսանողի  
անհատական հատկությունները և հնարավորու-  
թյուն էր տալիս նրան դիրիժյորելու իր «ուրույնու-  
թյամբ»: Դիրիժյորելու մաների ամբողջ զանաչա-  
նությամբ հանդերձ Կոնստանդին Սոլոմոնովիչի  
«սաների» մեծ մասի մոտ միշտ զգացվում էր դի-  
րիժյորական դպրոցի ինչ-որ միասնություն, որը  
արտահայտվում էր արտաքին ցուցամոլություն,  
կեցվածք ընդունելու և այլ էժանագին էֆեկտների  
բացակայությամբ: Ինքը՝ Կոնստանդին Սոլոմոնով-  
իչը, պուլտի մոտ կանգնում էր շափազանց հա-  
մեստ ու զուսպ՝ շնայած լայնաթափ ժեստին: Նրա  
ձեռքերի արտահայտչությունը միշտ հնարավորու-  
թյուն էր տալիս նրան իր մտադրությունները  
հասցնելու նվագողներին<sup>1</sup>:

Թեև Սարաջևը հազվագյուտ էր խոսում դիրի-  
ժյորական արվեստը դասավանդելու մեթոդիկա-

---

1 Խ. Մեկիանյան, Հուշեր իմ սիրելի ուսուցչի մասին,  
1959 թ., (ձեռագիր):

յի վերաբերյալ իր հայացքների մասին, բայց և  
աշնպես նա այս տեսակետից ունեւր մանկավար-  
ժական հստակ ու նպատակասլաց սիստեմ: Դրա  
մասին պատկերացում է տալիս Բ. Խաչկիւնիւն  
գրած նրա խիստ հետաքրքրական նամակը: Իր եր-  
բեմնի աշակերտ, բայց արդեն Լենինգրադի կոն-  
սերվատորիայի պրոֆեսոր ու դիրիժորական դա-  
սարանի ղեկավար գարձած Բ. Խաչկիւնիւն Սարաջևը  
իր գրած նամակում արտահայտում է երիտասարդ  
դիրիժորներ դաստիարակելու վերաբերյալ սե-  
փական հայացքները, դիրիժորական արվեստի  
նկատմամբ ունեցած իր պահանջները: Սարաջևի  
կարծիքով դիրիժոր պատրաստելու, բոլոր ան-  
հրաժեշտ դիսցիպլիններն ու ռեպերտուարն անց-  
նելու և գործնական անհրաժեշտ ունակություննե-  
րը ձեռք բերելու համար 5-ամյա ուսումնառու-  
թյունը քիչ է. անհրաժեշտ է առնվազը 7-ամյա  
ժամանակաշրջան: Նա շեշտում է, որ կոնսերվա-  
տորիան ավարտած դիրիժորը ռադիոյում կամ  
ֆիլհարմոնիայում աշխատելիս «...պարտավոր է  
հանդես գալ տարբեր ոճի մեծաքանակ ստեղծա-  
գործությունների կատարմամբ. պարտավոր է կա-  
տարելպես զինված հանդես գալ նվագախմբի  
մասսայի առաջ, պատրաստ լինել լիարժեք պա-  
տասխան տալու տրված ամեն մի երաժշտական  
հարցումին, որպեսզի իր հեղինակությունը պահի  
արժանի բարձրության վրա ոչ թե վարչական, այլ  
ուրիշ միջոցներով՝ գրականություն, թե ընդհանուր

և թե երաժշտության պատմությունն իմանալով: Դիրիժյորը ինչպես հարկն է պարտավոր է իմանալ երաժշտական ձևերի բոլոր տեսակները, իմանալ արվեստների պատմությունը, տերմինոլոգիան...»:

Ինչպես արդեն ասել ենք, Սարաջևը հատուկ նշանակություն էր տալիս լավ կազմակերպված պրակտիկային, ըստ որում նա պարտադիր էր համարում, «...որ այդ պրակտիկան ունենա ոչ պատահական բնույթ, որ ուսանողը դիրիժյորական նոտակալի առջև հանդես գա մանկավարժի հետ պարտիտուրան թե՛ տեխնիկապես, թե՛ երաժշտապես խիստ մանրակրկիտ կերպով մշակելուց հետո, որ հենց այնպես ձեռքի թափահարում չլինի, ո՛չ էլ օրկեստրի «ինքնահոս» նվագում, ինչպես հաճախ լինում է բազմաթիվ իսկական դիրիժյորների հետ:

Ես սկզբունքորեն մասնագետ-պրոֆեսիոնալ դիրիժյորի միակ ճիշտ մոտեցումը համարում եմ հետևյալը: Դիրիժյորի համար նվագախումբը պետք է լինի մի կենդանի գործիք, ինչպես դաշնամուրը դաշնակահարի, ջութակը ջութակահարի ձեռքին: Անհրաժեշտ է, որ բոլոր գործիքները կատարման ընթացքում լիովին ենթարկվեն դիրիժյորին, որ կատարող դիրիժյորի ներքին ապրումները համարյա հիպնոսաբար հաղորդվեն ամբողջ նվագախմբին միասնաբար և յուրաքանչյուր երաժշտին անհատապես: Դրա համար շափազանց կարևոր են երկու հանգամանք. նախ և առաջ դի-

րիժյոբը պետք է միանգամայն կոնկրետ կերպով  
իմանա յուրաքանչյուր գործիքի դերը պարտիտու-  
րի մեջ, իմանա նրա պարտիայի բոլոր սելիեֆնե-  
րը, իմանա նրա մասնակցութեան աստիճանը կա-  
տարվող ստեղծագործութեան ընդհանուր հնչեղու-  
թեան մեջ, օրգանական ու դինամիկ կապը և նրա  
մասնակցութեան նշանակալիութեանը ամբողջի  
կատարման մեջ. սա մեկ. երկրորդ՝ անհրաժեշտ  
է, որ ամեն մի երաժիշտ թե՛ նվագելու, թե՛ դա-  
դարի պահին ուշքը շեղի կատարման ընդհանուր  
գծից, ո՛չ մի դեպքում դադարի ժամանակ շխտի:  
Այս ամենին պետք է հետևի դիրիժյոբը, հետևի  
մեծագույն խստութեամբ: Նվագախումբն էլ պետք  
է դաստիարակված լինի հենց այս պլանով: Այս  
բոլոր պայմանները անհրաժեշտ են դիրիժյոբու-  
թեան համար, երբ ղեկավարը ուզում է ունենալ  
հիրավի գեղարվեստական կատարում, եթե ուզում  
է, որ կատարման ընթացքում լինեն իսկական ըս-  
տեղծագործութեան մոմենտներ, ինչպես հասնում  
են դրան արվեստագետ դաշնակահարները, ջու-  
թակահարները, թավջութակահարները, երգիչները  
և այլն: Ահա, Բորի՛ս էմանուիլովիչ, իմ դիրիժյո-  
բական հավատամքը, և ես կարծում եմ, թե իրա-  
վացի եմ...»<sup>1</sup>:

Կոնստանդին Սարաջևը այս բոլոր պահանջները

<sup>1</sup> Սարաջևի նամակը Բ. Խայկինին (մարտի 14, 1956):  
Պահվում է Զ. Բ. Սարաջևայի մոտ:

համառորեն ու հետևողականորեն կիրառում էր կյանքում ու դասարանում՝ երիտասարդ դիրիժյորներին ուսուցանելիս և նվագախմբի հետ անձամբ փորձեր անելիս: Նա խիստ էր, պահանջկոտ. բայց միշտ որոշակի գիտեր, թե ինչ էր ուզում նվագողներից: Նրա ամեն մի կանգառումը, յուրաքանչյուր կրկնողութունը որոշակի անհրաժեշտության հետևանք էր: Սարաջևի ժեստը հստակ էր, որոշ, լակոնական, մի փոքր խիստ: Դրա մեջ արտահայտվում էր դիրիժյորի կատարողական մտահղացումը: Ձեռքերի, ամբողջ մարմնի պլաստիկան միշտ կապ ուներ երաժշտության այս կամ այն հատվածի մեկնաբանման, նրա բնույթի հետ: Սարաջևի արտահայտիչ ձեռքերը ասես նրա գեղարվեստական մտքի առաջատարը լինեին: Նա տիրապետում էր յուրաքանչյուր ձեռքի կատարյալ աղատությանն ու ինքնուրույն արտահայտչությանը, երկու ձեռքերի «կոնտրապունկտի» գաղտնիքին: Սակայն նվագախմբի վրա ներգործելու, իր ստեղծագործական կատարողական կամքը նրան հաղորդելու գլխավոր միջոցներից մեկը նրա աչքերն էին: Այդ աշխույժ, միշտ հրացայտ, հաճախ ժշտատուն աչքերը խոսքից ու ժեստից ավելի լավ էին արտահայտում դիրիժյորի մտադրութունները: Սարաջևի այդ սուր, խելացի, արտակարգ արտահայտիչ հայացքը, որ հիշում են նրա հետ հարաբերած բոլոր անձինք, նոտակալի առջև վերածվում էր կատարողական ուժեղ միջոցի:

Սարաջևի փորձերը ամեն անգամ անցնում էին խիստ արդյունավետ թե՛ դիրիժյորի կատարողական մտադրությունների հստակության (և՛ ամբողջի, և՛ մասնակիությունների նկատմամբ), նվագողներին ներկայացված պահանջների յրոշակիության շնորհիվ, թե՛ մեծ հեղինակության, խստության ու անհատական կարգապահության և թե՛ որևէ սրամիտ պատմությանմբ երբեմն նվագախմբին անհրաժեշտ դադար տալ կարողանալու շնորհիվ: Սարաջևը միշտ կարողունակ էր, փորձի էր գալիս հիանալի ու բազմակողմանի նախապատրաստված. յուրաքանչյուր պարտիտուրի բոլոր դժվարին տեղերը, կատարողական «խոցերը» դիտեր և խելացիորեն օգնում էր հաղթահարելու դրանք: Մա քաջ դիտեր ամեն մի գործիքի, մանավանդ լարային գործիքների, առանձնահատկությունները և անհրաժեշտ ցուցումներ էր տալիս նվագողներին՝ ընդհուպ մինչև հարմար մատնագրությունը: Հայտնի է, որ Սարաջևը փորձերի ժամանակ կարող էր իր ձայնով ուզած գործիքին մանակերպությունն անել, որի համար հրաժիշտները կատակով «Սարաջևֆոն» էին անվանում նրան: Շատ լավ հայտնի էին նրան յուրաքանչյուր երկի կատարման տրադիցիաները. սակայն նա կուրորեն չէր հետևում դրանց, այլ հենվելով նրանց՝ մեկնաբանման մեջ մտցնում էր իր սեփական միտքը, անհատական յուրօրինակ, հետաքրքրական ու համոզիչ ուրույնությունը:

Որպես դիրիժյոր Կ. Սարաջևը կատաղի հակա-  
 աակորդ էր «հանդիսատեսի համար» նկատի առ-  
 նըված, արտաքին էֆեկտ հետապնդող ժեստերի,  
 կեցվածքի: Նրա ժեստը ժլատ էր, բայց արտա-  
 հայտիչ ու բազմազան: Հիշում եմ, օրինակ, Բեթ-  
 հովենի սիմֆոնիաները, մանավանդ «Հերոսական»  
 ու Հինգերորդ սիմֆոնիաները ղեկավարելու նրա  
 մաները. տիրական, առնական թափահարում,  
 կտրուկ, ուժեղ ու լակոնական շարժումներ, հպարտ,  
 կենտրոնացած հայացք: Պուլտի առջև Սարաջևը  
 երբեք «իր հավասարակշռությունը չէր կորցնում»  
 չէր «մոլեգնում», ինչպես սիրում են անել որոշ  
 դիրիժյորներ. նվագագույն միջոցներով նա հաս-  
 նում էր զարմանալի էֆեկտի: Ավելի շուտ նա դա-  
 րական խստության: ու զսպվածության կողմնա-  
 կից էր, թեև կարողանում էր անհրաժեշտ տեղե-  
 րում նվագախմբից ստանալ հսկայական դրամա-  
 տիկ ուժի հնչեղություն, մեծ, դինամիկ աճ, էմո-  
 ցիոնալ, կուլմինացիաներ:

Այլ էր նա, երբ ռոմանտիկների երկերն էր ղե-  
 կավարում. այդ դեպքում նրա ժեստը մեղմություն  
 էր ստանում. ձեռքն ասես օդում նկարում էր մե-  
 ղեղու պլաստիկ գիծը, նշում տրամադրություննե-  
 րի ամենանուրբ երանգները, կոլորիտի փոփոխու-  
 թյունները: Այդ դեպքերում նվագախմբի հնչեղու-  
 թյունը ստանում էր մի առանձնահատուկ բանա-  
 ստեղծականություն, «քնքշություն», լիրիկական  
 ջերմություն: Բայց Սարաջևը արվեստի մեջ երբեք

չէր անցնում վեհ զգացմունքների այն դրամատիկ սահմանը, որից դենը սկսվում է սենտիմենտալություն և մերկ զգայականություն: Այսպես էր նա Շուբերտի, Շումանի ստեղծագործությունները դեկավարելիս: Նա կարողանում էր վերաբրտադրել կենտրոնացած մտորումների, հոգեբանական խոր ապրումների, հոգեկան դրամաների երաժշտությունը, արտահայտել զգացումների ու տրամադրությունների այն անվախճան գամման, որ այրունակում են Չայկովսկու հանճարեղ պարտիտուրաները և հատկապես նրա՝ Սարաջևի, նախաաիրած Հինգերորդ և Վեցերորդ սիմֆոնիաները:

Որքա՛ն լույս, շլացուցիչ շողշողացող գույներ էին ժայթքում նվագախմբից, երբ Սարաջևը դեկավարում էր Ռիմսկի-Կորսակովի, Բեռլիոզի, Դեբյուսիի, Ռավելի սիմֆոնիկ ստեղծագործությունները: Եվ դարձյալ տաքարյուն, հումորով ու զվարթությամբ լի էինք մենք տեսնում նրան, երբ նա ղեկավարում էր Հայդնի, Ռոսսինիի գործերը:

Շատ հաճախ ու հաճությամբ էր Սարաջևը ղեկավարում սովետական կոմպոզիտորների ըստեղծագործությունները՝ այստեղ ևս երևան բերելով ստեղծագործական վերամարմնավորման իր վարպետությունը: Մեծ խորությամբ, լարված դրամատիզմով էր համակված Մյասկովսկու, Շոստակովիչի սիմֆոնիաների նրա կատարումը: Սարաջևը սիրում էր ունկնդրին հասցնել այդ վարպետ-

ների պոլիֆոնիայի արտահայտչությունը: Հաջող էր ստացվում մանավանդ կրկնակի կանոնը՝ դրամատիկական կուլմինացիան Շոստակովիչի Հինգերորդ սիմֆոնիայի առաջին մասի մշակման մեջ և պոլիֆոնիկ բարդ հյուսումները Մյասկովսկու սիմֆոնիաներում:

Իսկ Պրոկոֆևի գործերը կատարելիս Սարաջևը երևան էր բերում այլ գծեր, ինչ-որ առանձնահատուկ թեթևություն, սլացիկություն, շարաճճիություն: Հավասարապես լավ էին ստացվում Պրոկոֆևի թե՛ յուրահատուկ լիրիկան, թե՛ նրա սկերցոնների դինամիկան:

Հայ սիմֆոնիկ երաժշտությունը հանձին Կոնստանդին Սարաջևի ուներ մի խորազգաց ու լուրջ կատարող: Ինչպես արդեն ասել ենք, նա ղեկավարել է բազմաթիվ հայ կոմպոզիտորների՝ Ա. Սպենդիարյանի, Ն. Տիգրանյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Ստեփանյանի, Կ. Զաքարյանի, Ա. Հարությունյանի, Ա. Բաբաջանյանի, է. Միրզոյանի և ուրիշների ստեղծագործությունները՝ նպաստելով դրանց մասսայականացմանը: Նրանց գործերը կատարելիս Սարաջևը վերարտադրում էր և՛ հայ երաժշտության ընդհանուր կոլորիտը, և՛ յուրաքանչյուր ստեղծագործությանը հատուկ անհատական գծերը:

Ուզում ենք նշել Սարաջևի դիրիժյորական մեթոդի ևս երկու-երեք առանձնահատկությունները: Փորձերին նա տվյալ ստեղծագործությունն անց-

նում էր նախ մաս առ մաս, առանձին խմբերի  
հետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առանձին  
նվազողների հետ, կանգ առնելով ֆրազները, տար-  
բեր մանրամասների, դժվար հատվածների վրա,  
օգնելով գտնել կատարողական անհրաժեշտ պրիո-  
մը, շտրիխը: Դրանից հետո միայն, փորձերի երկ-  
րորդ փուլում, նա ձգտում էր ի մի բերել ամբողջը,  
հասնել անսամբլի, միաձուլյ հնչեղության, ընդ-  
հանուր դինամիկայի, հենակետերի, կուլմինա-  
ցիաների, վայրէջքների ու վերելքների բաժանմա-  
նը, ամբողջական ձևին, ամեն ինչ ստեղծագործու-  
թյան բովանդակության, մտահղացման բացա-  
հայտմանը ենթարկելուն: Իսկ համերգի ժամանակ  
Սարաջևը պարտիտուրի մանրամասներից, մաս-  
նակի կողմերից «վեր էր բարձրանում» և ղեկավա-  
րում այսպես ասած «խոշոր շտրիխի» մեթոդով:  
Այդ պահին արդեն նա ոչ մի վայրկյան չէր տն-  
ջատվում երաժշտությունից, նրա կերպարային  
ոլորտից, «ինտոնացիոն դրամատուրգիայից»: Դա  
զգացվում էր մանավանդ դադարներում, որոնց նա  
կարողանում էր տալ ինչ-որ առանձնապես «հըն-  
չող» արտահայտչություն, կամ այն տեղերում, երբ  
նա հանկարծ դադարում էր ղեկավարել և նվա-  
զախմբին ուղղություն էր տալիս միայն աչքերի  
հայացքով ու դեմքի միմիկայով: Նա կարողանում  
էր հնչեղության լարված աճման հասնել՝ զսպված,  
հազիվ լսելի պիանիսիմոյից սկսած մինչև խոշոր  
կրեչչենդոն ու ֆորտիսիմոն, բյուրեղանման վճիտ,

Թափանցիկ հնչումից մինչև գուլների՝ ու խիստ ուժեղ տուտոինների «խիտ հյուսված» միախառնումը: Պարտիտուրի ո՛չ մի ձայն հանդես չէր գալիս առանց դիրիժյորի ղեկավարութեան ու վերահսկութեան: Մեծ ուշադրություն էր նա դարձնում նրբերանգները վերարտադրելուն:

Մեծ փորձ ունեւ Սարաջևը նաև որպէս օպերային դիրիժյոր: Նա մանրակրկիտ կերպով պարտիաները մշակում էր մեկնատատարների հետ ու հասնում խնտոնացիայի բացառիկ մաքրութեան, կատարման պատկերափոր արտահայտչութեան: Կինելով սովորութամոլութեան, շտամպները, տափակութեան ու դափառականութեան անհաշտ հակառակորդը՝ նա օպերայի խնտոնացիոն ոլորտը մաքրում էր օտարոտի նստվածքներից, անտեղի կրճատումներից և ջանում մոտեցնել դա հեղինակի իսկական մտահղացմանը: Սա առանց դժվարությունների ձեռք չէր բերվում, հաճախ էլ դիմադրութեան էր հանդիպում: Սարաջևին հրբեմն կըշտամբում էին ավելորդ ակագեմիզմի և նույնիսկ դիրիժյորական թելադրանք սիրող պեղանտիզմի համար: Բայց նա անսասան ու անդիշում ընթանում էր դեպի իր նպատակը և անկասկած մեծ դեր կատարեց հայկական օպերայում պրոֆեսիոնալիզմը բարձրացնելու, նրան դասական լավագույն տրագիցիաներին հաղորդակից դարձնելու գործում:

Սարաջևը մեծ ուշադրություն էր դարձնում և ա-

հազին ժամանակ հատկացնում անսամբլներին, երգչախմբի ու օրկեստրի հետ աշխատելուն: Նա ձգտում էր հասնել այն բանին, որ երաժշտական թատրոնում իսկապես համադրվեն արտահայտչական միջոցները, դրա հետ միասին միշտ ընդգծելով երաժշտության տիրապետող, գերիշխող դերը: Այստեղ դրսևորվում էր այն հակայական փորձը, որ կուտակել էր նա երաժշտական տարբեր թատրոններում և ամենատարբեր ռեժիսյորներին ու կատարողներին հետ աշխատելու պրոցեսում:

Աշխուժությամբ էր Սարաջևը արձագանքում մեր իրականության բազմապիսի երևույթներին, անուշադիր շէր անցնում ժամանակակից երաժշտական կյանքի որևէ բնագավառի կողքով: Կոնստանդին Սարաջևին անձամբ ճանաչող ամեն ոք ընդմիշտ կհիշի, թե որքան կրքոտ կերպով էր նա հետաքրքրվում այն ամենով, ինչ վերաբերում էր նրա ժրջտությանը: Բառի բուն առումով նա դրանով էր ապրում ու շնչում, ըստ որում նրա համար երաժրջտությունը մշտապես կապված էր կյանքին, կյանքի անբախտելի ու սքանչելի կողմերից մեկն էր: Այդ մասին կարելի է պատկերացում կազմել մանավանդ ծանոթանալով նրա արխիվում եղած նամակներին, հուշերին, հոդվածներին, տարբեր ուրվագծերին և այլն: Այդտեղ կան և՛ հոդվածների ու ելույթների ուրվագրեր, և՛ զանազան դիտողություններ կոմպոզիտորներ ՄՄյասկովսկու, Պրոկոֆևի, Շոստակովիչի, Խաչատրյանի, Շապորինի

Ստաբիլիտետի մրցանակով պարգևատրելու առթիվ,  
և՛ Ալ. Սպենդիարյանի երկերի ակադեմիական  
հրատարակության I հատորի լույս տեսնելու  
առթիվ (ի դեպ՝ Կ. Սարաջևը այդ հրատարակու-  
թյան խմբագրական կոլեգիայի անդամ էր), և՛  
Ն. Պեյկոյի նամակը, որով սա խորհուրդներ էր  
խնդրում Ն. Մյասկովսկու ընտիր երկերի ժողո-  
վածուն պատրաստելու կապակցությամբ, և՛  
Երևանի կոնսերվատորիայի շրջանավարտներին  
ուղղված ճառ, և՛ «Նարինե» բալետն ավարտած  
Ս. Բարխուդարյանին գրված նամակը: Այդտեղ  
կան բարեկամներին, պաշտոնակիցներին, աշա-  
կերտներին գրված բազմաթիվ նամակներ, հրա-  
տարակչությունների, համերգային հիմնարկու-  
թյունների, թանգարանների ու գրադարանների  
հետ ունեցած գրագրություն, ելույթներ ամբիոն-  
ների ու գեղարվեստական խորհրդի նիստերում:  
Ինչպես արդեն ասել ենք, այս ամբողջ նյութն  
սպասում է իր հատուկ ուսումնասիրությանն ու  
հրատարակությանը:

Կ. Սարաջևը հաճախ էր հոգևածներ գրում ու  
զեկուցումներ կարդում երաժշտական արվեստի  
տարբեր հարցերի մասին, ինչպես՝ զեկուցում  
Պ. Ի. Չայկովսկու ծննդյան 100-ամյակի առթիվ,  
Վ. Ղորղանյանի «Չայկովսկին Կովկասում» գրքի  
նախաբանը (Երևան, Հայպետհրատ, 1940, Կ.  
Սարաջևի խմբագրությամբ), հոգևածներ Երևանի  
կոնսերվատորիայի, Հայաստանի երաժշտական

արվեստի պատմական զարգացման մասին, բազմաթիվ ոեցենդիաներ և այլն:

Կյանքը ազահաբար սիրող, ճշմարտության, լույսի ու առաջադիմության հաղթանակին հավատացող Սարաջևը իր հողվածներում ու զեկուցումներում ևս միշտ լավատես էր, հաստատում էր հավատ ապագայի նկատմամբ: Օրինակ՝ Չայկովսկու մատին տված իր զեկուցման մեջ նա շեշտում էր մեծ կոմպոզիտորի երաժշտության կենսահաստատ սկզբունքը, ասում էր, որ «Պ. Ի. Չայկովսկին իր ժամանակի զավակն էր և իր դարաշրջանի սիրեցյալը (այդպիսին էր նաև Չելսովը), բայց նախորդ դարաշրջանների ամեն մի հանճարեղ արվեստագետի նման նա ապագայի մարդ էր, ապրում ու տեղծագործում էր այդ ապագայի համար»: Հիացմունքով էր Սարաջևը գրում սովետական տաղանդավոր կոմպոզիտորների՝ Մյասկովսկու, Պրոկոֆևի, Շոստակովիչի, Խաչատրյանի, Շապորինի մասին, նրանց ստեղծագործության մեջ տեսնելով Սովետական Միության առաջավոր կուլտուրայի ծաղկման մարմնացումը:

Սարաջևը երաժշտական արվեստը մշտապես դիտում էր որպես իրականությունը պատկերավոր արտահայտելու մի յուրօրինակ ձև: Նա հասկանում էր երաժշտության հսկայական «դաստիարակչական, ազնվացնող» դերը, նրա վիթխարի ներգործությունը հասարակության լայն խավերի վրա:

Երաժշտության բոլոր բնագավառներից ամենաբարձրը նա համարում էր օպերային և մանավանդ սիմֆոնիկ երաժշտությունը: «Սիմֆոնիկ երաժշտությունը երաժշտական արվեստի ամենակատարյալ, ամենաբարձր բնագավառն է»<sup>1</sup>:

Անհաշտ էր Կ. Սարաջևը արվեստում ամեն տեսակ դիլետանտիզմ ու ազգային սահմանափակություն դրսևորելու նկատմամբ: Այդպիսի երևույթներ նկատելիս նա դառնում էր խիստ, խայթող: Իսկ երբ որևէ մեկի մեջ տեսնում էր կոպտություն, անկուլտուրականություն, պարծենկոտության, և էգոիզմի գծեր, ծաղրում ու մերկացնում էր դրանք բացառիկ սրամտությամբ:

Կոնստանդին Սարաջևի ծառայությունները բարձր գնահատեցին պարտիան ու կառավարությունը: Ինչպես արդեն ասել ենք, նա մեկն էր այն երաժիշտներից, որոնց ունեցուցիչի առաջին տարիներին Աշխատանքի Հերոսի կոչում շնորհվեց: Հետագայում՝ 1939 թվականին, նա արժանացավ Հայկական ՍՍՌ Արվեստի վաստակավոր գործչի, իսկ 1945 թվականին՝ Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստի կոչման, ինչպես նաև Լենինի, Աշխատանքային Կարմիր Դրոշի, Պատվո Նշան շքանշանների ու մեդալների:

1948 թվականին Կ. Սարաջևը ընտրվեց Երե-

---

<sup>1</sup> Կ. Սարաջև, Դիտողություններ սիմֆոնիկ երաժշտության մասին: Սևագիր ձեռագրից (ԵԿԿԹ, Սարաջևի արխիվ):

վանի Աշխատավորների քաղաքային սովետի դեպուտատ:

1953 թվականի փետրվարի 21-ին հանդիսավոր կերպով տոնվեց Սարաջևի ծննդյան 75-ամյակը: Հորեկյարի հասցեին ստացվեցին բազմաթիվ ուղերձներ, նամակներ, հեռագրեր՝ տարբեր հաստատություններից, արվեստակիցներից ու բարեկամներից:

«Ջերմորեն, ամբողջ հոգով շնորհավորում եմ հիանալի դիրիժյորին ու սիրելի բարեկամին: Ցանկանում եմ քաջառողջություն, երկար կյանք, ըստեղծագործական հրճվանքներ: Ամուր ողջագործում եմ», — հեռագրել էր Սերգեյ Պրոկոֆևը<sup>1</sup>:

---

1 Ի պատասխան Պրոկոֆևի հեռագրին՝ Սարաջևը գրեց մի ջերմաշունչ նամակ, շատ փաստեր հիշելով իրենց երբեմնի հանդիպումներից: Հետաքրքրությունից զուրկ չէ մի քանի հատված բերել դրանից. «Թանկազի՛ն Սերգեյ Սերգեևիչ, Դուք շատ ուրախացրիք ինձ Ձեր ջերմ ողջույնով, որը արտասովոր աստիճան հուզեց ինձ, վերածնեց հին, հրճվալի հիշողություններ, և աչքերիս առաջ հառնեցին սկզբնավորման օրերը մեր առաջին հանդիպումից, երբ Դուք Պետերբուրգից եկաք լսելու Սկրյաբինի «Poeme Divine» սիմֆոնիան ու անմոռանալի Նիկոլայ Յակովլևիչի (Մյասկովսկու, Գ. Տ.) «Լուսթյունը»: Հիշում եմ նաև Ձեր «Երազներ»-ի առաջին կատարումը: Ընդհանրապես լավ հիշում եմ իմ բոլոր ելույթները Ձեր ստեղծագործությունների կատարումով՝ և՛ «Կլասիկ սիմֆոնիան», և՛ «Սկյութական սյուիտը», և՛ «Երեք նարինջների» սյուիտը ու «Հրեղեն հրեշտակը», և՛ սիմֆոնիետիկան, և՛ III դաշնամուրային կոնցերտը Ձեզ հետ միասին, Ջուսակի կոնցերտը ու

«Քանկագին Կոնստանդին Սոլոմոնովիչ, ջերմորեն ու անկեղծությամբ շնորհավորում եմ Ձեզ հիանալի հորելյանի՝ Ձեր ծննդյան յոթանասունհինգամյակի և ստեղծագործական-կատարողական բեղմնավոր գործունեության հիանամյակի առթիվ: Մենք՝ սովետական կոմպոզիտորներս, մեծապես պարտական ենք Ձեզ, տաղանդավոր, բարձր պրոֆեսիոնալ վարպետիդ, որի ներհուն ու խոր մեկնաբանությունը ստեղծագործական կյանքի կոչեց մեր երկերից շատերը: Ցանկանում եմ Ձեզ, Կոնստանդին՝ Սոլոմոնովիչ, ուրախ, ստեղծագործական ակտիվ ու բեղմնավոր կյանքի երկար տարիներ: Ձեզ հարգող Դմիտրի Շոստակովիչ»:

Իսկ մի տարի հետո՝ 1954 թ. հուլիսի 22-ին խզվեց Կոնստանդին Սարաջևի կյանքի թելը: Բազմաթիվ նամակներում, հեռագրերում, նեկրոլոգ-

---

«Հրեական ուվերտյուրը» նվագախմբային շարադրանքով: Եվ հիշում եմ, թե ինչպես միշտ էլ ապրումներ էի ունենում արդին պարտիտուրը ուսումնասիրելու ժամանակ ու կատարման րնթացքում... Առաջվա պես սրտագին սիրում եմ Ձեզ թե՛ որպես մարդու, թե՛ որպես կոմպոզիտորի և անկեղծորեն ցանկանում եմ շատ ու շատ տարիների քաջառողջ կյանք ու վրստահ եմ, որ Դուք դեռ բաղմաթիվ հրաշալի գործեր կստեղծեք ի փառս ուսական արվեստի և ի հրճվանք իսկական ստեղծագործություն սիրող բոլոր անձանց: Ամուր ողջագուրում եմ Ձեզ ու համբուրում: Ձերդ Կ. Սարաջև»: Ներկա նամակը, ինչպես և այս բոլոր նյութերը պահվում են Երաժշտական կուլտուրայի կենտրոնական թանգարանում (Մոսկվա):

ներում, կառավարական հաղորդագրութեան մէջ ու  
անհատական նամակներում նշված էին Սարաջևի  
խոշոր ծառայութեանները սովետական երաժշտա-  
կան կուլտուրայի զարգացման գործում: Սարաջևի  
հիշատակը հավերժացնելու համար նրա անունը  
տրված է Երևանի 26 Կոմիսարների շրջանի երա-  
ժրշտական յոթնամյա դպրոցին և օպերայի ու բա-  
լետի ակադեմիական թատրոնի նոտաների գրա-  
դարանին<sup>1</sup>: Երևանի կոնսերվատորիայում ամրաց-  
ված է հուշատախտակ և դրված է Սարաջևի կի-  
սանդրին:

Կոնստանդին Սարաջևը մեռավ 76 տարեկան  
հասակում՝ մինչև վերջին օրերը պահպանելով իր  
առույգութեանը, պայծառամտութեանը և այն ան-  
սպառ կենսասիրութեանը, որով աչքի էր ընկնում  
միշտ<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Սարաջևը 1944 թվականին այդ գրադարանին նվիրեց իր  
նեփական գրադարանից օպերային 44 պարտիտուր:

<sup>2</sup> Վասնճանվելուց մի քանի տարի առաջ Կոնստանդին Սա-  
րաջևը պարզապես շշմեցրեց ամենքին Երևանի կոնսերվատոր-  
իայում նոր տարվա առթիվ կազմակերպված կարնավալում:  
«... Հումորը, կատակը, դիպուկ ու սրամիտ խոսքը Կոնստան-  
դին Սոլոմոնովիչի կյանքի նախասիրած ուղեկիցներն էին:  
Անսպառ էր նրա ֆանտազիան ամեն տեսակ օջիհների հնա-  
րելիս:

Մի անգամ ուշ երեկոյան ես ֆիլհարմոնիայից վերադառ-  
նում էի Սպանդարյան փողոցով, ուր այդ ժամանակ գտնվում  
էր կոնսերվատորիան: Վառ լուսավորված դահլիճը, լուսա-

Ծանր հիւլանդ ու անկողնին գամված վիճակում անգամ նա հետաքրքրվում էր ամեն ինչով, արձագանքում հասարակական-քաղաքական ու կուլտուրական կյանքի իրադարձություններին և նույնիսկ

---

մուտներին լավու ազմուկն ու երածշտոթյան հնչյունները հիշեցրին ինձ, որ կոնսերվատորիայում դիմակահանդես կա: Մտնելով դահլիճ՝ ընկա կոնսերվատորիայի դասատուների և ուսանողների մեծաթիվ հասարակության մեջ:


Ես դեռ չէի կարողացել մի լավ նայել շուրջս, երբ մի քանի բոսյե հետո ինձ ներկայացրին մի սևազգեստ, վայելչակազմ ու դիմակավորված անծանոթուհու, որի խիստ բնական կոկետությունը չափազանց հետաքրքրեց ինձ: Ծատ շանցած երածը տախումբը նվագեց, և անծանոթուհին առաջարկեց ինձ պարել, Ես ասացի, որ պարել չգիտեմ, ուստի և անհարմար կավալեր եմ: Այդ բոսյեին կնամեծար շարժումով անծանոթուհուն մոտեցավ մի ֆրակավոր, շքեղ երիտասարդ (անշուշտ նույնպես դիմակավոր), և իրար պատշաճ այդ զույգը տարվեց վալսի պտույտով:

Հետո միայն մենք իմացանք, որ կոնստանդին Սոլովոնովիչին պարահանդեսի համար զուգելուց հետո, Զոյա Բորիսովնան նրանից ծածուկ հագել էր նրա ֆրակը ու եկել նույն տեղը: Եվ այսպիսի «անծանոթուհին» կոնստանդին Սոլովոնովիչն էր, որը չէր էլ կասկածում, թե պարում է լանթերի ֆրակավոր կավալերին՝ դեր ստանձնած իր կոռջ հետ:

Չոգեկան երիտասարդությանը համակված զարմանալի ներդաշնակությունը միաձուլել էր այդ զույգին: Մեր նկարագրած դրվագը այդ հրաշալի մարդկանց անզուսպ կենսասիրության ու հոգեկան երիտասարդության բազմաթիվ դրսևորումներից մեկն է», — գրում է Գ. Դոմբաևը («Շուշեր Կ. Ս. Սարաջևի մասին», 1959, ձեռագիր):

կատակում էր, սրախոսում, ծիծաղում իր ցավերի վրա<sup>1</sup>:

Կոնստանդին Սարաջեք վարեց եռուն, բովանդակալից ու մեծ, ամբողջովին արվեստին նվիրված կյանք: Եվ հենց այդպիսի կրակոտ, տաքարյուն, կենսասեր, միշտ նպատակամետ, գործունյա ու տաղանդավոր դիրիժյոր, կադմակերպիչ, մեծափորձ մանկավարժ և վերջապես մեծ կուլտուրա, բազմապիսի գիտելիքներ, հսկայական հմայք ու հոգեկան հիանալի հատկութուններ ունեցող մարդ մնաց նա ընդմիշտ իր բազմաթիվ աշակերտների, արվեստակիցների, բարեկամների ու նրա հետ շփում ունեցած բոլոր անձանց սրտերում ու հիշողության մեջ:



---

<sup>1</sup> Երբ բժիշկը պատվիրեց նրան արհեստական սննդառություն և ասաց, որ դրա մեջ մտնում են տարբեր մթերքներ, ինչպես նաև մի քանի կաթիլ կոնյակ, Կոնստանդին Սուլումոնովիչը դժվարությամբ, բայց այնուամենայնիվ սրախոսեց. «Դա հո իսկական կերուխում է»:

Վեռոգ Գրիգորի Տիգրանյան

Կոնստանդին Սարաջյան

Խմբագիր՝ Մ. Հ. Մուրադյան  
Նկարիչ՝ Հ. Մուրադյան  
Գեղ. խմբագիր՝ Ռ. Բեդրոսյան  
Տեխ. խմբագիր՝ Է. Ճաննապանյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Ռ. Վարդանյան

ՎՅ 07505:

Պատվեր 1103:

Տիրաժ 3000:

Հանձնված է արտագրության 24/VI—1961 թ.:

Ստորագրված է տպագրության 25/X 1961 թ.:

Թուղթ՝ 70×92<sup>1</sup>/<sub>32</sub>. Տպագր. 3,2 մամ.—պայմ. 5,5 մամ.,

հրատ. 3,4 մամ.+5 ներդիր. Գինը՝ 20 կ.:

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և  
պոլիգրաֆ արդյունաբերության զլխավոր վարչության  
№ 1 տպարան, Երևան, Ալավերդյան փ. № 65:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0036224

9.10.20 4.

